ՄՇԱԿ



Ա· ՅՈՒՆՈՒԱՐ 1896 Թ·

ՀՔԱՄԱՖԱՐ

Տ· Տ· ՄԿՐՏՉԻ Ա·

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՐԱՐԱՏ

ԿՐՕՆԱԿԱՆ – ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆՈՒԹԱՆ – ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ – ՄԱՆԿԱՎԱՐԱԿԱՆ ԱԶԳԱՑԻՆ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.

ԱՄՍԱԳԻՐ

ԹԻՒ՝ ԻԀ. ՏԱՐԻ. | ՀԱՄՐԱԲ ԱՔԱՋԴԵՑ | ՅՈՒՆՈՒԱՐ 1896 Թ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՆՈՐ ՏԱՐԻ.

Ասացէք դստեր Սիոնի, ահաւասիկ Փրկիչ քո հասեալ գայ՝ եւ ունի վարձս իւր ընդ իւր, եւ գործք իւր առաջի երեսաց իւրոց ... Մի՛ երկնչիցիս, զի յամօթ արարին զքեզ· մի՛ պատկառեսցես, զի նախատեցին զքեզ· զի զամօթն յաւիտենից մոռասցիս, եւ նախատինք այրուհեան քոյ ոչ եւս յուշ լիցին քեզ ... Առ ժամանակ մի թողի զքեզ, եւ ողորմութեամբ մեծաւ ողորմեցայց քեզ· առ փոքր մի սրտմտութեան դարձուցի զերեսս իմ ի քէն, եւ ողորմութեամբ յաւիտենից ողորմեցայց քեզ· ասաց որ փրկեացն զքեզ Տէր ... Հաշտեալ եմ ընդ քեզ տատապեալդ եւ խախտեալ, մինչեւ միխթարեսցիս ...:

Եսայի ԿԲ. 11 եւ ԾԴ. 4. 7. 8. 11:

Արդեօք դու Ե՞ս, տառապեալ ժողովուրդ, լսեցիր հաշտութեան այդ մեծ աւետիքը· հնչեց նաեւ քո՛ մէջ մխիթարութեան մի ձայն, խախտեալդ իմ տուն հայրենի ... Անաւասիկ Փրկիչ քո հասեալ գայ ... Ո՛հ, ինչո՞ւ մեր սիրտը չէ հրճուում այս ուրախական ողջոյնը լսելիս եւ մենք Յեթղեհէմի անմեղ հովիւների պէս յուսով ու բերկրութեամբ լեցուած չենք գիմում դէպի այն այրը, ուր ժամանակի եւ կեանքի միակ վերանորոգիչ՝ մանուկ Աբեգակն է Իւր ողորմութեան լոյսը սփռում· ինչո՞ւ կասկածը կնքել է մեր շրթունքները եւ հաւատոյ առատաբուղխ սրտներգներով հոգւոյ հանգիստ մենք չենք կարող, թէ հասաւ արդարև փրկութեան ժամը, նախատինք ու թշուառութիւն պիտի վերանան եւ Միածնաշէն Սիոնի այրիացեալ ու սգա-

ւոր դուստրն ևս իւր նահատակութեան վարձքը պէտք է ընդունի։

Բաբելոնեան գերութեան մէջ տառապող հին Սիոնի ժողովուրդը իւր աւետարանիչն ունէր, որ աննկուն հաւատոյ բարձունքից դիտում էր ազատարար Միւրոսի յաղթական գնդերի մօտենալը և խօսք չէր գտնում իւր բոլոր հրճուանքն արտայայտելու՝ այդ սաւեւթագծի վերայ գալիք փրկութեան չքնաղ պատկերը նկարուած տեսնելով։ Նոր Սիոնի զաւակաց համար հեռուում նկատուող մի մութ ստուեր չէ այդ պատկերը մարգարէական աչաց միայն տեսանելի, այլ լուսեղէն գրչով գրծուած մի կենդանի նկարագիր, որ գալերէ ի վեր սփռուած է հղել բոլոր ձշմարիտ հաւատացեալների առաջ և տարկցատրի նորոգուելով ընթեռնլի է իւրաքանչիւր նոր սերունդի համար, յայտարար ու մեկնիչ անցեալ և ապագայ կենաց միանգամայն։ Եւ սակայն մեր մթնացած աչքերը անընդունակ են աստուածային ողորմութեան լոյսը տեսանելու, մեր պատած սրտերին հաւատոյ ջերմութիւնը մօտ չէ գալիս, և չկայ, ո՛ հոգի, մէկը, որ աւետարանիչ մարգարէի նման, ժամանակի բարձրութեան վերայ կանգնած, ապագան դիտէր և գալոց օրերի արդարութեան աւետիքը ոգեշունչ բերանով մեզ պատմել կարողանար։

Ըւա՛ղ. մեր ամօթն ու նախատինքն անչափ առատացան, և գետնի հաւասար նկուն եղած մենք աչք բարձրացնել և դէպի վեր նայել իսկ չենք համարձակուում։ բայց երկնքի բարձրութիւնից ապագայի համար վճիռ գնողը նա է, որ «քակեաց զհզօրս յաթոռոց, և բարձրացոյց զխոնարհս», որ այրու և որբի դատը երբէք մոռացութեան չէ տուել, գրկեալին ու արհամարհեալին առ ժամանակ միայն թողնել կարող է՝ յաւիտենական ողորմութեամբ ողորմելու համար։ Եւ պէտք է ողորմի ... պէտք է գայ անշուշտ մի ժամանակ երբ այրութեան ու ամայութեան այս սգաւոր յիշատակները կանհետանան և Տիրոջ գործը իւր բոլոր քաղցրութեամբ երևան կելնէ։ Այդ ամէնը նախատեսել և հիւանդոտ երևակայութեան ստեղծած անշահ վախիմարութիւն համարել կարելի էր, եթէ պատմութիւնը ճակատագրի անխորհուրդ մի խաղը միայն լինէր և նորա ամէն մի շրջանառութեան մէջ նախախնամող բազկի ներկայութիւնը չնկատուէր։ Սակայն կենդանի է նա, որի աւետաւես աչքից ոչինչ չէ խուսափում, որ արդարութեան կշռի վերայ կշռում է մարդոց գործքերը «և ունի վարձս իւր ընդ իւր»։—Երդէն քանի՛ քանի անգամ իւր աթոռի բարձրութիւնից ընկել է նա, որ ամբարտաւանն էր և հզօր կարծուած՝ և անկեալն ու խոնարհեալը բարձրացել։ քանի՛ քաղցեալներ լցուել են բարութեամբ և ի հաշիւ նոցա հարստացածներն ու մեծացածները հաց մուրացել նոցա դռներում։ Հաշտութեան սեղանի վերայ զոհ բերուած տասնեակ հազարների անպարտ արիւնը անտես արուել մի՞թէ կարող է։ Ամենազօր Դատաւորը չէ նկատում մի՞թէ արհամարհողների արհամարհանքը և պիտի ցոյց չտայ, թէ Ինքն է տէր, և հանդուրժել չէ կարող, որ Իւր անուան սրբութիւնն արհամարհուի։ «Ո՞ դիտաց զմիտս Տեառն և ո՞ եղև Նմա խորհրդակից՝ եթէ խեղամուռ արասցէ զնա»։ «Տէր, առաջի Քո է ամենայն ցանկութիւն իմ և հեծութիւն իմ ի քէն ոչ ծածկեցաւ»։ «Ո՛չ ան Սիոնէն ոչ լռեցից և վան Երուսաղէմի ոչ ներեցից, մինչև ծագեսցէ իրրև պայծառութիւն նորա և փրկութիւն նորա իրրև պիսակն վառեսցի»։

Կ. Վ.

ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅԱՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ՀԻՄՔ ՕՐԸ ԸՍՏ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ։

Հայաստանեայց ս. եկեղեցին, ինչպէս յայտնի է, Քրիստոսի ս. ծննդեան և Մկրտութեան յիշատակները միացնելով տօնում է իբրև մի Աստուածայայտնութեան տօն յունուարի 6-ին, մինչդեռ բոլոր միւս եկեղեցիները այդ երկու տօները իրարից բաժանում են և առաջինը կատարում դեկտեմբերի 25-ին։ Արարատի ներկայ համարին իբրև յաւելուած հրատարակում ենք մի քաղուածոյ այն վկայութիւններին, որ մեր հայրերը բանակռուի մէջ գործ էին դնում՝ իրենց եկեղեցւոյ հնաւանդ սովորութիւնը օտարների դէմ պաշտպանելիս։ Պատմական տոյգ պատմութիւնը հաստատում է, որ արդարև իրաւունքը նոցա կողմն էր և որ մենք յունուարի 6-ին Յայտնութեան տօն կատարելով՝ հետևում ենք հանգիստ մինչև դ. դար ընդհանուր եկեղեցւոյ մէջ ընդունուած մի աւանդութեան։

*Ջարմանալին այն է, որ Կղեմէս Ադեքսանդրացու * վկայութեան նայելով, առաջին անգամ Քրիստոսի Մկրտութեան տօնը կատարել են բ. դարում Բասիլիդեան պատգաւորները։ Յամենայն դէպս այդ դարու վերջերից սկսած յայտնի է, որ արեւելեան եկեղեցիները տօնում էին յունուարի 6-ին Յայտնութեան տօնը, գլխաւորապէս ի յիշատակ Քրիստոսի իւր Մկրտութեամբ իբրև Մեսիա յայտնուելուն, բայց ոչ ասանց ի նկատ առնելու նաև նորա առաջին յայտնութիւնը կատարեալ ծննդեամբ։ Սակայն այդ երկրորդ նշանակութիւնը հետզհետէ այնպէս գերակշռող դարձաւ, որ դ. դարում եկեղեցական հայրերը, ինչպէս օրինակ երեք մեծ կապադովկացիք (Բարսեղ կեսարացին, Գրիգոր Աստուածաբան և Գրիգոր Նիւսացին) և ս. Յովհան Ոսկեբերան յայտնութիւն սուելով աւելի Քրիստոսի ս. ծնունդն են հասկանում։ ասած և ս. Բարսեղ, ինչպէս յիշեալ քաղուածքի մէջ բերուած վկայութիւնից երևում է, աւելի յարմար է սեռնում յունուարի 6-ի տօնը Աստուածայայտնութեան տօն անուանել, որովհետև այդ օրը Աստուած յայտնուում է ի մարմնի, յայտնուում է յատկապէս մոգերին լուսաւոր աստղի միջոցաւ։*

Արևմտեան եկեղեցիների նկատմամբ յիշատակութիւն չկայ, որ դ. դարից առաջ նորա Յայտնութեան տօնը կատարած լինին, բայց այդ դարում արդէն ամէն տեղ կատարում էին։ Առաջին անգամ Հռոմի Լիբերիոս եպիսկոպոսն եղաւ, որ 352 թ.-ին ախոռի վերայ բազմելով՝ սկսեց տօնել յունուարի 6-ը, հատնականապէս ակզբում իբրև Յայտնութեան տօն՝ ծնունդ և Մկրտութիւն միասին, բայց 354 թ.-ին, ժամանակագիրների միաձայն վկայութեան համաձայն, 2 տօները բաժանուեցան և դեկտ. 25ը մնաց ամենահեռ իբրև յիշատակ Քրիստոսի ս. ծննդեան։ Եւ որովհետև Հռոմն այդ ժամանակ Նիկիական դաւանութեան ամենայերում պաշտպանն էր, որին տպաւիրել էր իմիջս այլոց ս. Աթանաս՝ Հռոմի եկեղեցւոյ այս սովորութիւնը մուտ գործեց նաև արևելեան եկեղեցիների մէջ այն ժամանակ, երբ Նիկիոյ դաւանութիւնը յաղթող հանդիսացաւ և նորա գլխաւոր յաւատպաշտներից մէկը՝ Գրիգոր Աստուածաբան, տօնեց դեկտ. 25-ը կ. Պոլսում 379 թ. ին։

Թէ ինչն է եղել այս վերջին տօնի ծագման իսկական պատճառը՝ այդ մասին այլ ևս դրեթէ կասկած լինել չի կարող։ — Հռոմում կատանդին Մեծի և նորա որդիների օրով դեռ տօնուում էին հեթանոսական սատուրնալեան տօները դեկտ. 17—24 ին, երբ Հարուստ և աքրատի մէջ եղած խառնութիւնը վերանում էր և ընդհանուր ուրախութեամբ կատարուում էր Ոսկեդարի յիշատակը։ Իսկ վերջին օրը երեխաներին կաւէ, մոմէ, խմորէ պատկերներ և պաճուճապատանիներ էին բաշխում։ Դեկտեմբ. 25-ը արեգակի օրն էր, որ Քրոնմալիա էր կոչուում և որի հետ իւր նշանակութեամբ կապուած էր Հռոմէական նոր տարուայ տօնը։ — Յայտնի է, թէ ինչպէս եկեղեցւոյ առաջնորդները աշխատում էին ժողովրդի համար սիրելի և նուիրական դարձած այսպիսի տօներ քրիստոնէական գաղափարներով սրբագործել և պահպանել, հեթանոս մարդկութիւնն այսպէս անկասելի կերպով նոր կրօնին ընտելացնելով։ Իսկ ինչ կարող էր լինել աւելի խորհրդաւոր, քան աշխարհի փրկչի ծնունդը, փրկութեան Արեգակի ծագումը՝ կապել այն օրերի հետ, երբ արևադարձ տեղի է ունենում և տարին նոր շրջանաւորութիւն է սկսում։ Արդէն Եփրեմ Ասորին մի առանձին խորհուրդ էր նկատում այդ հանգամանքի մէջ, որ Քրիստոս արևադարձից 13 օր յետոյ է ծնուել։ Հասկանալի է ուրեմն, թէ ինչու Լիբերիոսի նորամուծութիւնը այնպէս շուտով ընդհանուր ընդունելութիւն գտաւ, մանաւանդ եթէ ի նկատի ունենանք,

* Վախծ. մօտ 220 թ.-ին։

որ այդ ոճը նպաստում էր առանձին շուքով հանդէս բերելու ժամանակակից գաւառնական վէճերի գլխաւոր խնդիրը՝ մարդեղութեան ս. խորհուրդը։ Բայց մեր եկեղեցին նախնական սովորութեան հետևելով ոչ միայն իւր հարազատ և աւանդապահ լինելն է ցոյց տալիս, այլ շարունակում է պահպանել այն խորհրդաւորակապը, որ կայ Քրիստոսի ծննդեան և Մկրտութեան իբրև մեր փրկչի կրկնակի յայտնութեան մէջ, և շատ աւելի վեհ է, քան հերձուածողական գաղափարներից վերցուած որևէ խորհուրդ։

Մեր հրատարակած քաղուածքը արտագրուել է Մայր աթոռի մատենադարանի «Թղթոց գիրք» կոչուած մի ձեռագրից*, որի գրիչը «հեք Մաթէոս» ոմն, ինչպես ինքն յիշատակարանի մէջ ասում է, սկսել է իւր գործը ՊՀԵ թ.-ին և վերջացրել ՋԻԵ.-ին։ Այս կարևոր և բաւական ստուար ձեռագիրը պարունակում է իւր մէջ մի շարք ուշադրութեան արժանի գաւառնաբանական գրուածներ և ի թիւս նոցա մի քանի այսպիսի վկայութեանց ժողովածուներ, որ մենք կաշխատենք հետզհետէ հրատարակել։ Մինչդ չունենալով ներկայ հրատարակութեան բոլոր հատուածների արժէքը մի առ մի մանրամասն որոշելու՝ մենք կ իշխենք միայն, որ նորանից երկուսը (ամենահինները՝ եթէ վաւերական լինէին) տպուած են արդէն Պիարա Ծիրանաւորի ժողովածուների մէջ։ Բայց ներկայացնում են այստեղ մի քանի տարբեր և ոչ անհետաքրքիր ընթերցուածներ (օր. Աստր. փոխանակ Աարեպիա)։ Սոցանից ա-ը Գ. գարու նշանաւոր գիտնական և Հռոմի հակաթոռ եպիսկոպոս (թէ և իբրև նահատակ սրբոց կարգը դասուած) Հիպոլիտ եպիսկոպոսին է ընծայուում, բայց անհաւանական է անշուշտ **, բ. ը՝ որ հաւանականապէս նոյնպէս անհարազատ է, վերագրուել է Բ. գարու Փոքր Ասիոյ ամենանշանաւոր եկեղեցականներից և իբրև փիլիսոփայ քրիստոնէութեան աչքի ընկնող չատագովներից մէկին՝ Սարդէսի Մելիտոս եպիսկոպոսին։ — Կիպրիանոս եպիսկոպոսի անունով յիշուած վկայութիւնն էլ առանձին ուշադրութեան արժանի կլինէր, եթէ նորա հեղինակը Գ. գարու կարթագենի նշանաւոր կիպրիանոս եպ. ը համարուէր. բայց սա երևի այն Անկիւրիոյ Կիպրիանոս եպ. ն է, որի անունով մի «Ողորմութեան Ճառ» կայ պահուած մեր ձեռագրերում *։ Հետաքրքիր էր նոյնպէս իմանալ, թէ ով է այն Սահակի Աֆրեմ ասորի վարդապետը, որ գիտէ այնպէս ուղիղ գեկա. 25-ի ոճով Ծագումը որոշել։ Բայց ամենահետաքրքիր և մանրաքնին հետազոտութեան արժանի խնդիրն այստեղ այն կէտն է, որ ակնարկում է կոմիտաս կաթուղիկոսին վերագրուած հարցաքննութեան և Սահակիանոս Սիւնեցու Անահիտի պատրիարգին ուղղած թղթի մէջ։ Եթէ վերջինս ը. գարում էր ապրում, ** մինչ նորա ժամանակ հայերը դեռ Աւետեաց առանձին ոճն չէին կատարում և մինչ Յարութիւնը կամ Աւետումը ապրելի 6-ին էին ուղղի ունեցած համարում որ այդ երկու ոճների խորհուրդը միացնել կարելի լինէր։

---

* Այս հեղինակի ընդհանրագրուածների մի նոր հրատարակութիւն է պատրաստուում Բոնվիլ եւ Հ. Ալիշեան հրատարակող գիտնականների ձեռքով, որոնց համար առիթ ևս ունեցել հայերէն պահուած այս եւ մի քանի ուրիշ հատուածները կրկին թարգմանել։

** Գէորգեան ժողովածուի Հ. 95. էջ 151 շրջ.—155։

ՈՒՈՇԱՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՅԱՆԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ։

Ուսաց «Եկեղեց. Համբաւաբեր» Թերթի 1895 թ. 51—52 համարում մի նոր յօդուած է լոյս տեսել «Հայոց եկեղեցու օրթոդոքսութեան հետ ունեցած յարաբերութեան հարցի նկատմամբ» վերնագրով, որի նպատակն է լրացնել անցեալ Թուական «Արարատի» յուլիս ամսուայ համարի մէջ նոյն Թերթից բերուած յօդուածի իմաստը։ Այդտեղ հեղինակը Հռոմի պապի ներկայացմամբ եկեղեցիներ միացնելու մասին գործ դրած եռանդուն ջանքերը իբրև նշան ընդունելով, «որ այդ հարցը վճռելու կարիքը բաւականաչափ հասունացել է քրիստոնէական աշխարհի գիտակցութեան մէջ», ﻫﻮﻳﻮﻫﻮﻳﻮ և ﻫﻮﻳﻮ է համարում չքաղաքավարել այդպիսի ժամանակակից հարցերով և առանձին ուշադրութիւն չդարձնել, իբրև այն եկեղեցիների, որոնք նորա կարծիքով «ամբողջ դարերի ընթացքում օրթոդոքս եկեղեցու մարմնի անբաժան անդամներն են եղել», մանաւորապէս Հայոց եկեղեցու վերայ, առանց ի հարկ է բացատրութիւն տալու, թէ արդեօք քրիստոնէական աշխարհի զգացած միութեան կարիքին ուղիղ արտայայտութիւն են այնպիսի ջանքերը, որպիսին Հռոմի քահանայապետն է անում և թէ ինքն այդ

* Զարբհանալեան - Թարգմանութիւնք. 1889. եր 302.

** Նոյն — Հայկական հին Դպրութիւն 1886. եր. 47 ֊

կարիքն ղգալով տրամադիր կարող էր լինել իւր եւ կեղեցու կողմից նաև այս վերջինին բարեկամութեան ձեռք մեկնելու։ Նա իւր բոլոր խակ և թիւր եղրակացութիւնները հանում է նոյն իսկ այն, պատմականօրէն բոլորովին անհիմն ենթադրութիւնից, թէ Հայոց եկեղեցին երբեմն օրթոդոքս եկեղեցւոյ մի մասն է կազմել և յետոյ է բաժանուել նորանից։ Երբ Հայաստանեայց ս. եկեղեցին 3 տիեզերական ժողովների կանոններն ընդունեց, ոչ օրթոդոքս եկեղեցի կար և ոչ կաթոլիկ, այլ մի ընդհանրական եկեղեցի, մի առաքելաշաւիղ քրիստոնէութիւն. ամէն տեղ ուր աւետարանը տարածուում էր, յառաջ էր գալիս մի նոր Համայնք, տեղական պայմանների համեմատ կազմակերպութեամբ, և այն իրրև անդամ այն մեծ համայնքի, այն գաղափարական մարմնի, որի գլուխն է Քրիստոս։ Այն բոլոր համայնքները, որոնք Հռովմէական ընդարձակածաւալ պետութեան սահմանների մէջ էին գտնուում, ստիպուած էին բնականաբար այդ պետութեան օրէնքներին հպատակել և արտաքին կազմակերպութեամբ ևս իրար համակերպելով յառաջ բերել հետզհետէ օրինական կապերով կապուած մի նոյնութիւն, մի պետական եկեղեցի, և որովհետև այդ եկեղեցին իւր մէջ ամփոփում էր քրիստոնէութեան մեծագոյն մասը, նորա մէջ զարգացած կեանքը իւր ազդեցութիւնը պէտք է գործէր անշուշտ դուրսը գտնուած համայնքների վերայ ևս։ Մեր ունեցած տեղեկութիւնները այդ նախնական ժամանակներում Հայոց եկեղեցու ունեցած կազմակերպութեան մասին այնքան չնչին են և այնքան մութ, որ դժուար կլինէր մի որոշ գաղափար կազմել. բայց այսքանը ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այստեղ էլ քրիստոնէութիւնը մի ուրիշ պետութեան օրէնքների համակերպելով՝ մի առանձին պետական եկեղեցի պէտք է յառաջ բերէր։ Քանի դեռ ընդհանրական եկեղեցու գաղափարը կար և նորան զրաղեցնողը բուն կրօնական խնդիրներ, քրիստոնէական վարդապետութեան դժուարըմբռնելի կէտերն էին, կեդրոնում կայացած վճիռները ընդունում էին բոլոր կողմերում, իրրև ուղիղ թելադրութիւն այն Հոգու, որ կառավարում էր աներևութապէս մի, ընդհանրական տիեզերական եկեղեցին։ Բայց երբ հռոմէական պետութեան հետ նկեղեցին ևս արտաքուստ մասերի բաժանուեցաւ՝ յառաջ եկան տեղական շահեր, տեղական խնդիրներ, որոնք յօգուտ մի կամ միւս մասի էին վճռուում և դուրսը գլուխ նուած քրիստոնեայ համայնքներին չէին էլ հետաքրքրում, ուստի սոքա բնականաբար պարտաւոր չէին համարձակուում իրենց այդ վճիռները ընդունել, մանաւանդ երբ տեսնում էին, որ նորա յայտնի կերպով հակառակ են իրենց կրօնական համոզումներին. և այսպէս հետզհետէ խզեցին իրենց յարաբերութիւնը նոցա հետ։—Հետևաբար, եթէ մինչև իսկ օրթոդոքս եկեղեցին կաթոլիկականից բաժանուած համարենք կամ հակառակ, նորա համար, որ մի ընդհանուր քաղաքական իշխանութեան ներքոյ մի ացած են եղել նոքա երբեմն, չենք կարող նոյնն ընդունել նաև Հայոց եկեղեցւոյ նկատմամբ, որովհետև այդ մարմնի անդամը նա երբէք չէ եղել. եթէ վերջինս մի մայր ունի, այդ յամենայն դէպս Քրիստոսի գաղափարական եկեղեցին կամ մինչև Ե. դար իւր միութիւնը ճանաչող և պահպանող ընդհանրական եկեղեցին է և ոչ երբէք արդի օրթոդոքս եկեղեցին, որ ինքն ևս ընդհակառակն նոյնպիսի մի դուստր է և ոչ մայր, ինչպէս պնդում է յիշեալ յօդուածագիրը։

Միանգամ այսպիսի մի պատմականօրէն և տրամաբանօրէն սխալ տեսութիւն իրրև հիմք ընդունելով, նա դորա համապատասխան և ամենապարզամիտ ու տարօրինակ եղրակացութիւններ է հանում։ Նորա կարծիքով «եթէ մի եկեղեցի (ինչպէս հայկականը) չէ ընդունում ամբողջ չորս տիեզերական ժողովներ, որոնք մեծ կարևորութիւն ունեցող (?) դաւանաբանական որոշումներ են մշակել, դարձնելով նոցա օրթոդոքս դաւանաբանութեան անանջատելի մի բաժինը՝ կնշանակէ նա օտար է բոլորովին ուղղափառութեան, հերետիկոսական եկեղեցի է, ոչ մի ընդհանուր բան նոցա մէջ լինել չի կարող, ինչպէս չի կարող լինել ընդհանուր բան լոյսի և խաւարի մէջ»։ Անշուշտ ամէն մի ուշիմ ընթերցող այս խօսքերը կարդալով պէտք է ակամայ հարցնէ. ուրեմն մինչև Ե. դար ապրող քրիստոնէութիւնն էլ, որ այդ ժողովների որոշումները չէր ճանաչում և որի հաւատարիմ հետևող լինելու պարծանքն ունի Հայաստանեայց ս. եկեղեցին, հերետիկոսական է և այնքան տարբեր արդի օրթոդոքսութիւնից, որքան խաւարը լոյսից։ Յօդուածագիրը այդ հետևութեան մասին ի հարկէ չէ մտածում։ Նա Հայոց եկեղեցին ևս առ երևոյթ միայն հերետիկոսական է համարում՝ թէ և ընդունում է, որ նորան հերետիկոս անուանող յոյն եկեղեցականները, ինչպէս և Ներսէս Պիկրիանոս մետրապոլիտը, որի համար «Հայկական աղանդը ամենավատթար աղանդն է, ուստի և արժան չէ օրթոդոքս կրնակացին որևէ հաղորդակցութիւն ունենալ նոցա հետ և ոչ իսկ տեներին»—իրենց հիմունքներն ունեին այդպիսի խիստ խօսքեր գործածելու համար։ Նա կարծում է այնուամենայնիւ, թէ երկու եկեղեցիների

աղգակցութիւնն այնքան մեծ է բաժանող կողմերի համեմատութեամբ, որ լրջօրէն կարելի է նոցա միացման մասին մտածել, ինչպէս և պատմութեան ընթացքում միշտ մտածողներ եղել են, և այդ միտքը իւր ամենաջերմ արտայայտութիւնն է գտել Յունաց Միքայել Կոմնենոս կայսեր օրով։ Եւ ահա յօդուածագիրը մէջ է բերում Յունաց կողմից այս առթիւ հայերին եղած ինն առաջարկութիւնները, որպէս զի ցոյց տայ, թէ ինչպէս են վերաբերուել նոցա այն ժամանակուայ հայերը։—Թողնելով առայժմ այն թիւր հայեացքը, որ նա ունի Ի՛. դարում ծագած միութեան խնդրի մասին, մենք մէջ կբերենք նախ յիշեալ առաջարկութիւնները, * որպէս զի երևի, թէ որքան իրաւացի են կամ իրաւացի կարող են լինել առհասարակ այդպիսի առաջարկութիւնները, և թէ ինչ չափով են նոքա «պարզում Հայոց եկեղեցու մոլորութիւնները»։

Ա) «Նզովեցէք զասողն զմի բնութիւն ի Քրիստոս, զԵւտիքէս և զԴիոսկորոս և զՏիմոթէոս զկուզըն և զամենայն համախոհս նոցին»։—Սորան Տարսոնի ժողովականները պատասխանում են, թէ Եւտիքէսին վաղուց արդէն Հայոց եկեղեցին նզովել է, իսկ միւսներին նզովելու պատճառ չէ գտնում, քանի որ նոցա եւտիքեան լինելը ոչնչով չէ ապացուցուած և նոյն իսկ Յունաց հայրերը նոցա նզովելու հարկ չեն տեսել։ Յիրաւի, ինչպէս յայտնի է, նոյն իսկ Քաղկեդոնի ժողովը Դիոսկորոսին և նորա հետևողներին դատապարտելով՝ քաշուեցաւ նորան մոլար ուսմունքների համար մեղադրել, որովհետև նա նոր վարդապետութիւն չէր քարոզում, այլ պնդում էր, թէ ինքն հետևող է միայն իւր նախորդ Կիւրեղ Աղէքսանդրացու ուղիղ վարդապետութեան, որից հակառակորդները շեղուում են։ Ինչքա՜ն անարդար էր ուրեմն պահանջել հայերից բանագրելու մի եկեղեցականի, որից նոքա ոչինչ չէին տեսել, որին հեռու մի երկրում իրաւացի կամ անիրաւացի կերպով դատապարտել էին քաղաքական ինչ որ հաշիւների համար։

Բ) «Եւ զի խոստովանիցէք զՏէր մեր Յիսուս Քրիստոս մի որդի, մի դէմ, մի Քրիստոս, մի Տէր, մի անձնաւորութիւն անորիշ, անփոփոխ, անայլայլի, անշփոթ։ Ո՛չ այլ զՈրդին Աստուծոյ և այլ զորդի մարդոյ. Բնութիւնս երկուս զմին խոստովանել Աստուած և մարդ և երկուս բնութիւնս զնոյն և միբերիստոս, ունելով երկուս ներգործութիւնս բնականս՝ աստուածային և մարդկային, ոչ հակառակք միմեանց, այլ ընթանայ մարդոյն կամաւն զկնի Աստուծոյ կամացն»։—Վերոյիշեալ Արարատ 1895 թ. յուլիս համարի յօդուածի մասին մեր արած նկատողութեան մէջ մենք արդէն համառօտակի պարզել ենք այս խնդրի էութիւնը և աւելորդ ենք համարում կրկնել։ Ուրիշների համար գուցէ այդ պարզ է, բայց ո՛չ մեր հայրերի համար ըմբռնելի է եղել և ո՛չ մեզ համար կարող է երբէք լինել՝ մի Քրիստոս, որ երկու բնութիւն, մանաւանդ թէ երկու ներգործութիւն և երկու կամք ունի։

Գ) «Եւ կամիմք զի ասիցէք զերկաք սրբասացութիւնս բացի խաչեցելոյն և բաց յևէն»։—Այս պահանջը գնողները շատ լաւ գիտէին ի հարկ է, որ Հայերն այստեղ «ս. Աստուած» ասելով ո՛չ թէ երրորդութիւնն էին հասկանում կամ աստուածութիւնը չարչարելի համարում, այլ թէ, ինչպէս մեր հայրերը շատ անգամ բացատրել էին, նոքա Պօղոս առաքեալի յիշած պարծանքն էին (Գաղ. 6, 14. Ա. Կորնթ. Բ. 8) արտայայտում գորանով՝ անմահ Խաչեցեալին ուղղում իւրեանց ջերմագին աղօթքը, որ իւր աստուածային բնութեամբ հանգերձ խաչի անարգական մահ յանձն առաւ մարդոց փրկութեան համար, եթէ այնուամենայնիւ այս պահանջը գնում էին, այդ նորա համար էր անշուշտ, որ Յունաց տեսակէտով նոցա հետ միանալու համար նոցա պէտք էր հետևել անպատճառ, ուղիղ լինէր նոցա ընդունածը թէ սխալ։ Այդ տեսակէտն աւելի պարզ երևում է յաջորդ առաջարկութիւնից։

Դ) «Ցօդնեսջիք և զտօնս ընդ Հռոմ. այս է՝ զԱւետեացն ի Ի՛. մարտի և զԾնունդն ի Ի՛. դեկտեմբերի. զԹլփատութիւնն ի Ա. յունուարի, և զՄկրտութիւնն ի Զ. զՏեառընդառաջն ՚ի Բ. փետրուարի. և զՍրբուհւոյ Աստուածածնի և զկարապետին և զառաքելոցն»։—Արարատի ներկայ համարում Յայտնութեան տօնի մասին տուած տեղեկութիւններից ընթերցողը կարող է տեսնել, թէ որ եկեղեցւոյ տօների համակարգութիւնը աւելի հին է, ով ումնից աւելի իրաւունք ունի պահանջելու (եթէ միայն այդպիսի պահանջ կարելի լիներ դնել), որ նախնական ուղիղ աւանդութիւնը վերանորոգէ։

Ե) «Եւ զի առնիցէք զմիւռոնն ի պաղղոյ ծառոց»։—Աւելորդ է ասել, թէ որքան անտեղի պէտք է համարուէր այսպիսի մի առաջարկութիւն, եթէ եկեղեցիների միութիւն թելադրողը ղուտ կրօնական զգացումները լինէին։

Զ) «Եւ զի առնիցէք զաստուածային հաղորդութիւնն խմորուն հացիւ, և գինեաւ և ջրով»։—Մեր յօդուածագիրը այստեղ ծանօթութիւն է գըտնում. «Հայոց եկեղեցին գործ է ածում բաղարջ հաց և անխառն գինի՝ միաբնակութեան ակնյայտնի ձգտումով»։ Բարեբաղդաբար, ինչպէս յայտնի է,

---

* Փարիզի Ազգային մատենադարանի ձեռ. 78 ձեռագրից, ուր նոքա մէջ են բերուած Տարսոնի ժողովի պատասխաններով միասին։

կաթոլիկ եկեղեցին ևս բաղարջ հաց է գործածում, եթէ ոչ անխառն գինի. մի՛թէ նա ևս միաբնակութեան հետևող է։

է) «եւ զի կացցեն ամենայն քրիստոնեայքն՝ քահանայքն և ժողովրդականք, ի ներքոյ եկեղեցւոյն, յորժամ կատարիցի աստուածային պատարագն, բաց յայնոցիկ, զոր արգելուն կանոնք յաղագս ապաշխարութեան. նոյնպէս և յայլ կարգաւորութիւնս եկեղեցւոյ»։—Դորան Տարսոնի ժողովը պատասխանում է. «ըստ այմ մասին յանցանելն ոչ եկեղեցւոյ եղև, այլ յաղագս տարագրելոյ ազգիս ի հայրենի աշխարհէն և յեկեղեցւոյն և պանդխտ գոլով ի մէջ ձեր՝ ոչ հաղորդս ընկալայք սիրով, որպէս իրաւացի էր, այլ փակեցիք ընդդէմ մեր դրունս եկեղեցեաց ձերոց, և մեզ անկար եղև ի պանդխտութեանս բաւական ժողովրդոցս եկեղեցիս չինել. ուստի յառաջացեալ աւանդութեանս յաղքատութենէն, որպէս զօրէնս եղև ....» Արդեօք ուղի՞ղ է այդ բացատրութիւնը, թէ դուցէ Հայոց վերոգրեալ սովորութիւնը կապ է ունեցել նախնական քրիստոնէութեան հետ* և նորա հաւատարիմ աւանդապահութեան նշաններից մէկն է՝ այդ դեռ պատմական հետաքննութեան խնդիր է։ Յամենայն դէպս այդ սովորութիւնը իրրև ժամանակի բերմունք վերացուած լինելով՝ հարցի առարկայ չէ այլևս, և միանգամայն մատնացոյց է մեր յօդուածագրի այն նկատողութիւնը, իբրև բացատրութիւն, թէ «Հայոց եկեղեցին Հին Կտակարանի ոգով (?) աշխատել է հեռու պահել ժողովրդին տաճարի սրբութիւնից»։ Պէտք չէ մոռանալ, որ խօսքն ամենաժողովրդական եկեղեցւոյ մասին է։

Ը.) «եւ զի ընդունիցիք զՊ. զԵ. և զՋ. և զԷ. տիեզերական ժողովն»։—Այս առաջարկութիւնը կապ ունի բնութեան խնդրի հետ, որով զբաղուել են Գ. Ե, և Ջ. ժողովները և ուրեմն ընդունուել կարող էր միայն այն ժամանակ, երբ Հայերն իրենց եկեղեցւոյ բոլոր անցեալը մոռանային և իրենց հաւատոյ հիմք դարձնէին այնպիսի վիճաբանական խնդիրներ, որ բոլորովին օտար գաղափարների տէր մարդիկ, օտար պայմանների և քաղաքական ազդեցութեան ներքոյ վճռել են աշխատել և նոցա կրօնական կեանքի հետ ոչ մի առընչութիւն չունին։

Թ.) «եւ զի ընդունիցիք զառաջարկութիւն

* Ինչպէս յայտնի է առաջին դարերում մկրտութեան պատրաստուողները եւ ապաշխարողները, որոնք համայնքի մի աչքի ընկնող մասն էին կազմում, իրաւունք չունէին ներկայ լինել ս. պատարագին եւ դուրսը կանգնած սիրտ առնէին։ Դուցէ սոցա համար են նաեւ մեր շատ հին եկեղեցիներին կից շինած գաւիթները։

կաթուղիկոսին միայն ի թագաւորէն Հռոմոց»—Այս խնդիրը, որ մեզ համար այսօր այլ ևս նշանակութիւն չունի, Տարսոնի ժողովականների հայեացքով, «պարունակող է ամենայն նախակարգեալ կարգաց գլխոցն»։ Ժամանակակից Հայոց կաթուղիկոսը Գրիգոր Տղայն, գուցէ մասամբ այն թիւր հայեացքի ազդեցութեան ներքոյ, թէ իսկական պատրիարքութիւն չորս աւետարանիչների աթոռ ներն են միայն, և մասամբ նուիրապետական ձգտումներով՝ ցանկանում էր, որ Յունաց կայսրը նորան Անտիոքի պատրիարք ճանաչէ և այդ պատրիարքութեան թեմերը նորա իշխանութեան ներքոյ դնէ, Եւ եթէ միութիւնը չկայացաւ, դորա պատճառն այն չէ միայն, ինչպէս մեր յօդուածագիրը և ինչպէս շատերը կարծում են, որ Հայոց պահպանողական կուսակցութիւնը զօրեղ ընդդիմութիւն ցոյց տուաւ, այլ առաւել այն, որ ազատամիտ հայերն էլ այսպիսի ծանրակշիռ պայմաններ ունէին և տրամադիր չէին երբէք ամէն ինչ տալ առանց մի բան ստանալու։ Իսկ նոցա գործը այնպիսի եկեղեցւոյ հետ էր, որ նոյն իսկ յօդուածագրի ե ր կ ր օ ր դ ա կ ա ն, ծ ի ս ա կ ա ն անուանած խնդիրներին աւելի պակաս նշանակութիւն չէ տալիս քան էական դաւանաբանականներին և ոևէ ջիջում անելու ցանկութիւն չուներ։ Նորա պահանջն էր պարզապէս, որ Հայոց եկեղեցին իւր բոլոր ինքնուրոյնութիւնը կորցնէ և յունաց հպատակէ, նոցա շաղով, նոցա օրէնքով ընթանայ, և Շնորհալին, Գրիգոր Տղայն, Լամբրոնացին՝ ինչքան էլ ընդարձակ հայեացքների տէր անձինք լինէին, հէնց նորա համար, որ նոցա «աստուածաբանական զարգացումն և աղնիւ ձգտումներ» չէին պակասում, անկարող էին այդպիսի պահանջներ ընդունելով իրենց եկեղեցուն դաւաճանել։ Մենք արդարև պարծենալ կարող ենք այդ հայրերի ազատ հայեացքներովն, աստուածաբանական հմտութեամբ և աղնիւ ձգտումներով, բայց արդեօ՞ք յունաց հայեացքները, հմտութիւնն ու ձգտումները դոցա համապատասխան էին, արդեօք այն Լամբրոնացին, որ այնպէս ոգևորում է յոյն եկեղեցու հայրերով և իւր սահմանափակ զարգացման տէր ազգակիցների մասին արհամարհանքով էր խօսում՝ գտա՞ւ Ն. Պօլսոյ մէջ իւր երևակայածը, երբ նորան դեսպանութեամբ այնտեղ ուղարկեցին։

Իզուր է ուրեմն յարգելի յօդուածագիրը կարծում, թէ մեր եկեղեցին զուրկ է «դաւանաբանական հաստատամտութիւնից և հետևողականութիւնից». եթէ նա իր որդիներին թոյլ է տուել աւելի արձակ կրօնական հայեացքներ ունենալ, քան այդ կարելի է օրթոդոքս եկեղեցու սահմաններում,

և երկրորդական խնդիրների մէջ երբեմն կարծիքների տարբերութիւն իսկ ցոյց տալ՝ այդ արդէն նորա աղատ ոգու ընթացքն է։ Իսկ իւր հաստատամտութիւնը նա ապացուցել է նորանով, որ ամէն հալածանքի և բռնութեան դէմ պահպանել է իւր նախնի աւանդութիւնները և ոչ մի գիծ չէ շեղուել իրեն առաջնորդող կրօնական սկզբունքներից։ Մեզ անյայտ է, որտեղից գտաւ յօդուածագիրը, թէ մեր եպիսկոպոսների ձեռնադրութեան միջոցին պահանջուում է ընդունել 7 տիեզերական ժողովները, քանի որ մեր մաշտոցի մէջ պարզ կերպով ասած է։ * «Աշակերտիս Նիկիոյ սրբոյ ժողովոյն երեք հարիւր ութետասն Հայրապետացն, Կոստանդնուպօլսոյ սուրբ ժողովոյն հարիւր յիսուն Հայրապետացն, և Եփեսոսի սուրբ ժողովոյն երկերիւր Հայրապետացն»։ ուրիշ ոչինչ։ Այդպէս և տարուայ որ օրն է արդեօք մեր եկեղեցին ուսուցչ Բորիս և Գլէբ սուրբ իշխանների տօնը կատարում։ —Թէպէտ Հայոց եկեղեցւոյ ոգուն հակառակ մի գործ չէր լինի այդ, որովհետև նա ոչ մի եկեղեցի հերետիկոսական չհամարելով և իւր գիրկը դիմող քրիստոնեաներին սովոր չլինելով կրկին անգամ մկրտել՝ ընդունում է անշուշտ, որ եթէ նոցա մէջ մի անձն առաքինական մեծամեծ գործեր է կատարել կամ Քրիստոսի սուրբ անուան համար նահատակուել, յարգելի և յիշատակելի կարող է լինել բոլոր քրիստոնեաների համար անխտիր։

Այսպիսի տեսակէտներ ունենալը նորա հեռանալն էլ չէ, որ մեր եկեղեցին 4 տիեզերական համարուած ժողովները չընդունելով, ըստ յօդուածագրի պնդման, առանց պատճառի ընդհակառակն։ Իւր հաստատութիւնը ևս ընդհակառակն մեր եկեղեցին ձեռք է բերել ոչ թէ դաւանաբանական անծայր վէճերի և ընդաղանցական քննութիւնների մէջ, այլ նահատակութեան ասպարիզում, կաթիլ կաթիլ արիւն թափելով իւր հաւատոյ ճշմարտութիւնների պաշտպանութեան համար։ բայց նա ունեցել է նաև իւր ազգային ժողովները, իւր եկեղեցական հայրերը, որոնք նորան հաստատեցին և նորա ընթացքը պահպանելու համար նոյնն են արել, եթէ ոչ աւելին, ինչ որ օրթոդոքս եկեղեցու համար 4 տիեզերական ժողովները։ Մեր այդ ազգային հայրերի գործած շաւիղը մէկ է և ոչ ոք Հայոց եկեղեցւոյ անդամ համարուիլ չի կարող, եթէ այդ շաւղով չէ ընթանում։ Ուրս յօդուածագրի օտարոտի կարծիքներից ամենաօտարոտին այն կարծիքն է, թէ Հայոց մէջ ի բնէ երկու կուսակցութիւններ են եղել և մինչև այժմ (?) կան, որոնցից մէկը՝ աւելի ղարգացած և ընդարձակ հայեացքների տէր, համակիր է միութիւն հաստատել օրթոդոքս եկեղեցու հետ, միւսը՝ նախնի-հայկական և պահպանողական, որ ամուր պահում է Հայոց եկեղեցւոյ դաւանական սկզբունքները և իւր կողմն ունենալով ժողովուրդին, կարողացել է ամէն անգամ յաջողութեամբ ետ մղել դրսից եկած միութեան ձգտումները։—Ինչուք այդպիսի կուսակցութիւններ կան և յօդուածագրի գիտութեամբ պահպանողական կուսակցութեան պաշտպանած «սկզբունքներն այնպէս համապատասխան են Հայոց եկեղեցւոյ ազգային բնաւորութեան, որ մինչև իսկ միութեան կողմնակիցները երբէք չեն համարձակուել նոցա յայտնի կերպով մերժել»։ ինչպէս ուրեմն կարելի է բարեխղճաբար թելադրել որևէ հայի, որ նա դաւաճանէ իւր ինքնուրոյն ազգային բնաւորութեան համապատասխան սկզբունքներին և անհամապատասխանն ընդունէ։ Սակայն ամէն մի ժամանակակից եթէ անցեալի մասին սխալուի էլ, ներկայի մասին գոնէ գիտէ, որ այդպիսի կուսակցութիւններ դոյութիւն չունին, Հայոց եկեղեցւոյ դաւանական սկզբունքները և աւանդական սովորութիւններն այնքան պարզ են և մաքուր, այնքան համապատասխան բուն քրիստոնէական և բուն ազգային ոգուն, որ հայ աստուածաբանը ինչքան խորը թափանցէ նոցա մէջ, այնքան աւելի կը սովորէ սիրել և ոգևորուիլ նոցանով, այնքան աւելի հեռու կը լինին նորանից իւրը յօդուտ օտարին զոհելու մտքից։ Ուստի այն «դաւանաբանական զարգացումը», որին հասնելով ըստ յօդուածագրի հայերն ինքնաբերաբար լուծած կը լինին միութեան հարցը՝ տեղի կարող է ունենալ միայն այն ժամանակ, երբ նոքա մոռանան կամ ուրանան իրենց եկեղեցւոյ բոլոր սկզբունքները և տգիտաբար կամ վատաբար հեռանան հայրերի գըծած շաւղից։ Յուսով ենք, որ զարգացման այդ աստիճանին մենք երբէք չենք հասնի, քանի ինքնագիտակցութիւն և ճշմարիտ քրիստոնէական հաւատ կայ մեր մէջ։ Միութիւն պահանջել մի եկեղեցուց այն մտքով, որ նա բոլոր առանձնայատկութիւնները թողնէ, իւր ինքնուրոյնութիւնը կորցնէ և ուրիշ կերպարանք ընդունէ՝ նոյն է թէ պահանջել նախ, որ նա մեռցնէ իրեն այժ և կազմակերպութիւն տուող ոգին, մեռցնէ իւր զաւակների մէջ ոչ միայն ինքնագիտակցութեան, այլ և բուն քրիստոնէական ղգացումը. որովհետև ոչ մի հայ իւր եկեղեցին չի թողնի և ուրիշի անդամ չի գրուի, եթէ նա ազգային ինքնագիտակցութիւնը չէ կորցրել կամ

* Մաշտոց ձեռնադրութեան եպիսկոպոսի. Վաղարշապատ 1876. եր. 21։

քրիստոնեայ անունը միայն մի անիմաստ բառ չէ նորա համար—կայ արդարև մի միութիւն, որ բոլոր եկեղեցիների մէջ հաստատել ցանկալի էր, որի կարիքը գուցէ այժմ աւելի ղգալի է քան երբեք, ղգալի յատկապէս մեզ հայերիս համար. մի միութիւն, որի շնորհիւ Ամերիկացի քրիստոնէի սիրտը մղկտում է, երբ նորանից հազար մղոններով հեռու գտնուղ մի Ասիացի քրիստոնէի զրկանք և նեղութիւն են հասցնում, որ եթէ գոյութիւն ունենար՝ Արևմտեղելցից մինչև Աւստրալիոյ կղզիները, Ամերիկայից մինչև Ճափոնիա, ամբողջ քրիստոնեայ աշխարհը սոսկումով ու զայրոյթով ոտքի պէտք է ելներ, Քրիստոսի անուան պատիւը վերականգնէր՝ երբ տասնեակ հազարներով անմեղ հաւատացեալների նահատակութիւնը լսեց. ոչ մի եկեղեցի անտարբերութեամբ չպէտք է նայէր մի եկեղեցւոյ խաչը պղծուած, ս. հաղորդութեան կենարար մասունքը ոտքի տակ տրուած տեսնելով, բայց մտածելով, որ այդ խաչը այս կամ այն նիւթից, այս կամ այն ձևով է շինուած, այդ հաղորդութեան խորհուրդի համար խմոր և ջուր չէ գործածուած . . . Հայոց եկեղեցին տառապում է, աւա՜ղ, այդ միութեան ղգայումների պակասութիւնից, բայց նորա տառապանքն ամոքելու բոլորովին հակառակն է և անյապաղ մի ուրիշ միութիւն առաջարկել, որ թեևդրութիւն չէ նոյն ոգւոյ.

Ն. Վ.

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ Ւ ԱՐԵՒԵԼՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ.

Բողոքական միսիոնի հիմնական և խոշոր սըխալներից մինն այն է, որ նա իւր ոյժերը փոխանակ բացառապէս ոչ—քրիստոնեայ ազգերի վրայ կենդրոնացնելու, ջանք է անում նաև միւս քրիստոնեայ, բայց ոչ բողոքական, եկեղեցիներին բողոքական դարձնելու. Այսպէս Եւրոպայի լութերական, կալուինական եկեղեցիները քարոզիչներ են ղրկում Իտալիայի և Սպանիայի կաթոլիկների մօտ, որպէս նաև բողոքներին, յոյների և հայերի մօտ, որոնք արդէն քրիստոնեաներ են և դաւանում են մի քրիստոնէութիւն, որ շատ աւելի հին է քան բողոքականութիւնը. Ամերիկայի զանազան բողոքական եկեղեցիները—մեծ մասով կալուինական—միսիոնարական եռանդի կողմից գերազանցել են միշտ և գերազանցում են Հին Աշխարհի իրանց դաւանակիցներից, Նրանք ոչ միայն բազմաճոխ միսիոններ են հաստատել հիշեալ ազգերի մէջ, այլ նաև Եւրոպայի բողոքական, բայց ոչ կալուինական համայնքների մէջ. Այսպէս յառաջ է եկել այն տարօրինակ երևոյթը, որ Ամերիկայի մեթոդիստները և բապտիստները—մկրտողները—փոքրիկ համայնքներ են կազմել ղուտ լութերականներից, օր., Լայպցիգի մէջ, որոնց անդամներն հարկաւ «գողացուած» են լութերական եկեղեցիներից.

Բողոքական եկեղեցիների այս ընթացքը հիմնուած է այն համոզմունքի վրայ, թէ «մաքուր վարդապետութիւնը» -pure doctrine—միմիայն իրանց սեպհականութիւնն է, և հետևապէս իրանց պարտքն է բոլոր աշխարհի, հեթանոս կամ «անուանական» քրիստոնեայ ժողովուրդներին հաւասարապէս, ղուտ ճշմարտութեանը դարձնել.

Թողնենք, որ այս տեսակէտը միամիտ և քրիստոնէութեան լայն ոգուն չհամապատասխանող մի տեսակէտ է, որովհետև այն ո՛ր եկեղեցին է, որ կարող է ասել. Ես միայն ունիմ բովանդակ ճշմարտութիւնը և միւսները ոչ.—Նա մեծապէս վնասել է քրիստոնէական գործի յառաջացմանը. Դժուար չէ երևակայել, թէ որքան յառաջացած կը լինէր Քրիստոսի Աւետարանն աշխարհիս մէջ, եթէ քրիստոնէական տարբեր եկեղեցիների այս հակընդդէմ և թշնամի ոյժերը միացած գործէին, և գործէին միայն ոչ քրիստոնեայ ժողովուրդների մէջ. Այս միութեան բացակայութեամբ գլխաւորապէս բացատրուում է այն, որ թէև մօտ երկու հազար տարիներ են անցել այն օրերից, երբ Նազարէթի Մարգարէն պատուիրեց իւր աշակերտներին՝ ի մի հօտ գումարելու բոլոր ազգերին, այսօր մարդկութեան մի փոքրիկ մասը միայն քրիստոնեայ է. Ասում ենք «գլխաւորապէս», դի այս հետաքրքրական երևոյթն ուրիշ պատճառներ ևս ունի, որոնց քննութեան մէջ մտնելը այս յօդուածի համեստ շրջանակից դուրս է.

Բողոքական միսիոնի այս սխալը ոչ մի տեղ այնպէս շօշափելի կերպով երևան չէ եկել, որպէս Հայերի մէջ. Եթէ միսիոնարների նպատակն էր զօրացնել քրիստոնէական կեանքը Հայերի մէջ, և ոչ թէ իրանց սեպհական եկեղեցիների համար «նկատուտներ» ճարել, ապա նրանք կարող էին աջակցել նոյն իսկ Հայ Եկեղեցու առաջնորդներին՝ յառաջ տանելու քրիստոնէութեան ընդհանուր գործը. Բայց ի՞նչ արին նրանք. Հայոց եկեղեցուց այսպէս թէ այնպէս խլած անդամներից կազմեցին մի նոր եկեղեցի, «Հայ—բողոքական» եկեղեցի, որ աւելի ուղիղ կը լինէր անուանել «ամերիկեան եկեղեցի Հայերի մէջ», որովհետև այդ եկեղեցին անունով միայն Հայկական էր, իսկ ոգով և կազմութեամբ՝ ամերիկեան.

Ամերիկացի միսիոնարների մէջ ամենից ընտիր և խելացի անդամները խոստովանում են, որ Իւրաքի Ամերիկեան Բորդը սխալ ընթացք բռնեց Հայկական միսիոնի մէջ, բայց թէ աւելացնում են, որ ուրոյն բողոքական համայնք կազմելու գլխաւոր պատճառը Կ. Պոլսի Հայ Հոգևոր վարչութեան հալածանքներն են եղել։

Առանց մտնելու այս հարցի քննութեան մէջ, այնքանն ասենք այստեղ, որ մենք միշտ լաւատես ենք Հայ բողոքական համայնքի նկատմամբ, և համոզուած ենք, որ նրանք վերջ—առաջ Հայ Եկեղեցու գիրկը պիտի վերադառնան, եթէ այդ եկեղեցին արժանաւոր հովիւներ և քարոզիչներ ունենայ։ Այստեղ ուրախութեամբ արձանագրում ենք այն իրողութիւնը, որ Թիւրքիայի Հայ բողոքական համայնքը վերջերս միտք էր յղացել իրանց գուտ ազգային գործերը ստորագրելու մեր պատրիարքարանին և պաշտօնապէս նրա հետ կապուելու՝ որպէս մի մարմին թուրք վարչութեան առաջ։ Բայց ծանօթ հանգամանքներն արգելք եղան առ այժմ այս ազգօգուտ մտքի իրագործուելուն։

Բոլոր բողոքական եկեղեցիների մէջ եպիսկոպոսական կամ անգլիկան եկեղեցին սկզբից ի վեր մի առանձին համակրութիւն է ցոյց տուել դէպի Հայաստանեայց Եկեղեցին և արևելքի միւս եկեղեցիներն ընդհանրապէս։ Եկեղեցու պատմութեանը ծանօթ ընթերցողին այս հանգամանքը խորթ կերևի անշուշտ, որովհետև պատմութեան մէջ, հինգերորդ դարից մինչև մեր օրերը, տարբեր ազգային կամ տեղական եկեղեցիները միմիայն նզովք, լաւագոյն դէպքում արհամարհանք են ունեցել դէպի իրար, բայց ոչ սիրոյ և միութեան հակումներ։ Միութեան, աւելի ճիշդ ասած միացման համար եղած ջանքերը բղխել են մեր քաղաքական շարժառիթներից և քաղաքական նպատակների համար, իսկ Քաղաքականութիւն և Քրիստոսի Կրօն—երկու միմեանցից գլխովին տարբեր մեծութիւններ են, և նրանց միացումը կատարուել է միշտ ի վնաս կրօնի։

Անգլիկան եկեղեցու Արևելքի եկեղեցիներին մօտենալու ձգտումները բացատրուում են հետևեալ հանգամանքով։ Այս դարու կէսից ի վեր երկու զօրաւոր հոսանքներ գործում են անգլիկան եկեղեցու մէջ, տարբեր ուղղութեամբ։ Առաջ սկսուեց այսպէս կոչուած աւետարանական—evangelical—հոսանքը, որ ձգտում էր անգլիական եկեղեցին զատել «պապութեան մնացորդներից» և վերակազմել այն աւետարանի սկզբունքների վրայ։ Այս շարժումն առաջ բերից մեթոդիստների անջատումը պետական եկեղեցուց և «ստորին եկեղեցու» կազմակերպումը բուն եկեղեցու շրջանակի մէջ։ Իրրև բողոք այս պուրիտանական շարժման դէմ, յառաջ եկաւ ծիսականների շարժումը, գլխաւորապէս Նիւման եպիսկոպոսի (յետոյ կարդինալ) և իւր համախոհների ձեռքով, և այսպիսով կազմուեց «վերին եկեղեցին»։ «Ստորին եկեղեցին» – Low Church իւր կազմով և ուղղութեամբ նման է միւս բողոքական եկեղեցիներին,—պարզ և աւետարանական։ վերին եկեղեցին—High Church—ընդհակառակը իւր կազմութեամբ և ծէսերով բողոքովին մօտենում է կաթոլիկ եկեղեցուն։ Եկեղեցիների ծէսերին մօտիկ ծանօթութիւն ունեցողը միայն կարող է զանազանել Լոնդոնի եպիսկոպոսական Ս. Պօղոս մայր եկեղեցու ժամապաշտութիւնը՝ Քէօլնի կաթոլիկ մայր եկեղեցու ժամապաշտութիւնից, ինչքան որ զօրանում է աւետարանական կամ պարզկերն հոսանքը անգլիական եկեղեցու մէջ, նոյնքան և վերին եկեղեցու կողմնակիցները ջանք են թափում ամրացնելու իրանց դիրքը և շահելու նոր կողմնակիցներ։ Բրիտանական արքայական տունը, ազնուականութեան մեծագոյն մասը, անգլիական fashionable (ժօդնի) հասարակութիւնը և եկեղեցու բարձր պաշտօնեաները պատկանում են «վերին» եկեղեցուն։ Այսպէս ուրեմն կարող ենք ասել, որ եպիսկոպոսական վերին եկեղեցին Անգլիայի պաշտօնական եկեղեցին է։ Այս եկեղեցին է ահա, որ փնտռում է Արևելքի եկեղեցիների համակրութիւնը։

«Վերին» եկեղեցու այս ծիսասիրական ձգտումները շատ անգամ բացատրուում են որպէս կաթոլիկ եկեղեցուն մօտենալու նշաններ։ Բայց այս բացատրութիւնը հիմնովին սխալ է։ Այս սխալը գործեց նաև Լևոն ԺԳ. պապը իւր վերջին շրջաբերականի մէջ, որով անգլիացիներին հրաւիրում էր միանալ Հռոմի եկեղեցու հետ։ Քենտրբըրիի արքեպիսկոպոսը մի զօրաւոր պատասխանով ցոյց տուեց, որ պապը խարուում է իւր յոյսերի մէջ, և թէ հպարտ բրիտանացիներին պապական լուծին ենթարկել անկարելի է։ Անգլիական «վերին» եկեղեցին, որ մերժում է բողոքական կոչուել, և կոչում է իրան կաթոլիկ եկեղեցի Քրիստոսի, որպէս մի անկախ ճիւղ Կաթոլիկէ Եկեղեցու, ուրիշ տեղ է որոնում միութիւնը, այն է Արևելքի եկեղեցիների մէջ։ Բարեկամական յարաբերութիւններ հաստատել այդ եկեղեցիների հետ, ճանաչուել նրանցից որպէս անկախ և առաքելական եկեղեցի և անդամ ուղղափառ ընդհանրական եկեղեցու, և այսպիսով Հռոմի դէմ հաստատուն ոտնատեղ ճարել — այս է ահա անգլիական եկեղեցու ցանկութիւնը։ Այս եկեղեցու պաշտօնէութեան սրտի ուղեղիքն այն է,

որ արևելեան պատրիարքներից կամ սինոդներից մինն ու մինը—լինի այդ Հայոց Կաթուղիկոսը, Ասորիների կամ Հաբեշների պատրիարքը կամ Յունաց և Ռուսաց սինոդ կամ բոլորը միասին անգլիական ձեռնադրութիւնը կամ եպիսկոպոսութիւնը որպես առաքելաւանդ ճանաչեն։ Այս կէտն է ահա, որ պնդելով պնդում են եպիսկոպոսականները և որ մերժում է կաթոլիկ եկեղեցին։ Հռոմը պընդում է թէ անգլիական ձեռնադրութիւնն անկախ և առաքելաւանդ չէ, այլ ապօրինի՝ Հենրիկոս Ութերորդի օրից սկսած։

Անգլիական եկեղեցին դաշնակիցներ է որոնում Արևելքի եկեղեցիների մէջ Հռոմի դէմ։ Իւր կողմից նա այդ եկեղեցիներն ընդունում է որպես ուղղափառ և պահպանող առաքելական աւանդութիւնների, և սորանով հիմնապես ջոկուում է միւս բողոքական եկեղեցիներից որոնք այս եկեղեցիները, կաթոլիկն էլ մէջը հաշուած, համարում են սկզբնական առաքելական եկեղեցու նախատիպարից հեռացած, ուստի և վերանորոգութեան կարօտ, դաւանական և ծիսական մտքով։ Հետևապես անգլիական եկեղեցին միսիոնարներ չի ղրկում արևելքի հին քրիստոնեաներին—հայերին, ասորիներին, յոյներին ևլն., եպիսկոպոսական դարձնելու, եթէ այսպիսի փորձեր եղել են երբեմն երբեմն, մանաւոր նշանակութիւն են ունեցել և բղխել են գլխաւորապես «ստորին» կամ աւետարանական եպիսկոպոսական եկեղեցու կողմից։

Պատմենք երկու խօսքով թէ ինչ վիճակի մէջ է այս յարաբերութիւնը։ Ռուսաց պրաւոսլաւնիյ եկեղեցու և անգլիական եկեղեցու մէջ բարեկամական յարաբերութիւնները վաղուց են սկսուած և այժմ բաւական յառաջացած են։ Անգլիական աստուածաբանական և կրօնական երկերը թարգմանուում են ռուսերէնի Սինոդի հաճութեամբ, մինչդեռ նոյնը չի կարելի ասել անգլիական միւս բողոքական, որպես նաև գերմանական կրօնական երկերի մասին։

Անցեալ տարի Օքսֆորդ եղածս միջոցին, առիթ ունեցայ այս մասին խօսելու «վերին եկեղեցու» մի քանի անդամների հետ, և նկատեցի, թէ որչափ ուրախ են նրանք Ռուսաց սինոդի կողմից բարեկամական նշաններ տեսնելով։ «Անգլիական և Ռուսաց եկեղեցիների յարաբերութիւնները վերջին յիսուն տարիների ընթացքում»*) խորագրով գրքի մէջ, յառաջ են բերուած ռուս յայտնի աստուածաբան Խամեակովսկու գրած նամակները հանգուցեալ պրոֆեսոր Ուլլիամ Պամերին։—Այս նամակների մէջ Խամեակովսկին մեծ համակրութեամբ է խօսում անգլիկան աստուածաբանութեան և եկեղեցու մասին։ Մտադրութիւն կայ նաև Օքսֆորդի կամ Քէմբրիջի համալսարանում մի յատուկ բաժին բանալու ռուս եկեղեցու աստուածաբանութեան և աստուածաբան ուսանողների համար։

Ասորոց եկեղեցու հետ յարաբերութիւնն աւելի սերտ է և գործնական։ Քենտրբրիերի արքեպիսկոպոսի նախագահութեամբ մի ընկերութիւն է կազմուած այս նպատակով։ Ընկերութեան անունն է „Archbishop's Mission to the Assyrian Christians“ (Արքեպիսկոպոսական առաքելութիւնը Ասորի քրիստոնեաների մօտ)։ Այս ընկերութիւնը պահում է Ուրմիայում մի միջնակարգ դպրոց ասորի պատանիների համար, որոնք պատրաստուում են իրանց եկեղեցուն ծառայելու։ Երկու հարիւրից աւելի սաներ ունի այս վարժարանը։ Տասնումեկ անգլիացի եկեղեցականներ և «քոյրեր» զբաղուած են այս գործով, որպես նաև ընդհանրապես կրթութեան գործով Ասորիների մէջ։ Ընկերութիւնը հաստատել է մի տպարան ասորերէն (նեստորական) տառերով և հրատարակել է արդէն բազմաթիւ ասորերէն գրուածներ։ Տարեկան մօտ 30·000 րուբլի է մսխուում այս միսիոնի համար։ Ընկերութեան տարեկան տեղեկատուի մէջ կարդում ենք. «Արևելքին ծանօթ ամէն մի անձ կիմանայ թէ որպիսի գերազանց ազդեցութիւն է ունեցել այս միսիոնը, և թէ որքան բարձրացրել է անգլիական եկեղեցու յարգը։ Նա ցոյց է տուել թէ գոնէ մի եկեղեցի կայ, որ պատրաստ է օգնել մի աղգի աղքատ եկեղեցու, առանց որևէ քաղաքական նպատակների կամ մարդասիրական ձգտումների, և միակ նպատակ ունենալով օգնել նրանց, որոնք իրանք իրանց օգնելու անկարող են»։

Նոյնպիսի յարաբերութիւններ, թէև սահմանափակ չափով, սկսուած են յաջողութեամբ Վլոտի և Յակոբիկեան եկեղեցիների հետ։

Հայոց եկեղեցու հետ անգլիական եկեղեցու բարեկամական յարաբերութիւնները սկսուած են վաղուց, բայց մինչև այժմ մնացել են լոկ գաղափար և եթէ որևէ գործնական կերպարանք չեն ստացել, պատճառը մենք ենք եղել։ Վերջերս գերազանց հանգամանքներ ներկայացան բարեկամական մօտիկ կապեր կապելու երկու եկեղեցիների մէջ, բայց չէ՞ որ հանգամանքներից օգտուող էլ պէտք է։ Օքսֆորդի համալսարանում այսօր մենք երկու չորս ուսանողներ պիտի ունենայինք, եթէ միայն մեր կողմից մի փոքր ցանկութիւն և ջանք լիներ։

*) „Relations between the English and Russian Churches during the last fifty years“, by W. F. Birtbeck. London. 1894.

«Կռունկի» 1860 թուի օգոստոս համարում կարդում ենք մի անգլիացի քահանայի ներկայանալը Վրաստանի և Իմերէթի ժամանակի արքեպիսկոպոս Հ. Ջալալեանին և նրա միջոցով անգլիկան եկեղեցու եկեղեցականութեան յարգանքի և սիրոյ ողջոյնները տալը Հայոց Հայրապետին։ Այս նուիրակի յատուկ նպատակն էր իւր հետ հայ երիտասարդներ տանել Անգլիա, որպէս զի բարձրագոյն կրթութիւն ստանան և ետ դառնալով Հայոց եկեղեցու մէջ պաշտօնի մտնեն։ Ինչ ինչ պատճառներով նուիրակն ստիպուած էր ետ դառնալ և նրա օգտաւէտ առաջարկը մնաց չգործադրուած, այն օրից մինչև այսօր։

Ամերիկայում, ուր այսօր ութ հազարի չափ աստանդական հայեր կան, և ուր եպիսկոպոսական եկեղեցին ամենից հարուստն է և ընկերապէս ազդեցիկը, Ունիթարեան եկեղեցուց յետոյ, հայերը հարկաւոր ժամանակ հիւրընկալութիւն են գտնում եպիսկոպոսական եկեղեցիների կողմից։ Նիւ Եօրկում հայոց պատարագը կատարուում է եպիսկոպոսական եկեղեցու մէջ։ Բոստոնում, երկու տարի առաջ, Ս. Պօղոսի Մայր եկեղեցու եպիսկոպոսը մարգասիրաբար մեր տրամադրութեան տակ դրեց իւր եկեղեցու փառաւոր մատուռը, ուր մենք կանոնաւոր պաշտօն էինք կատարում հայ ծէսով, հայադաւանների և բողոքական հայերի համար միասին։ Այս «միացեալ» պաշտօնը շարունակուում է մինչև այժմ։ Նոյնպիսի հիւրընկալութիւն գտնում են հայերն Ամերիկայի ուրիշ քաղաքներում, ուր հայոց մատուռ չկայ։ Միակ հայ եկեղեցին ամբողջ Ամերիկայի հայերի համար Մասաչուսէթցի Լին քաղաքումն է, ուր և նստում է հայոց հովիւը։

Վերև յիշուած ասորական առաքելականութիւնից աւելի ընդարձակ նպատակներ ունի մի նոր, աւելի ճիշդ ասած, վերստին նորոգուած ընկերութիւն, որ կրում է «Արևելեան եկեղեցու ընկերութիւն»—Eastern Church Association - անունը։ Ընկերութիւնը վայելում է Եորկի արքեպիսկոպոսի, որպէս նաև բազմաթիւ անգլիացի և ամերիկացի եպիսկոպոսների, հովանաւորութիւնն ու աջակցութիւնը։ Նախագահն է Ռիդինգի եպիսկոպոսը, քարտուղարը—Պատ. Հեդլամ—Rev. A. C. Headlam, All. Souls' College, Օքսֆորդում, ուր է նաև ընկերութեան կենդրոնավայրը։

«Արևելեան եկեղեցու ընկերութեան» առարկաները են.

1. Արևելքի քրիստոնեաների վիճակի և կացութեան մասին տեղեկութիւններ տալ, ազդելու համար հանրային կարծիքի վերայ և այսպիսով նրանց դրութիւնը բարւոքելու համար։

2. Արևելքի քրիստոնեաներին ծանօթացնել Անգլիկան եկեղեցու վարդապետութեան և սկզբունքների հետ։

3. Օգտուել նախախնամութեան ընծայած ամէն հանգամանքներից միութիւն հաստատելու ուղղափառ եկեղեցու հետ, և բարեկամական յարաբերութիւններ Արևելքի միւս հին եկեղեցիների հետ, («Ուղղափառ» այստեղ նշանակում է Հայոց, յունաց և ռուսաց եկեղեցիները)։

4. Նպաստել, որքան հնարաւոր է, ուղղափառ եկեղեցու եպիսկոպոսներին բարձրացնելու իրանց հօտի հոգևոր բարեկեցութիւնը։

Պարզ է, որ այստեղ ոչինչ չկայ արևելքի քրիստոնեաներին անգլիկան դարձնելու մասին, ընդհակառակն ամէն ինչ թէև լուռ ուղղուած է Հռոմի եկեղեցու դէմ։

Ի՞նչ պիտի լինի մեր եկեղեցու բռնելիք դիրքը Արևմտեան քրիստոնէութեան այս վերջին ժամանակներս յաճախ երևան եկող միութենական (ոչ միացման) ձգտումների հանդէպ։ Պատմութիւնը գծել է նրա բռնելիք ուղղութիւնը։ Հայաստանեայց Եկեղեցին, որ արիւնի գնով պահել է, և ճգնում է պահել իր ազգային անկախութիւնը։ միշտ բարեկար է եղել Քրիստոսի անջատուած և իրար թշնամի քոյր եկեղեցիների միութեան։ Մեր ժամանակում այնքան խօսուում ու գրուում է միութեան մասին Ովկիանոսի թէ այս թէ մանաւանդ այն երեսին, բայց համարձակ կարող ենք ասել որ քրիստոնէական միութեան համար աւելի աղնիւ ձայն չի հնչուել, քան ինչ որ հնչեցրեց Տարսոնի Փաղը երեք հարիւր տարի առաջ, յոյն ու հայ եկեղեցիների միութեան առիթով։ Իւր ժամանակը նրան չհասկացաւ։ Եւ ի՞նչպէս կարող էր հասկանալ, երբ քրիստոնէական միութեան գաղափարը նոյն իսկ մեր գարում քրիստոնէական իդէալով ապրողների սեպհականութիւնն է միայն, որոնց թիւը դժբաղդաբար դեռ շատ շատ քիչ է։

Ե. Յ.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ 1895 ԹՈՒԱԿԱՆԻ։

«Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի զՏէր աղաչեսցուք»։ աղօթում է ամենուրեք քրիստոնէական եկեղեցին և ամէն տարուայ վերջին դիտուում է մատուցանում առ Բարձրեալն նորա շնոր-

հած խաղաղութեան համար։ Այս տարի ևս բոլոր աշխարհների քրիստոնեայ եկեղեցիք գոհացան ի Տեառնէ անցած տարուան խաղաղութեան համար և ուրախացան առաջիկայ տարուան խաղաղութեան աւհաւատչեաններն ստանալով. միայն մի եկեղեցի չը վայելեց այդ շնորհն, միայն մի եկեղեցի դեռ ևս շարունակեց ու շարունակում է իւր անվախճան մաքառումն անհաւատութեան հալածանքների դէմ։ Միայն նահատակ հայ եկեղեցին էր, որ անցեալ տարուան ընթացքում զրկուեցաւ խաղաղութիւնից և իւր որդոց արեան հոսանքները տեսաւ, իւր սըրբավայրերի վերջնական անկման ու սրբապղծութեան ականատես եղաւ. բայց անընկճելի է քրիստոնէական ոգին և անսասան է հայ քրիստոնէի հաւատը՝ նա թէպէտ այսօր թուլանում է արեան մէջ և ճզակոտոր ընկած կոխան է դարձած, սակայն էլի անպակաս է նրա ներքին ոյժն ու հաւատը՝ ըստ «Ի մ է վ ր է ժ խ ն դ ր ու թ իւ ն, ա ս է Տ է ր»։ և եկեղեցին հաւատում է դրան և ինքը կրկին աղօթում. «և ևս խաղաղութեան զՏէր ա ղաչեսցուք»։

Անցած տարին Պ ա թ ո լ ի կ ե կ ե ղ ե ց ու համար մի նշանաւոր տարեշրջան և տարեգլուխ էր։ Վատիկանի ժողովի 25-ամեայ յոբելեանի տարին պապականութիւնն իրեն այնքան ուժեղ զգաց, որ կրկին փորձեր արաւ ընդհանուր եկեղեցական միութիւն հաստատելու իւր հովանու ներքոյ։ Լևոն ԺԳ. պապն անձամբ ոգևորուած լինելով «մ ի ա ա ք ե լ ա կ ա ն և կ ա թ ո ւ ղ ի կ է» եկեղեցու գաղափարով, հրաւէր կարդաց բոլոր միւս եկեղեցիներին և հերձուածներին, գալ և միանալ հռոմէական եկեղեցու հետ, Վատիկանի գերին, Հռոմի քահանայապետը, որ 25 տարիէ ի վեր Վատիկանի պարըսպից ոտքը դուրս չէ դրել, համաձայնութիւն ուներ արևելեան և արևմտեան եկեղեցիների գերիշխան լինելու ձգտումները կրկին հրապարակ հանել, առանց սակայն հրաժարուելու և աշխարհական իշխանութեան ձգտումներից։ Թէպէտ և այդ աշխարհական ձգտումներն արտայայտուեցան միայն իրրև բոլոր Իտալական կառավարութեան Հռոմի առման յոբելեանը տօնելու առթիւ, բայց այդու կրկին հաստատուեցաւ այն փաստը, որ պապերն երբէք մտադիր չեն մոռչաչափ անգամ հրաժարուելու իրենց աւանդական ընթացքից։

Հէնց այդ աւանդական հաստատութիւնն էր, որ արգելք եղաւ և միշտ կը լինի Հռոմի միաբարական առաջարկներին, Թէպէտ և Լևոն ԺԳ. արևելեան եկեղեցու սահմանադրութիւն կոչուած իւր կոնդակում ցոյց տալ կամեցաւ, թէ ինքը միաբարութիւն ասելով՝ եկեղեցական ձուլումն չէ հասկանում, սակայն կաթոլիկ կղերի գործերը խանգարեցին նորա խօսքերի ազդեցութիւնը։ Միաբարական առաջարկութիւններին խիստ պատասխաններ եղան Ս. Պօլսի տիեզերական պատրիարքից և անգլիացոց ամբողջ եկեղեցականութիւնից։ Պապը բացի տեսական առաջարկներից և գործնական ճանապարհով կամեցաւ արևելեան եկեղեցիներից մասն կորզել, ուստի մեծամեծ գումարներ նշանակեց արևելեան դպրոցների համար և այժ տուաւ արևելեան քարոզչութեան։ Պապական եկեղեցու ներքին պատերազմներից նշանաւոր էին նրա դիմադրութիւնները Հունգարիայում և Ֆրանսիայում։ Երկու կաթոլիկ երկրներում ևս օրէնսդրական ճանապարհով հետ կ՚հետ նուազեցնում են եկեղեցու ազդեցութիւն։ Քաղաքագիտական ասպարիզում մի մեծ յաղթութիւն տարաւ նա Իտալիոյ կառավարութեան վրայ, խանգարելով Փորթուգալիոյ թագաւորի այցելութիւնը Հումբերտ թագաւորին։

Հռոմի քահանայապետն ևս իւր ձայնը լսելի արաւ յօգուտ հայերի, որոնցից մի մասն և իւր հօտի մէջ են։ Այդ համակրութեան ձայնը թէպէտ և խիստ պատռնական էր, այնու ամենայնիւ արժանի է արձանագրուելու։

Յօգուտ հալածուած հայերի նուէրներ ևս եղան Հռոմից և մենք շնորհապարտ կը լինենք Լևոն ԺԳ.-ին այդ նուէրի համար, եթէ այդ դրամը հաւատոյութեան համար գործ չը դրուի, որի մասին պատմական փորձերից ստիպուած ենք կասկածելու։

Արևելեան եկեղեցիների մէջ Օրթոդոքս եկեղեցին, մասնաւորապէս իսկ տիեզերական պատրիարքութիւնն և Երուսաղէմի պատրիարքութիւնն անշարժ են մնաց՝ լ իրենց վիճակում։ Տիեզերական նոր պատրիարք Անթիմոս Ը. անցեալ տարուան սկզբին գահ ամբառնալով բաւական յաջողութեամբ ընդդիմացաւ տաճիկ կառավարութեան նոր ոտնձգութիւններին. այդ մաքառումն աւելի դիւրացաւ, երբ Խարձր Դուռն հայերին ի հեճուկս սկսաւ առանձին լինամբ ցոյց տալ յունաց պատրիարքին։ Այդ ընթացքով այնքան գրաւուեցաւ Անթիմոս պատրիարքը, որ քիչ էր մնում տաճկաց բարբարոսութեան պաշտպան հանդիսանայ. սակայն ժողովուրդը թոյլ չը տուաւ այդքան թիւրըմտել ընթացքով յառաջադիմելու։

Ալէքսանդրիայում պապական նոր պատ իարքութեան հիմնարկութիւնը մեծ հարուած է օրթոդոքսութեան, որի դէմ նա դժուար թէ մաքառելու ոյժ ունենայ։

Արևելեան եկեղեցիներից հին ասորական եկեղե-

ցին ևս իւր ձայնը լսելի արաւ Եւրոպային, մանաւանդ ֆրանսիացոց, որոնք յատուկ պաշտպան են համարում Ս.սորիքի։ Հայոց դէմ սկսուած հալածանքներից բաժին հասաւ և ասորոց, որոնք Դիարբէքիրի, Ուրֆայի և Սիւրիայի այլ վայրերի խժդժութեանց ժամանակ վնասներ կրեցին։

Հարեչներն սկսում են հետզհետէ լուսաւոր աշխարհի ուշադրութեան արժանանալ. անցեալ տարի հարեչ եկեղեցականների մի պատգամաւորութիւն եկաւ Ռուսաստան։ Այդ պատգամաւորութեան նպատակներից մէկն էլ եկեղեցական միութիւնն էր ռուսաց հետ։

Արևելեան քարոզչութեան սահմանները դարձեալ կրկնուեցաւ մի յաճախ պատահող երևոյթ։ Հինացի խուժանն գրգռուելով մոլեռանդացած յարձակուեց քրիստոնեայ հինացիների և քարոզիչների վրայ և մեծ կոտորած արաւ նրանց մէջ։

Մինչդեռ յաղթուած հինացիք քրիստոնէութիւնից կամեցան վրէժ առնել, յաղթող Ճափոնեան քրիստոնէութեան քարոզութեան համար աղաչալի առաքելութիւն անգամ կազմել սկսաւ։

Եկեղեցական կեանքն աւելի հարուստ էր Եւրոպայի և Ամերիկայի ոչ կաթոլիկ երկրներում։ Անցած տարին նշանաւոր էր հին կաթոլիկների համար իրրև մի դարաշրջան, վատիկանի ժողովի դէմ բողոքող մի քանի նշանաւոր կաթոլիկ ուսուցչապետներ, իրենց պարագլուխ ունենալով Միւնխէնի աշխարհահռչակ գիտնական Դէօլլինգեր ուսուցչապետին, 25 տարի սրանից առաջ հիմը դրին հին կաթոլիկութեան, որ պապի գերաւորութիւնն ու անսխալականութիւնը մերժելով կամենում էր պահպանել հին եկեղեցու աւանդութիւնն ու վարդապետութիւնը։ Պապականները չէին կամենում հաւատալ այդ նոր հերձուածի կենսունակութեան, սակայն քառորդ դարու կեանքն այսօր առհաւատչեայ է հին կաթոլիկութեան տևականութեան։ Հին կաթոլիկներն իրենց թուով նուազ են, սակայն որակութեամբ աչքի ընկնող. կաթոլիկ ժողովուրդներից ամենից լուսաւորեալները հին կաթոլիկներն են։ Այդ նորակազմ եկեղեցին սկզբնապատճառ է եղել եկեղեցիների մէջ թիւրիմացութեանց վերացման և յաճախ կրկնուող համաժողովների. իւր քան և հնգամեայ գոյութեան յօրելեանի առթիւ այդ եկեղեցին յիշատակութեան տօնախմբութիւններ կազմեց և կրկին անգամ արձարձեց այն նշանաբանը, որին հետևել են իւր հիմնադիրները, այն է՝ մաքրել հին եկեղեցին իւր դարաւոր և աւանդական սխալներից, թօթափել Հռովմի լուծն և դիմել քրիստոնէական հնագոյն շրջանի եկեղեցուն նմանելու։

Անգլիկան episkoposական եկեղեցին ևս մեծ շարժման մէջ էր անցեալ տարի։ Անգլիկան եկեղեցականները մարդասիրութեան գրօշակը ձեռներին անցեալ տարի շարունակ քարոզում էին օգնութեան ձեռք կարկառել Ասիայում հալածուող քրիստոնէից. նրանք չը կարողացան սառնասիրտ և շահգէտ քաղաքագէտների սիրտը շարժել, որ փրկեն իսպանդ վարող քրիստոնէութիւնը Փոքր Ասիայում, գոնէ մարդասէրների գութը շարժեցին և նշանաւոր նպաստներ հասուցին հայ կարօտեալների։ Քրիստոնէական այս եղբայրասիրութեան համար Թիւրքիայի քրիստոնեաները միշտ այնքան երախտապարտ կը մնան անգլիկան եկեղեցականներին, ինչքան նրանք գժգոհ են անգլիացի քաղաքագէտների ընթացքից։

Նոյնպիսի եղբայրսիրական և քրիստոնէական ոգի ցոյց տուին և Ամերիկացիք, առանց դաւանութեան խտրութեան, և այսօր հազարաւոր տնանկներ փառաբանում են Փրկչի անունը, որի անուան երկրպագու ամերիկացիների ձեռքից հաց են ստանում։

Մեծ աղմուկ հանեց Անգլիայում և պապի միութեան հրաւիրող կոնդակը։ Անգլիկան եկեղեցականք քաջագօտի կերպիւ կռուեցան Հռովմի նոր ոտնձգութեանց դէմ և անսպասելի հարուածն յետս դարձրին։ Եկեղեցական ներքին կեանքը թէ ինչ եռանդուն գործունէութիւն ունի Անգլիայում այդ երևեցաւ Նորվիչի ժողովում, որի մասին զեկուցել ենք արդէն։

Բողոքական երկրներից Գերմանիան անմասն չէր եկեղեցական խնդիրներից. այդ երկրում առանձին նշանակութեան ստացաւ ազատամիտ աստուածաբանութեան դէմ կռիւը։ Մի քանի ուսուցչապետներ և նրանց հետևող պաստորներ այնքան հեռու են գնացել իրենց քննադատական ազատամտութեան մէջ, որ շատերը քրիստոտոնէութիւնը վտանգուած են համարում նոցա կողմից. ահա դրանց դէմ սկսուեցաւ մի մաքառում, որի միջոցին սակայն դալար փայտեր էլ չորի հետ այրել կամեցան ոմանք։

Ամերիկան իւր հարուստ հերձուածական եկեղեցիներով հետզհետէ աւելի կրօնական ձգտումներ է ցոյց տալիս։ Կրօնական կեանքն այդ երկրում մի բարոյական պատերազմի է փոխարկուել ընդդէմ մարդկային մոլութիւնների, որոնց դէմ կռիւը Ամերիկայում երբեմն մոլեռանդութեան է հասնում։ Ինչպէս Անգլիայում այնպէս էլ այստեղ մի մեծ կարիք է զգացուում քրիստոնէութեան միութեան,

սական միաբարական ձգտումներ առ այժմ խար-խափում են մութ աշխարհում: ոմանք միութեան կեդրոն են համարում Հռոմը, այլք արևելեան եկեղեցին և ուրիշները բողոքականութիւնը կամ հին կաթոլիկութիւնը: Բոլոր եկեղեցիների գլուխ և անտեսանելի Պետն Ինքը կառաջնորդէ դէպի այդ միութիւնն և մոլորեալներին ուղի ցոյց կը տայ. ուրախ լինինք, որ մարդիկ իրենք սկսել են արդէն ուղին որոնել: Քրիստոնէական եղբայրսիրութիւնն և աստուածային օրէնքն երբ թագաւորէ, այն ժամանակ ահա կը պանծայ «մի, կաթուղիկէ եկեղեցին» այժմ և յաւիտեանս:

ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ, 1895 թուականի ընթացքում:

Անցեալ տարուան ընթացքում ռուսաց եկեղեցին թէպէտ և առանձին արտօնութիւններ և օրինադրական առաւելութիւններ չէ ստացել, սակայն ներքին բարգաւաճութեան կողմից մի քայլ դէպի առաջ է անցել: Այն տարեկան հաշուից, որ տպագրուած է «Ցերկովնի վեստնիկի» այս տարուան առաջին և երկրորդ համարներում, քաղում ենք ահա հետևեալ մանրամասնութիւնները, որոնք կարող են հետաքրքրական լինել և մեր եկեղեցական ներին:

Ռուսաց եկեղեցու ս. Սինոդի անդամների մէջ բաւական փոփոխութիւններ են եղել. այս տարի սինոդը բաղկացած է հետևեալ բարձրաստիճան անձերից. նախանդամ է Պետերբ. առաջնորդ մետրապոլիտ Պալլադիյ. անդամներն են՝ առաջնորդ Կիևի մետրապոլիտ Իոաննակիյ, Մոսկուայի առաջնորդ մետրապոլիտ Սերգէյ, արքեպիսկոպոսունք՝— Նովգորոդի Թէոգնոստ, Ֆինլանդիայի՝ Անտոնիոս, Խերսոնի՝ Իւստին և Մարկելլ եպիսկոպոս:

Սինոդին կից երկու հաստատութիւնների մէջ նախապատրաստութիւն է տեսնուել առաջիկայում աւելի ընդարձակ ծաւալով գործունէութեան:

Սինոդի վերանորոգիչ մասնախումբն իրաւունք և միջոցներ է ստացել իրական հսկողութիւն ունենալու ոչ միայն սինոդի ստացուածքների վրայ, այլ և բոլոր այն հիմնարկութիւնների, որոնք ենթարկուում են սինոդին: Վերաստուգիչ յենձնաժողովը պէտք է քննէ և արձանագրէ եկեղեցական բոլոր հարստութիւնն և նրանց մատակարարութեան վրայ հսկէ:

Նոյնպէս և առանձին ուշք է դարձուած սինոդի մատենադարանի բարւոքման վրայ և միջոցներ են նշանակուած գիտական հետազօտութիւնները դիւրացնելու: Այս նպատակով այդ երկու հաստատութիւնների մէջ էլ ծառայողների թիւն աւելցուած է:

Ներքին բարեկարգութեան համար այս երկու ձեռնարկութիւններից ևս մեծամեծ բարիքներ են սպասուում: Աւելորդ չենք համարում յուշ անել, որ ժամանակ է և մեր սինոդի համար իւր պարտականութեանց այդ երկու կէտերն էլ առանձնապէս ուշադրութեան առնել: Վաղուց արդէն ժամանակ է վերստուգելու մեր եկեղեցաց և վանքերի ստացուածքների ցուցակը և աւելի ևս ժամանակ է դրանց ժամանակակից վարչութեան յանձնելու, որի կարօտութիւնն աչքի կընկնի բոլոր այն մարդկանց համար, որոնք կը կարդան Ղուշու թեմի վանական կալուածոց տեղեկագիրն մեր այս համարում: Միւս կողմից աւելորդ չէ և սինոդի գիւանի հնադարանները (archive) կարգի բերելը, ուր այնքան նիւթեր են ամբարուած մեր եկեղեցական նորագոյն պատմութեան համար:

Ռուսաց եկեղեցական թեմերի թիւն էր ցարդ 64, անցեալ տարի մէկն էլ աւելացաւ, այդ է Օմսկի թեմը: Այդ թեմի առաջնորդարանն և մայր եկեղեցին շինելու համար գանձարանից որոշուած է 10,000 ռուբլի, իսկ առաջնորդութեան ծախսն է տարեկան 33,110 ռուբլի:

Սկսած 1893 թուականից կառավարութիւնն առանձին ուշք է դարձրել գիւղական քահանաների նիւթական վիճակը բարւոքելու վրայ. այդ թուականին քահանայից ռոճկի ընդհանուր գումարին աւելացաւ 250,000 ռուբլի, 1894 թ. 500,000 ռուբլի, իսկ 1895 թուին դարձեալ 500,000 ռուբլի: Այդ գումարներից գլխաւորաբար ռոճիկներ է տալիս սինոդն այն եկեղեցաց միաբանութիւններին որոնք ժողովրդական նպաստով կարող չեն պահպանուել, մանաւանդ Ռուսաստանի սահմանագլուխներում և Սիբիրում, նոր շինուող երկաթուղու գծի վրայ: Մինչև այսօր կառավարութիւնից ռոճիկ են ստանում 3,400 միաբանութիւններ:

Վանական հաստատութիւններն ևս բարգաւաճում են հետզհետէ, վանքերի թիւն աւելանում է, կուսանոցներն աւելի են բազմանում, քան թէ արեղայարանները: Կուսանոցներն աւելանում են մասնաւորապէս կանանց ընկերութիւնների շնորհիւ, որ հետզհետէ գառնում են կուսաստուններ: Անցեալ տարի 5 նոր կանանց վանքեր են հիմնուած և նախկին 2 կանանց միաբանութիւններ վանքերի են վերածուած: Այրական մենաստան միայն 2 հատ է աւելացել անցեալ տարի: Այդ վանքերի շինութեան տեղերը ժողովուրդն է նուիրել և դրանց նպատակն էլ զուտ հոգևոր և եկեղեցական է:

Հոգևոր դպրոցների կեանքում հետևեալ փոփոխութիւնն է տեղի ունեցել. հոգևոր դպրանոցների և դպրոցների ուսուցչաց ռոճկին առհասա-

րակ աւելացել է. մինչև այժմ հոգևոր սեմինարների դասախարակների համար երկու կարգ ռոճիկ էր սահմանուած, առաջինը 750 ռ., երկրորդը 900 ռ. տարեկան ռոճիկով. անցեալ տարուանից սահմանուեցան երկու նոր կարգ ևս. երրորդը՝ 1,250 և չորրորդը 1,500 ռ. տարեկան ռոճկով։ Հոգևոր ուսումնարաններում (училище) հիմնուեցաւ երրորդ կարգի ուսուցչութեան պաշտօն 1250 ռ. ռոճկով բարձրագոյն կրթութեան տէր անձանց համար և 700 ռ. ռոճկով միջին կրթութեան տէրերի համար։ Բացի սրանցից հոգևոր դպրոցների վերատեսուչներին, տեսուչներին և վերակացուներին և նրանց օգնականներին ռոճիկ նշանակուեցաւ իրենց տուած դասերի համար։

Ամբողջ Ռուսաստանում ցարդ կային 56 սեմինարներ, որոնց վրայ 1895 թ. երկու նորերն էլ աւելացան. դրանցից մէկն յատկապէս Օսերի համար քահանայ պատրաստելու նպատակով։ Անցեալ տարի սինոդը որոշեց, որ Ռուսաստանի հոգևոր դպրոցներն ևս ամառները 2 ամիս արձակուրդ ունենան, սկսած յունիսի 15-ից մինչև օգոստ. 15։ մինչև այժմ այդ արձակուրդը տևում էր 1 ½ ամիս, բացի Նովկասից, ուր 2½ ամիս է տևում։

Հոգևոր երեք ճեմարանների մէջ կատարուած փոփոխութիւններից արձանագրելու արժանի փաստեր են, որ դրանց երեքի վերատեսուչներն էլ միաժամանակ փոխուեցան և ծառայութիւնից դուրս եկան բազմամեայ ուսուցչութիւն արած մի քանի անձինք։

Եկեղեցական ծխական դպրոցների բարգաւաճումն շատ աւելի արագ ընթացք ունեցաւ շնորհիւ կայսերական պաշտպանութեան։ Հանգուցեալ կայսր հրամանով 1894 թուին արդէն որոշուած էր 350,000 ռ. նպաստ տալ գանձարանից այդ դպրոցներին, 1894 թ. դեկտեմբերին հրամայուեցաւ 1895 թուականի համար 700,000 ռ. նպաստ նշանակել, իսկ 1895 թ. յունիսի 5-ին հրաման եղաւ առաջիկայ տարուանից նշանակել գանձարանից 3,279,145 ռ. տարեկան նպաստ։ Բացի այս նիւթական քաջալերութիւնից, դպրոցներին և բարոյական քաջալերութիւններ եղան. այդ տեղերում ծառայողներին մի քանի արտօնութիւններ շնորհուեցան։ Անցեալ տարուան ապրիլի 17-ին հրամանով երկդասեան ծխական դպրոցները համարուեցան երրորդ կարգի դպրոցներ զինուորական ծառայութեան վերաբերութեամբ։

Այս տարուանից ծխական դպրոցների կազմակերպութիւնը բոլորովին կը կատարելագործուի. բացի թեմական տեսուչներից կայ և մի ուսումնարանական յանձնախումբ սինոդին կից, որ պիտի հրատարակէ «Նարօդնոյե օբրազովանիե» անունով մանկավարժական մի ամսագիր։ Ծխական դպրոցների բազմանալով զուգընթացաբար սկսան բազմանալ և ժողովրդական ու դպրոցական գրադարանները և ընթերցարանները։ Այս հիմնարկութիւնները գեռ ևս խեղճ վիճակի մէջ են, գրադարան կոչուածների մէջ 50—100 գիրք հազիւ կայ, շատերն էլ առանձին և յատուկ սենեակներ չունեն։ Ծխական գրադարանների պակասութիւններից մէկն էլ յարմարաւոր ժողովրդական գրքերի չը լինելն է. այդ պակասութիւնը վերացնելու նպատակով Տրոյցէ—Սերգիեւի հարուստ վանքն ամենայն յարմարութիւններով մի սեփական տպարան է հիմնել, որ արդէն 20-ի չափ տետրեր է հրատարակել։

Եկեղեցական կեանքի զարգացման շատ նպաստում են և մասնաւոր կրօնական և բարոյական ընկերութիւնները ու ծխական հոգաբարձութիւնները։ Առանձին առանձին եկեղեցիք սկսել են ապաստարաններ, որբանոցներ և աղքատախնամ հաստատութիւններ հիմնել, որոնց թիւը թէպէտ քիչ է, բայց ժամանակով յոյս է տալիս բազմանալու։

Ռուսաց ժողովուրդը միշտ յայտնի է եղել իւր առատ եկեղեցական նուէրներով, անթիւ և անհամար են ամենայն տարի յօգուտ եկեղեցւոց եղած նուէրները։ Պետերբուրգում կառուցուելիք մի նոր եկեղեցու համար եղած նուիրաբերութեան գումարը հասել է 51,772 ռուբլու։ Այդպէս ժողովարարութեամբ թոյլ է տուած շինել և մի եկեղեցի Փինլանդիայում, մին Լիբաւում, մին Փոթիում, մին Պսկովի մօտ և մէկն էլ Հինաստանի սահմանում՝ Զայսան քաղաքում։

Արդէն իսկ հիմնարկուած են 4 մեծամեծ տաճարներ, մին Պետերբուրգում, մին Ռէվելում, մին Աստրախանում, մէկն էլ Սամարղանդի նահանգի Ջիզակ քաղաքում։ Արտասահմանում ևս երեք նոր եկեղեցիք են հիմնուել և օծուել անցեալ տարի, մէկը Փրանսիայի Կանն քաղաքում, միւսը Վիեննայում և երրորդը Շտուտգարտում։

Ռուսաց կղերը անցեալ տարուան ընթացքում կորցրել է երեք եպիսկոպոս և երեք նշանաւոր քահանայ և վարդապետ։

Եկեղեցական հաստատութիւններից մի քանին յօբելեաններ են ծծել, որ մենք էլ արդէն յիշեցինք «Արարատի» անցեալ տարուան քրոնիկոններում։

Ռուսաց միսսիոնարական ընկերութեան ծախքն եղել է անցեալ տարի 1,298,389 ռ. 56 կ. այդ գումարով պահուել են 102 միսսիոնարական կայաններ և 378 դպրոց։

Ն. Ք.

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

ՓՇՐԱՆՔ Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ՇԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՑ.

Միքայել Նալբանդեանցի ձեռքով գըրուած մի փոքրիկ ուրուագիծ (8⁰) տետր անդեալ տարի մեծապատիւ պ. Յ. Խոզդանեանը նուիրել է Նորին Վ. Եհտիառութեան Նոր Նախիջեւանում եղած ժամանակ։ Այդ ձեռագիրը գտնուած է 1884 թուականին տէր Յարութիւն Գևօքչեանի թղթերի մէջ։ Ձեռագրիս բովանդակութիւնն է. նախ մի նամակ առ տէր Յարութիւն քահանայն, ուր խօսում է նոր հայերէնի իրաւունքների մասին. նամակի վերջը յանձնում է իւր բարեկամին հեռևեալ բանաստեղծութիւնները, որոնց նա կոչում է «նոր լեզուի տղայութեան հասակի յիշատակարանք», յոյս ունենալով, որ տէր Յարութիւնն անկորուստ կը պահէ այդ յիշատակարանները, և կորստի չի մատնիլ. ինչպէս ինքն հեղինակն է ասել իւր այլ երկերի վերաբերութեամբ։

1) Ձերքեզի երգ (Պուշկինից)։ «Գետը դընում է կատաղած» ...
2) Դեանք։ «Կեանք երջանիկ քեզ ամէն մարդ» ...
3) Մուսայից մուսային։ «Մուսա գողարիկ շարժիր անոյշ» ...
4) Վազող ջրին։ «Խաւակ ջուր վազուկ ինչ կլինէր արդեօք» ...
5) Ուսանող ու մեծատուն։ «Աստանդագ վերայ առնել դատաստան» ...
6) Մտածութիւն։ «Ընդան օրերս ախորժութենով՝ չտեսայ մի բարեկամ»...
7) Մարգարէ (Լերմնտովի)։ «Յաւերժ ինձ այնօրից երբ» ...
8) Մտածութիւն։ «Ո՛վ փոքր հոգի մարդ հոգածին, ա՛ն խաղալիկ կրքերի» ...
9) Պալեստինու ոստ (Լերմնտովի)։ «Սա՛ ինձ ոսոգ պալեստինական» ...
10) Մտածութիւն։ «Պատուհանում նստած միայն զմայլում է իմ հոգին» ...
11) Բանաստեղծ։ «Ո՞անի բանաստեղծը չունի մուսայից» ...
12) Փիզիկայի քննութիւն (նուէր Ընանիա Սուլթանշահի)։ «Հասաւ մեզ ուրախութիւն» ...
13) Օտարի գերեզմանի վերայ։ «Ձեմ կարող այժմ բաց աչքով նայել մեր թըշուառ կրքին» ...
14) Աստուած (Լերմնտովի)։ «Ո՛վ երկանայ՝ին խաղաղութիւն, որ մեր խելքով չես չափում» ...
15) Վէշ։ (Լերմնտովի)։ «Միանգամ ինչպէս եղաւ ազգական սարերի մէջ» ...
16) Մտածութիւն (նուէր պ. Կարապետեանի և Խերբերեանի)։ «Գարնան վարդը ինձի պէտք չէ» ...
17) Հոգեվարք (8 փետր. 1855 ամի)։ «Ընկճած խորնարհում է կամաց կամաց»...
18) Արքատ։ «Յնծա՛ Արբատ ուրախացիր շքեղ դէմքդ փայլեցուր» ...
19) Նուէր Ամիրեանի։ «Ասա՛ մուսա ինչպէս երգեմ» ...
20) Վեցերորդ մի շնար։ «Եւրոպացոց առ հասարակ քաղաքական մի ծէս էր» ...
21) Ցոյս։ «Շատ տարիներ շատ օրեր» ...
22) 18 փետրվարի 1855։ «Սև կնքած, սևով ներկած սև լուրը»...
23) Լսարան։ «Այն ինչ տուն է, այն ինչ տեղ է» ...
24) Գարնան միտ Մարտի 2. 1855։ «Վեզ բարով զուարթուն» ...
25) Ճշմարտութիւն։ «Մարդ իմացիր դու աշխարհի» ...

Այս քան և հինգ ըստ մեծի մասին ինքնուրոյն ոտանաւորներից յետոյ, որոնցից շատերը, ինչպէս ընթերցողը կը տեսնէ, տպագրուած է Մոսկուայի «Հանդէս գրականական և պատմականի» մէջ տետրի վերջին երեսում գըրուած է երկու տող մի «Տէր ողորմեա»։ Նոյն երեսի ստորոտում գրուած ծանօթութիւնից տեղեկանում ենք, որ այդ ոտանա-

ւորը շարադրել է Նալբանդեանը իւր մահուանից քիչ առաջ։ Այդ աղօթքը յայտնի է եղել Նոր Նախիջևանում, սակայն ձեռագրի մէջ այդ տողերը գրող մեծարգոյ պ. Վ. յաւելով յայտնում է, որ ինքը միայն այդ երկու տունը գիտէ, շարունակութիւնը մոռացել է։ Ահա այդ «Տէր ողորմեան»։

«Աստուած հզօր, երկայնամիտ,
Լուր քաղճանաց մեր միամիտ
Հայս օգնութիւն թշուառ հային,
Հալածէ մեր հար թշնամին։
Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛։

. . . . . .
. . . . . .

Եւ թէ մօտ է մեր օրհասը
Եւ մեզ սպասէ դառն թասը,
Գոնէ տուր մեզ արիւթիւն
Վըրկայ լինել մեր հաւատոյն։
Տէր ողորմեա՛...

Ն. Ֆ.

ՆՈՐ ՏԱՐԻ

(Նեկրասովից)։

Մաշուում է կեանքըս, հալուում ամէ ցամ։
Տըկար է միտքըս, սառչում է արիւն ...
Ես, Մա՛յր հայրենիք, կ'իջնեմ զերեզման՝
Ըզտեսած քո՛ղգը քո ազատութիւն։

Բայց՞ ես կ'ուզէի – գէթ իմ օրհասին
Դու ոտ կոխէիը հաստատ ճանապարհն,
Տանջանքից յետոյ դու քո առաջին
Տեսնէիը քացուած քո օրը պայծառ։

Կ'ուզէի—գէթ այժմ հասցնէը քամին
Հայրենի գիւղից մի՛ ճայնիկ միայն,
Որ ինձ հըրերէը նոր քօթ ցաւագին
Դառն՝ արտասուքի, ծովացած արեան ...

Ց. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.

ՆՈՐ ՏԱՐԻ։*

(Պատկեր Շիրակի գիւղական կեանքից։)

Իրիկուայ մալի ալֆի վաղդ վարժատնէն տուն էի դառնում։ ցուրտ, Ղարախաչու պաղ քամին կատաղած փչըմ էր ու ձուռնը վերևէն քուլայ—քուլայ թափըմ էր։ Ձեռքերս սառել փէտ էին կըտրել։ ոչ կրնըմ էի դիպա բերանս տանիմ, փչիմ, տաքցնիմ, ոչ էլ ղոլդուղիս տակը դնիմ։ չունքի որ, մէ ձեռքս չանդէս էր՝ մէկըը մենծ մայրենիս, գօքս ու դաւթներս, մէկել ձեռքս էլ կաղամբաս ու ղալամս։ Էդ չէշիտ, թրջուած շան դող տալով՝ հասայ տուն, գսի գուռը բացի, մեայ շուաքը, տան գուռն էլ որ չբացի՝ պ'րին բէյրին էդայ ու մնացի. ինչիս որ մժեղներու բունը քանդես ու ընդոնք իրար անցնին ու խառնուին իրար, որը հաւկիթները փախցնէ, որը էս ծակէն էլնի էն ծակը մտնի, էն չէշիտ էր մեր տնեցոց հալը. որը գունտ էր կըըմ, որը ձէթ էր բերըմ, որը լախանի թիփերն էր իստըկըմ ու տօլմա փաթթըմ։ Մենծ հօրողբօրս կնիկն էլ հարս-ապղայիս ու պիճի-անայիս հետ փէշխուանի տակը նստել ու գաթի գնդերը բանըմ էր, օխլաւըմ ու ձէթ քսըմ, ծփծփըմ, սարըըմ գաթի իղէքը։ Խանըմ-ապղան գաթի խորիչն էր տրորըմ։ Հարս-խաթունը թընդրի մոխրին էր քաշըմ ու հայհայն էր ընկել վառելու. պըտի հարսն ու աղջըկներու կէսն էլ բոլրուել էին մենծ փէշխուանի չորս կողմն՝ լօրի ու կարթօլ էին իստրկըմ։ Աղջկներու մնացած կէսն էլ տան մէջ մօրպետութենն էին էնըմ, տանըմ էին, բերըմ էին, տան մէջի աքան ցաքան թափած բաները ժողվըմ, աւլըմ էին։ Մամս էլ էրկան օխլավիմ ձեռն առած տան մէջը տընկըրնկալով մտն էր գալըմ, ինչղ որ իրղտներու վրէն վերակեցուն, ու բաղի բաղի ճըվըմ էր. «Աղջի, Զարթար, գաթէքուն լաւ ձէթ քսէ, որ համով էղնին. Գիւլի ջան, թէզ էրէք դուր էլ լօրին իստրկէք, պրծէք, թնդիրը վառաւ» ու ես ինչ գիտեմ էս չէշիտ հազար ու մէ բան։ Սարօ՞ամիս էլ վերցրել էր մէ էրկա՞ն սրղըմ, էդ սրըղի դլխուն փաթթել էր ազմ չուլ ու մուլ, ընդուր վրէն էլ գարէ ալուր էր լցել ու տան մրով սևցած խոշտներուն քօթ-քօթ էր գարկըմ։ Մէննակ ես էի, որ պէլացել մնացել էի ու ես ընձի ընձի զարմանըմ էի թէ ընչի հըմար ին էս քուլլի։ Մէկ էլ մտքովս անցաւ թէ չէղնի ախօրս նշանել ին, ու ուրախութենէս էլ չիմացայ թէ ինչ էնեմ։ Գրքերս, կաղամբար—մաղամբարս մէ կողմ թափի ու վաղի մամիս օտնները փաթթուայ ու ըսի. «Մամի ջան, էս ընչի՞ հըմար ին էս քուլլի, էս ի՞նչ թադարուկ էք տեսնըմ»։

* Գ. Շեմմարանի վարչութեան թոյլտուութեամբ տպագըրում ենք այս պատկերը, որ գրել է Զ. դասարանի աշակերտ Շ. Մովսիսեանը եւ կարդացել աշակերտական գրական երեկոյթին։ Խմբ.

—Ո՜հ, բալա ջան, եկար, ըսաւ մամս. Էգուց կաղինդ է, չիտե՞ս, ես քուլլի կաղընդի հըմար է։

—Էգուց կաղինդ է՞, ըսի ու խելառ Թօղու պէս վեր-վեր Թռայ, որ ըդման է՝ խալֆիս խալաթ տանիմ կը էգուց։

—Հա՛, ղուրբան էղնիմ քեզի, դու լա՛ւ կարդա, ըսաւ մամս, լաւ տղայ էղի, խալֆիդ խալաթ էլ եմ սարքել. ջուխտ խէտ գուլբայ, յիրէք ջուխտ գաթայ, մէ աղուղմ ու Հետը մարմէմ լիքը մէյվայ. Էգուց յորեկվընից յետև առ ու գնա խալֆիդ կաղինդը շնհաւորէ։

Էդ հադաղնդայ աչքս ընկաւ փէշխուռնի վրայ մէ մենծ գաթիմ գընդի, որ ըսեմ որ՝, հըմա Թէ Նարօ ամուս փաթխի չափ կար։

—Մամի ջա՛ն, մամի, հոգուդ մեռնիմ, էն ընչի հըմար է, էն մենծ գուռնդը, հարցրի։

—Էդիկ տարին է, զատէդ առնիմ, ըսաւ մամս։

—Տարին է Թէ որն է՞։

—Էդ կաղընդի տարին է, ըտուր մէջ փարա կը դնենք ու ըդման սաղ կեփենք, յետև տանը քանի հոգի որ կայ, էնքան էլ կտոր կէնենք ու ամէն մէկին մէ կտորմ կուտանք. ո՞ւմ փայի միջէն որ էլնի փարէն, էս տարուայ մեր տան գօլվաթը ընդուր գլխուն էլ կեղնի։

—Ըսել է Թէ իմ փայի միջէն որ էլաւ, գօլվաթը իմ գլխո՞ւս կեղնի։

—Հա՛, ղուրբան, դու պզտիկ ես՝ արդար ես, աղօթքդ Թեզ ընկնի կը Աստու անկաջը. արդիներու հըմար Աստու գարգայի գռնները միշտ բաց ին, աղօթք էրա, փարէն քեզի էլնի, որ մեր գօլվաթը ջահէլնայ քեզի պէս։

Էս ըսաւ մամս ու ջէբէն հանեց մէ ճերմակ թաք շահանոցմ, գրաւ գնդի մէջն ու Հարս-ապլաւիս էնքան տրորել տուաւ որ՝, էլ չիմացանք Թէ շահանոցը գնգի որ Թարաճն է. ընդից յետև տափկըցրաւ գաթի պէս, երեսին խաչմերուկ ճըզկեր քաշեց, կանեփով ու չամչով էլ նշխեց ու էնքան սապր էրաւ, որ Թնդիրը վառաւ, անցաւ, էն վաղը բերաւ մէ մենծ սալմ Թնդրի տակն իջեցրաւ ու ուսուլով տարին իջեցրաւ Թնդիր, սալի վրայ դրաւ. ընդից յետև երկու խէճիրկաթ էլ խաչմերուկ Թնդրի վրայ դրաւ ու վախվըխելէն վրէն ծածկեց։

Էլ էդ իրկուն չեմ իմացել ուրախութենէս Թէ ինչդ իմ անցրել. է՜հ, էգուց կաղինդ է, մենծ հօրողբերս քեօխվայ է, գեղացիք բախով, գինով կու գան կաղինդը շնհաւորելու, մեր օդէն կը լցուին, դաւուլ ղուռնով ք՝ֆ կէնեն, Ես էրեմամ կը խալֆիս, պապոնցս կաղինդը շնորհաւորելու. էլ փշաը, չամիչը, ֆնտըղը, կակալն ո՞ր, բաղաստան կեղնի, Հըմա սապրս էլ չէ տանում Թէ ե՛ր պտի լուսանայ։ Չէ, մէ Հալով մուԹն ընկաւ, պարկանք քնելու։

Հըլա նոր էր խորոզը առջի բերանը կանչել, աչքս բացի, քնէս վեր Թռայ որ ինչ, մեր տանեցիք քուլլի զարԹնել, խառնուել են իրար։ Հարսներն ու աղջկներն որը խալէքն ու բարձերն ին եահամիշ էրէ օդէն տանըմ, փռըմ, սարգըմ, կոկըմ։ որը տան մէջ փռուան տեղերն ին ժողվըմ, ծալք դնըմ։ Թաժայ Հարսը պապիս Թևը բռնէ շորերն է Հագցնում։ Մամս էլ կճուճները Թնդրէն Հանէ, կերակուրները չանդընէրն է լցնըմ ու օդէն Հաց տանելու Թադարուք տեսնըմ։

Մէ քանի դաղիից յետև ամէն ինչ սարգի էր. օդէն խալէքը փռին, բարձերը շարին, սուրֆէն դրին ու վրէն էնքան լօբու, կարԹօլի ու տօլմի չանդներ դրին որ էլ ասեղ քցելու տեղ չկար, գաթէն ու Հալուէն էլ որ Թագարայ էր էրած։ Մէ մէլ տեսնիմ պապս գաւազանը ձեռին քոԹ-քոԹալով էկաւ, սուրֆի վիրևը, օջխի քովը նստաւ։ Ընդուր յետևէն էլ մամս էկաւ քովը նստաւ։ Ընդից յետև մենծ Հօրողբէրս, Ակօ ամիս, պիճի ամիս, կատաշս, Նարօ ամիս, տացուս, տատաս ու ափէրս էկան, սրով, յառաջ պապիս ձեռը, ընդից մամիս ձեռը պագին, կաղինդը շնհաւորին ու սուրֆի չորս կողմը ջղըրուան կայնան։ Յետև սրո՞վ էկան մենծ ապլաս, պիճի անաս, Հարս-խաԹուները, Հարս-ապլան, խանըմ-ապլան, խաԹուն-մայրիկը ու Թաժժա Հարսը պապիս ու մամիս ձեռքը պագին ու օդի ցածի Թարաճը բարև բռնին կայնան։ Է՛հ, Հըմի սրէն էկաւ մեղի՝ տղոնցն ու աղջկներուն. Հմա մեր անուններն էլ որ մէկ մէկ տամ, էլ ճօթը չի գայ, Իրար յետևից գնացինք պապիս ու մամիս ձեռքը պագինք, ընդը էլ մեր երեսները պագին ու քովերը գրած մաղերով մէյվէքէն մէ մէ բուռ լցին մեր փէշերը։

Եր էս չէշիտ քուլլիքս պապիս, մամիս կաղինդը շնհաւորինք պրծանք, ափէրս, Հօրօղբրտանցէս ամէնէն պզտիկը, բախու Թասը լցաւ, տուաւ պապիս. պապս էլ Թասը առաւ ու էս ըսաւ. «Ցղէք Հարսներ, մատղշներ, բալէք ջան, քուլլիքիդ կաղինդը շնհաւոր էղնի, ապրիք, խնդաք, զօրանաք, Աստու անհատնելի Հացն ուտէք. բարով խերով մէկ էլ էս օրը Հասնինք դռով, դըրկցով, տնով, տեղով, մենծով, պզտըկով. Հմա վէ՛յ գիտե, աշխարհ է, աջաք ինչարի էն օրը ես էլ սաղ կը մնա՞մ, որ էլի էս ուրախութենը տեսնիմ։ Փուչ աշխարհ է, էսօր կանք, էգուց չկանք. իմ Հալս ընձի մալում է, Հայհայս գնացել՝ վայվայս է մնացել։ Հմա ձեզի

քուլլըքիդ Թամբայմ ունիմ տալու։ Ինչդ որ ինչարի էս օրս ընձի էք հնազանդ եղել, ընձի տան մենծ ու կառավարող ճանչըցել, ձեր մէջը իմ ու քուկ չէ եղել, իրար հետ անուշ ապրել, անուշ մենծըցել, էն չէշիտ էլ իմ մեռնելէս յետև ձեր մենծ աղբօրը պտի գլուխ տաք, ընդուր ամեն մէ խօսքը կատարէք ու ձեր էրն ու մենծ աղբերը ճանչնաք։ Դու էլ, Վարդան ջան, քու աղբրտանդ վրայ պտի աչես ինչդ որ քու հալալ տղոնց վրայ։ Ձեր մէջը ջոկողութիւն, իմ ու քուկ չպիտի էղնի. իրար հետ կռնակ կռնըկի տուած հալալ գուլալ պտի աշխատիք, իրար հետ ուտէք։ Վէվ որ ձեզնէն ծուռը քաշէ, ուր միտքն որ ծուռը կէղնի էս օջախը քանդելու, կայէնի անէծքը ընդուր գլխուն էղնի, Իրար հետ աշխատէք, իրար հետ ապրէք. մեննակ էդով դուք կրնաք ձեր դուշմանի աչքը հանէ, ձեր բարեկամներուն խնդացնէ. Քուլլիքդ էլ սաղ էղնիք։ Հայր Աբրահամու, մեր Լուսաւորիչ պապի օրհնէքը ձեր գլխուն էղնի. Երկնաւոր Տիրոջ աչքը ձեր վրայ էղնի, Պառաւ, դու էլ սաղ էղնիս, քու էլ կաղինդդ շնհաւոր, Երկնաւոր Թագաւոր, Դու մեզի քու լուս արքայութենէդ չզըրկես»։ ըսաւ պապս ու Թասը խմեց, Հօրօղբրտիքս բիրատի իրար հետ գլուխ տուին ու ըսին. «Անուշ էղնի, աբար ջան» ու հարսները սրով գնացին ձեռը պագին,

Ափէրս էլի Թասը լցաւ ու տուաւ մամիս, որ առաւ ձեռնէն Թասը ու ըսաւ. «Անուշ բալէք ջան, քուլլիքդ էլ կաղինդը շնհաւոր էղնի, քուլլիքդ էլ սաղ էղնիք, Մայր Աստուածածնայ օրհնէքը վրէնդդ էղնի. Ող բռնէք, ոսկի դառնայ, չոր քարին դիմէք, կանանչ դառնայ, Հայ-Տիրոջէն կը խնդրեմ մեղաւոր բերնուս, որ ամեն մէկդ օխտը որդով սեղան նստիք, ծլիք, ծաղկիք, բաղդաւորիք, Ա՛յ տօ, դառաւ մամն դիպա պապիս, քու էլ կաղինդդ շնհաւոր. մեզի էլ ինչ է մնում. իրկուն առաւօտ ժամ երթալ, աղօթք էնել, մեր Հոգու յիշատէն ընկնել, որ Աստուած էլ մեր մեղաւոր Հոգուն լուս ու ճարմ էնէ». էս ըսաւ մամն ու խմեց, Էլի հօրողբրտիքս քուլլի գլուխ տուին ու ըսին. «Անուշ էղնի, անա ջան» ու հարսները ձեռը պագին,

Մեմ էլ ափէրս լցաւ Թասը ու տուաւ մենծ հօրողբօրս. էն էլ առաւ Թասը ու էս չէշիտ շնօխքըլեց.

«Աբար ջան, մենք ձեր օրհնութենին ենք կարօտ. ճօթմ հաց որ պտի ուտենք ձեր օրհնութենով պտի ուտինք, Թող Աստուած ձեզի երկար կեանք տայ, ձեր հովանին մեր գլխէն չպակսեցնէ, որ մենք էլ ձեր Թևերու տակ ժողուած, ինչդ որ հաւի ձագերը Թխսի Թևերու տակ, ապրինք, Ա՛ռանց ձեզի ի՞նչ ենք – հողոց ու մխրոց, Ձեր մէ խրատը աւելի շատ աժէ, քան Թէ աշխարհի խազնէն. ձեր ոտները աւելի շատ բան գիտեն, աւելի շատ բան են տեսել, քան Թէ մեր գլուխը ու աչքերը։ Ձեր մեննակ նես ու դուս էնիլը, հաւին քշա էնելը աւելի բան է, քան Թէ մեր տարինեռով գլուխ դուս դնելը, հարուրներով աշխատանք նես բերիլը։ Տէր Աստուածը Թէ մեզի ուրախութեն պտի տայ, Թող ձեզանով տայ։ Աղբրտանք ջան, սաղ էղնիք, տարէքդ շնհաւոր. Աստուած մեզ էլ խելք ու կարողութեն տայ մեր ծնողներուն, մենծերուն հնազանդ էղնելու, ընդոց խօսքին անկանջ էնելու»։ Էս ըսաւ ու խմեց։

—Ա՛յ տօ, ըսաւ պապս մամիս, հերիք է էդ հարսներուն ոտաց վրայ կայնեցնես էհ, մեղք են. ա՛ռ գնա՛ տուն, դուք էլ հաց կերէք, քիչմ ուրախացէք։ Ախր գեղի քեօխվայ ինք, Հըմի գրկցները կուգան շնհաւոր կաղինդ էնելու։ Գնացէք, բալաներ ջան, գնացէք դուք էլ քիչմ ուրախացէք . . .

Հլա պապս խօսքը չէր ըսել պրծել, հլա նոր մամն հա՜հու էր էնըմ տեղէն վեր էկնելու, որ գոռում գոչումը, շամաթէն ընկաւ. «Ուռա՜, կեցցէ քեօխվէն, ուռա՜, տաշշի, բիջօ, ուռա՜ . . »։

Էդ մեր գրկցներն էին, որ գալըմ էին հօրողբօրս կաղինդը շնհաւորելու։

Էդ ձէնն որ չառան հարսները, էլ չիմացան Թէ ինչդ տուն փախնին. ափալ Թափալ, որը կռվերու արանքէն, որը դոմհշներու տպդէքովը տուն փախան։ Իա՜, ըլա ամօթ չէ՞ խալղի տղամարդը գայ մեր ջահել ջուհուլը օգէն կայնած տեսնի, Մեննակ մամն էր որ ծանդր մենծ իրա քէֆին էրթըմ էր։

Քէֆ հնողները նես Թափան ու բիրատի իրար հետ ճուացին. «Իարև ձեզի, շնհաւոր կաղինդ» ու մէկ մէկ էկան աբարիս ձեռը պագին, ընտից յետև հօրողբօրս կաղինդը շնհաւորին ու մէ մէ րախատ բուԹիլկա փէշերու տկէն հանին, սուրֆի վրայ դրին, որն էլ մէ մէ ջուխտ ոտից դրին հօրողբօրս առաջն ու ըսին. «Քեօխվայ ջան, քիչը շատ տեղ ընդունէ, ղաբուլ էրա, մենք էլ քուկդ ենք»։

Ափէրս բաղու Թասը էրկնցրաւ գալողներէն մէկին՝ լնամի Աաքոյին, որ առաւ Թասն ու էս չէշիտ շնօխքըլեց. «Կենդանութեն, լնամի աբար, ջան սաղ էղնիս, Աստուած որդիքդ սաղ պահէ, օջախդ հաստատ պահէ, Հոգուդ արքայութեն, Քեօխվայ ջան, սաղ էղնիս, Աստուած քեզ էլ կարողութեն տայ մեր գեղը կառավարելու. աղբէր, ղալայ բան չէ գատաւորութեն էնել, սէյր էնողին

ղօլայ կը Թուայ. աշխարհի գործ է, ըդման կէղնի՝ եաեանուորը ձիաւորի վրայ կը ծիծաղի, Խնամի ազբրտիք ջան, սաղ էղնիք, կաղինդներդ շնհաւոր, Տէր Աստուած, Դու մեր խեղճ ազգին լուս ու ճարմ էնես». Էս ըսելով Լնամի Սաքօս կոնծեց Թասը։

Էս հադաղնդայ՝ խալֆիս խալաթը միտս ընկաւ, էլ չաշեցի, վազղի դիպա տուն, Մէ կամփանեայ էլ տանը Հարսներն էին սարքել. Մամս էր էդ կամփանի գլուխը. Հարսներն էլ ըստեղ էման չէին ամանչըմ, ինչդ որ օդէն. բերնիներու եաշմաղները յետ էին տարել, ուրախ ուրախ ըսըմ ծիծաղըմ, ուտըմ, խմըմ էին. Մենծ Հարսները մամիս հետ էին սուրճա նստել, պզտի Հարսներն ու աղջկներն էլ ջոկ. Ըստոնց կամփանի գլուխն էլ մենծ քուրս էր, որ պզտի Հարսները քուլլի խանըմ-աղայ էին ըսըմ. Ես վազղի ընկայ մամիս դիրկըն ու ըսի.—Մամի ջան, խալֆիս խալաթը։

—Ո՛չ, դուրբանդ էղնիմ տիա, բողչով կապած դրել եմ դուխքներու վրայ, ամ ու գնա, ըսաւ մամս։

Էլ սապր չէրի, բողչէն գըրկըւորայ ու թաղմ որ խալֆոնցս տունը մէկ վազղի. Նես մտայ օդէն որ տէրտէրը վիրևը, օջախի քովը նստել է, ընդուրէն քիչմ ցած էլ խալֆէս է նստէ, օդի սաղրընէրն էլ լիքը լցուած են ուրիշ մարդկանցով. Փափաղս վեր առայ, գնացի առաջ տէրտէրի աջը Համբուրի, յետև բողչէն տարայ խալֆիս առաջը դրի ու ըսի.—Խալֆայ ջան, ես էլ քու փեշքաշդ, մամս ղրկեց։

—Ապրիս, ըսաւ խալֆէս ու բողչէն վերցրաւ էն կողմ դրաւ. Էս հադաղնդայ էն նստող մարդիկը աչքովնքով էրին խալֆիս, րախով լիքը Թասը տուին ընձի ու ըսին.

—Ա՛ռ, Ալէք ջան, առ մէ շնորքէլէ, տեսնենք ինչդ տղայ ես դառել, ինչքան մարիֆաթ ես սորվել խալֆեցեդ։

Ես էլ Թասը առայ ձեռքերէն, գնացի տէրտէրի աջը Համբուրի ու բերի Թասը խալֆիս տուի։

«Ապրիս, ապրիս, ճուացին չորս Թարաֆէն, տեսար, ինչ Թէզ փայմաւ, իրան Թասը խալֆին տուաւ, տեսար աղբէր, ինչ շնհորք են առել տիրացու Գևոյի մանթերը. վայ հալալ էղնի քեզի, տրացու Գևոյ»։

Էդ գովասանքէն խալֆիս ոտները գետնէն կտրան։

«Դէ, տիրացու ջան, անճախ որ տեղն էկաւ, դու էլ գրերու միջի էն խորունկ բաներէն ըսա, անկանջ էնենք. Հա՛դամ, փուչ աշխարհ է էս աշխարհը, քուլլի կերթան, կանցնին, մինակ էդ հոգևոր բաները կը մնան»։

Խալֆէս Թասն առաւ ձեռը, դառաւ դիպա տէրտէրն ու ըսաւ.

«Տէրտէր ջան, գիտես, կրակի առաջը չախմախ զարկելու չի էղնի, դու որ կաս կրակն ես, ես չախմախն եմ»։

—Ա՛յ, օրհնած, դու ըսա, խալֆիս խօսքը կտրեց տէրտէրը. Ցիսուս Քրիստոս եր որ էկաւ մկրտուելու Յովհաննէս Մկրտչէն Յորդանան գետը, Յովհաննէս Մկրտիչը ըսաւ Թէ. Ահա գառն Աստուծոյ, որ գայ մկրտիլ ընձէն. յետև էլ դառաւ Ցիսուսին ըսաւ Թէ. Ըստից յետև պարտ է ընձի մեղմանալ, քեզ աճել, եանի Թէ ըստից յետև ես պտի յետ երթամ՝ պզտկնամ, դու յառաջ պտի գաս՝ մենծնաս, Հիմի մերն է. ըստից յետև ես պտի հետը հետը յետ ընկնիմ, չունքի որ Հալիւորցել եմ, դու ջահիլ ես, յառաջ պտի գաս։

—Գիտէք, ինչ կայ, ըսաւ խալֆէս. մէկ օրմ, երբոր Ցիսուսի աշակերտները Թօփ էղան քովը ու Հարցրին Թէ՝ Վարդապետ, ինչու՞ մենք էլ Յովհաննէսի աշակերտներու լման ծուխ ու պաս չենք պահըմ, էն վազդը Ցիսուս ջուղաբ տուաւ Թէ Հըմի փեսէն մեր մէջն է, մենք Հարսնիքի Հետ ենք, երբոր փեսէն կերթայ՝ Հարսնիքը սոլֆ կէղնի, էն վազդը մենք էլ ծուխ ու պաս կը պահենք, ըսդուր բադալը կը Հանենք։

—Մագաճր Ցիսուս ճ՞ի Հարսնիք գնաց, Հարցըրաւ նստողներէն մէկը։

—Հա՛, ըբա՛, ըսաւ խալֆէս, Գալիլիա քաղաքում չէ՞ր, որ Հարսնիքին ջուրը գինի գարձրաւ, տէրտէր ջան։

—Գիտեմ գիտեմ, ըդման է, վրայ բերաւ տէրտէրս։

—Համի մերն է, աղբէր, յառաջ տարաւ խօսքը խալֆէս, քանի որ քէֆի, կեր ու խըմի վազդ է, քէֆ էնենք, երբոր ուրախութենի օրը կանցնի, էն վազդը մենք էլ լաւ լաւ բաներ կը խօսենք ու ըսդուր բադալը Հանենք կը. Համի ողջ լինիք, կենդանութեն. տէրտէր ջան, օրհնեա ի Տէր. Ալէք ջան ողջ լինիս, խալֆէս գառաւ դիպա ընձի. Թասդ ընձի, Ասսու բարին քեզի. քեզի պէս աշակերտներ շատ ունենամ, Փուլլըքիդ էլ տարին շնհաւոր, ողջ լինիք». ըսաւ խալֆէս ու խմեց բախին, Թասը շրըխկալէն զարկաւ սուրճի վրայ ու էման մէ աանուշէն ա-ա-ա՛մ երաւ որ, ջուրը բերանս լցուաւ։

Խալֆոնցս տունը շատ չմնացի. ընտից գնացի քեռանցս կաղինդը շնհաւորելու. Ճամփէն, որ դուան առջէն անցնըմ եմ, քէֆի ու ուրախութենի ձէն է գալըմ. Փողը, տիկը, դաւուլ զուռնէն էլ որ, մարդու անկանջ են խլացնըմ. Գեղի գալիշան-

լիքն էլ իրանց քայլան ձիանով դուս էին էկել Տէրտէրանց կալը ջիլիթ էին խաղըմ ու իրանց շնորհքը տեսցնըմ։

Քեռանցս կաղինդը շնհաւորելէն յետև գէշ-տան-գէշ իրկուայ ղանգերու վազդ տուն էկայ։ Մերոնք էլ էկել Թօփ էին էղել, չունքի ընդոնք էլ ընձէն յետև գնացել էին կաղինդ շնհաւորելու, որը քաւորանց տունը, որն էլ խնամոնց։

Նես մտայ որ, մեր տնեցիք քուրսու չորս կողմը ջոլըրուել, նստել են, Վազգի մամիս գիրկը ընկայ ու ըսի։

—Մամի ջան, կաղինդը պրծա՞նք։

—Չէ, բալա ջան, ըսաւ մամս, հլա մենծ բանը յետևն է։

—Էլ ի՞նչ կայ որ։

—Հլա տարին չենք կտրէ։

—Որմա՞ն պտի կտրենք տարին։

—Սապր էրա, հմի կը տեսնես։ Աղջի, Մագ-Թա՛ղ, տղամարդը քուլլի օգէ՞ն է, ըսաւ մամս մենծ քուրոջս ու էլաւ հացի գօլաբէն հաննց էն մենծ բաղաջը, որին տարի էր ըսըմ, որ հըմա ըսեմ Թէ մեր գուլթնի խարազանի պիճի Թաքռի չափ կար։ Գրկըւորաւ էդ տարին ու էլաւ ատն էրթիկը, յիրէք պոռւտ էրթէկի բոլորը պտըտցրաւ ու Թըռ՛ի, էրթըկէն ցած քցաւ տարին քուրսու վրայ։ Ընտից յետև նես էկաւ, առաւ մենծ դանակը, յիրէք հեղ խաչակնքեց տարու վրայ ու խաչմէրուկ կտրեց, չորս մենծ կտոր էրաւ ու հարցըրաւ. «Մեր տնեցիք քանի՞ հոգի են. կեցի՛, ուրթը աղբէր, մէկ էլ հալիւորը իննը։ Հմի տղայ Թախտըմը, մամս սկսաւ մատներու վրայ Համբրել. Գրիգորս, Պետօս, Կարօն, Սաքօն, Խաչօն, Սենօն, Եղօն, Ալէքս, Արտաշ, Սահակը. էս տասը, իննն էլ, տասնիննը։ Էդ տղամարդու Թախտըմը։ Հըմի օղուշաղը. օխտը Հարս, ես ուրթը, Աղջկներ, դիմացըս կայնէք, ձեղ էլ Համբրեմ, տեսնեմ քանի՞ս էք։ Աղջկները սրտվ էկան մամիս դիմացը շարուեան։ Մամն էլի մատներու վրայ սկսաւ Համրրել. Մագ-Թաղը, Հէքօս, Էւան, Շուշանը, Սաթիկը, Նըլա-շունը, Հայկօն, Մարօն, Մաքօն, էս իննը, ուրթ էլ, տասն օխտը։ Տղամարդը քանի՞ս էր, տասնի՞ննը.— Հա՛, տասնիննը. տասնօխտն էլ որ գանք ըդուր վըրայ՝ քանի՞ս կէնէ Ալէքս ջան, Հարցրաւ մամս ընձի։

—Կեցի՛, կեցի՛ մամի ջան, ըսի, հմի բազմա-պատկեմ՝ կիմանամ։ Չէ, էդիկ գուշարեմն է, պտի գուշարեմ։ տասնիննը՝ տասնօխտն էլ, տաս—տաս . . . քսան . . . քսան . . . քսան . . . եռսուն. եռսուն . . . եռսուն վեց. եռսուն վեց Հոգի կէնէ մամի ջան։

—Հա՛, որ ըդման է՝ եռսունը վեց կտոր էլ պտի էնենք տարին, որ ամէն մէկին մէկ կտոր Հասնի։

—Ըրա չօբներուն ու մշկներո՞ւն, Հարցրի ես։

—Ընդոց էլ ըսդուր բադալը ուրիշ բան կուտամ, ըսաւ մամս. էսիկ՞ միննակ մեր տնեցոց վրայ պտի փայ էնեմ, որ իմանանք Թէ մեր տան դօվլաթը ո՛ւմ գլխուն է, շահանոցը ո՛ւմ փայի մէջէն կէչնի։ Էս ըսաւ մամս ու տարին եռսունը վեց հաւասար կտոր էրաւ։ Իննը կտորը գրաւ սինու վրէն, ղրկեց օդէն, մնացածն էլ ամէն մէկիս մէ կտոր տուաւ։

Հըմի առել ենք ձեռներս մեր փայերն ու դողըմ ենք. աջաբ որի՞ս փայի մէջէն պտի էլնի շահանոցը, ու վախվըխելով ուտըմ ենք։ Մէ մէկ տեսնեմ Եղօն ճուաց. «Ահա՛ն, շահանոցը իմ փայիս մէջն է»։ Ըսելն իմացաւ Եղօն, էն սըհաթը Թափանք խեղճի գլխուն, ինչ որ լաշ ուտող գէշ ղշերը ջամբըքի վրայ, քաշկըռտըմ ու ըսըմ ենք. «Ո՞ւրա, ո՞ւրա, տեսնինք»։ Մամն էլ պըըչ պըըչ պագպըգըմ է Եղոյի ձեռներն ու Թշները ու հետը ըսըմ։ «Ո՛չ, Եղո՞ջան, հոգուդ մեռնիմ շահանոցը քեզի էլաւ, մեր դօվլաթը քու գլխուդ է ու քեզի պէս ջահել»։

•

Ն Ի Ի Թ Ե Ր

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԱՂՈՒԱՆԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ.

Ա՛ղերջացնելով Աղուանից պատմութեան Մայր Աթոռոյս մատենադարանում գտնուած ձեռագիր օրինակների ցուցակի տեսութիւնը, իմացանք, որ բոլոր օրինակները բաժանուում են երկու խմբի, ուստի անհրաժեշտ է երկու խմբերի տարբեր ընթերցուածներն առաջ բերել։ Նախ քան տարբերութիւններն յառաջ բերելը, հարկաւոր ենք համարում ընթերցողներին տալ մի շատ կարևոր գրութիւն Աղուանից պատմութեան նախնական ձևի և խմբագրութեան վերաբերութեամբ։ Գրութեան վերնագիրն է՝

—«Տեառն Անանիայի Հայոց կաթուղիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի աթոռոյն»։

Սոյն գրութիւնը հրատարակում ենք Մայր Աթոռոյս մատենադարանի համար 58 և 100 ձեռագրերից, որոնք նոր և սխալաշատ գրչութիւններ են, առաջինը գրուած է Էջմիածնում 1767 թուականին, Ներսէս Շնորհալու ընդհանրական թղթերի

հետ. իսկ երկրորդը Պօլսում, անթուական, Անանիա վարդապետի հակաճառութեան Թղթերի հետ. երկուսն էլ կրճատ պատուագրութեամբ և մանր նօտագրով արտագրութիւններ էին. 1

Համաձայն Սիւնեաց պատմիչ Ս. Օրբելեանի ասելութեան՝ Անանիա կաթուղիկոսը բաւական կարևոր աշխատասիրութիւն է ունեցել, ժողովելով ի մի իրանից առաջ և իւր ժամանակուայ կարևոր Թղթերը, սոյն վերնագրով. «Գիր Թղթոց կամ նամակ հաւատոյ.» 2) Այս գրութիւնը Անանիա կաթուղիկոսի «Գիր Թղթոց»ին է որ հրատարակում ենք, որից Սիւնեաց պատմիչը բաւական օգտուել է իւր պատմութիւնը գրելիս. Յանկալի կը լինէր Անանիայի «Թղթոց»-ի ամբողջ օրինակը գըտնել. Թերևս Պօլսում, Երուսաղէմում կամ Մխիթարեանց Հայրերի վանքերում գտնուին. * Ըստ Օրբելեանի «Գիր Թղթոց»-ը գործածութեան մէջ էր մինչև իւր ժամանակը—ԺԳ. դարը. Գուցէ «Ընդհանրականը» և Մագիստրոսի Թղթերը գործածութեան մէջ մնալով բարձի Թողի արած լինին «գիր Թղթոց»ը. Մեր Մատենադարանի համար 58 և 100 ձեռագրերի միջի Թղթերից մի մասը կարելի է «Գիր Թղթոց»-ին վերագրել. մինչև անդամ համար 100 ձեռագրի մի մասը «Գիր Թղթոց»ի աղճատուած օրինակն եմ կարծում.

Անանիա կաթուղիկոսը 949 թ. Խաչեան գաւառում.

—«Ես, Անանիա, ընդհանուր Աստուծոյ Հայոց Մեծաց նուաստ պատրիարքը» ևն ևն ևն.

—Եւ ապա՝ իբր ի խորոց սրտէ զայրագնեալ յիշեցաք զԲանն Ցեառն առ աշակերտսն աւանդեալ, Թէ Հովիւ 1) քաջ զանձն դնէ ի՞վերայ ոչխարաց, իսկ վարձկանն Թողեալ զնա՝ ի բացուստ առնուցու նշմարել. 2) Եւ ժողովեալ զբազմութիւն սուրբ եպիսկոպոսաց և սուրբ հարանց և գիտնաւոր 3) վարդապետաց, որ էին յաշխարհիս մերում, դէմ եգեալ նոքօք գնացաք յաշխարհն Խաչենոյ՝ ընդառաջ եղև մեզ մեծ և փառաւոր, աստուածապահ և բարեպաշտ տէր Գրիգոր իշխան, հանդերձ սուրբ եպիսկոպոսօք և ճգնաւոր վանականօք և այլ անթիւ եկեղեցական կարգակցօք. Եւ սիրով ընկալեալ գոհանայր « զՑեառնէ, որ առաքեաց ի խնդիր կորուսեալոցս զսուրբ Լուսաւորչի աթոռակալացդ, լուսաւորել զբազմամեայ 4) խաւարն և բառնալ զխռովութիւն եկեղեցւոյ և միաբանել ի նոյն կարգ և ի կրօնքս և ի հաւատ սրբոյ Լուսաւորչին. զի որպէս էին հարք մեր, լիցուք և մեք մինչև ցյաւիտեան»:

Եւ նոյն ժամայն հրովարտակս գրէր յամենայն գլխաւորս աշխարհին՝ առնուլ հրաման առնել ժողով հանդերձ մեօք ի տան իւր ի Խաչեան գաւառի. Եւ ընկալեալ զհրամանս 3) իւրանման բնաւիցն, և ընկալեալ 6) նմանապէս հանդերձ այն՝ աւետաւոր հրատարակել ուր առ բոլոր սուրբ ուխտս, որ էին յաշխարհին Աղուանից, և ի հրամանէ Աստուծոյ առ ժամայն ժողովեալ բազում հարք և սուրբ եպիսկոպոսունք, և այլ 7) գիտնական քահանայք, ըստ այնմ Թէ ուր լուծումն մարմնոյ՝ անդ և արծուիք հաւաքին. 1) Ընդորս էր՝ Ա. Գագիկ կարծեալ կաթուղիկոսն, 2)

Բ. Եւ Պետրոս՝ ի նմանէ ձեռնադրեալն էր Գարդմանայ եպիսկոպոս.

Գ. Եւ վանական էր որ յայնմ ի ժամանէ. 3) Հայր Թաւիթ Փառիսոսայ վանական.

Դ. Հայր Պետրոս՝ Կովախեղդի վանական.

Ե. Հայր Մանաճիհր՝ Ցուսէփու 4) Վանից վանական.

Զ. Հայր Գրիգորէս՝ Նորավանից վանական.

Է. Հայր Սիմէովն 5) Խանդոնկան վանից վանական.

Ը. Եւ Սամուէլ երէց 6) Սենեքերիմայ 7) գրան քահանայ.

Թ. Եւ Սուփան Ցողջադուրայ սուրբ Անանիանց քահանայ.

---

1. Սոյն գրութիւնը ի թիւս այլ գրութիւնների արտագրած ունէր հրատարակելու Մայր Աթոռոյս Միաբան Գ. Տ. Մ., որ ամենայն յօժարութեամբ յանձնեց մեզ իւր արտագրածից եւ ծանօթութիւններից օգտուելու Աղուանից պատմութեան նկատմամբ, ուստի այս մասին խորին շնորհակալութիւն: Քանի որ սոյն գրութիւնը բաւական ընդարձակ գրութիւն է (մօտ 26 թերթ), ուստի ես միայն հրատարակում եմ վեց թերթիկ՝ այն կտորը որ լուսաբանում է Աղուանից պատմութեան ուսումնասիրութեան գործը. իսկ ամբողջը լիայոյս ենք, որ Գ. Գ. Տ. Մ. շուտով հրատարակել կլուսայ, որով եւ Օրբելեան պատմագրի բաց թողածը կը լրացուի: Այս մասին տես Արարատ, 1894 թ., Հայկականք. Թ.:

2) Ս. Օրբելեան. Փարիզ, 1859, հատոր Բ երես 28. Մոսկվա, 1861, երես 208. «Եւ կնքեալ զայս վճիռ իւրեանց «մատանեաւ՝ ետուն ի ծեռս կաթուղիկոսին զորս աւելորդ «համարեցաք գրել. զի կան լիով գրեալքն ի գիրս Թղթոցն, զոր ժողովեալ է սոյն Անանիա, որ հաւատոյ նամակ «անուանի»:

* Այսպիսի ժողովածուի մի ընտիր եւ հաւանականօրէն լիակատար օրինակ տեսել եմ Կ. Պօլսի Անտոնեան Միաբանութեան մատենադարանում:

Կ. Վ.

---

1) բ. տուսանց քում. Ցօհան. 10. 11: 2) աբ. նշմարել եւ ժողովել . . . .: 3) բ. գիտնական: 4) ա. զբազմամեաս: 5) ա. զհրամանց: 6) ա. չիք «եւ ընկալեալ»: 7) բ. այլք:

1) բ. լուս. — Ղուկ. 17. 37: 2) ա. կաթուղիկոս: 3) Ուղղելու է «Եւ վանականք էր որ յայնմ կողմանէ.. այսինքն Սենեքերիմ իշխանի բաժնից այն է՝ Գարդման Փառիսոս եւլն: 4 բ. Ցուսեփու: 5 բ. Սիմէոն: 6) բ. երեց: 7) ա. Սենեքերիմա:

Եւ Գրիգոր իշխանի կողմանէն.

Ա. Տէր Յովհաննէս՝ Աթաթա(յ) եպիսկոպոս, 1)
Բ. Եւ տէր Յովհաննէս՝ Մաքենոցաց եպիսկոպոս,
Գ. Հայր Միսայէլ՝ Շիկաբարի վանական.
Դ. Հայր Սարգիս՝ Գանձասարու վանական.
Ե. Հայր Մանուշակ՝ Խաչինայ 2) վանական.
Զ. Հայր Պօղոս Խանդին վանից վանական.
Է. Հայր Գէորգ՝ Ոսկէ վանից 3) վանական.
Ը. Հայր Արտաւազդ՝ Այծաքարայ վանական.
Թ. Եւ Սահակ քահանայ գիտնական, որ կոչի Դարբնորդի.
Ժ. Եւ Վարդան քահանայ.
ԺԱ. ԺԲ. ԺԳ. Տիրանուն և Պետրոս և Պօղոս՝ դրան քահանայք.
ԺԴ. Հայր Ստեփաննոս, որ կոչէր քերական,

Եւ այլ բազում գլխաւորք, զորոց աւելորդ համարեցաք յիշատակել զանուանսն, մի յագեցուսիլն բանից զպատերազմն արասցէ լսօղացն, զբազնաստեղծութեան զհանդէս։

Եւ բաժանեալ ոգորեալ ընդ մեզ զաւուրս բազումս այլ և այլ մասամբ, զի էին ոմանք ի թիկնածութիւն հաւանեալ Գագկայ, իսկ ոմանք զմերն և զմեզ յօժարէին իրաւահարկ սիրով պատուագրել։ Իսկ այլք ոչ զԳագիկ և ոչ զՅունան, այլ այլոց ակն եդեալ՝ նշկահէին զերկոսեանն։

Իսկ իշխանն Գրիգոր աղաչէր, զի զԳագիկ երկրորդ անգամ ձեռնադրեալ 1) Թողուք 3) նմա, օրինակ մեզ տալով օճ անհաւանութեան զարարեալ տեառն Գէորգայ Հայոց կաթուղիկոսի առ Յունան Աղուանից կաթուղիկոս, ի ձեռն երանելոյ Թագաւորին 6) Համամայ 7) բարեխօսութեան։ Եւ իբրև ոչ գտանէաք հնարս ելից վճարման իրացն կատարել. և տեսեալ զանմիաբանութիւն ժողովոյն, ապա յաղօթս ապաւինէաք. քանզի զՅունան յոլովք ի ժողովոյն անարժան կարդային և զԳագիկ վարիւք արժանաւոր։

Իսկ զի՞նչ ապա տարակուսիս այսորիկ ելս. զբատաւորն Թողուլ չէ մարթ, և զի և հաւանէին իսկ ոչ։ Զի յորժամ այն ինչ, որ յԱստուածոյ իցէ՝ անդ չիցէ ինչ, որ իցէն 8) ինչ ոչ ինչ չիցէ։ Եւ զերկրորդ ձեռնադրութիւն տալով ուղղափառին՝ ի սուրբ կանոնաց երկոքեան լուծման առնուաք հրաման, Եւ ընդունել ոչ իշխեաք՝ յաղագս հրահոսան և անբաւ սաստիկ նզովից, որ կարգեալ էր ի տանն Աղուանից յաղագս զառ ի նոցին եպիսկոպոսացն ձեռնադրել 9) կաթուղիկոսն ընդունել, զոր յայլում ժամու և պատճառսն ասասցուք։

Այլ մեր զնովիմբ ածեալ զբանս, առ որ բանս է, զմիտս իրիս յարմարեսցուք։

Ապա հարկեաք զՅունանն՝ առ ի մինչ ձեռնագրեալ և անարժան երևեալ՝ լուծանել, և զԳագիկն՝ որ առանց Աստուածոյ էր կարգեալ և սուրբ կանոնաց՝ զնա և զայլս որք համեստագոյնք էին ի ժողովոյն ընդրեցաք, և առանձնացեալ զնեաք առաջի զկանոնական հրամանն, արկանեաք զամօթ մարդկան, յիշեցուցանեաք 1) և զահ հանդերձեալ ատենին։ Իսկ նա իբր զգօնացեալ և զարթուցեալ ի քնոյ ասէր՝ մեղայ. և խոստովանէր լուել յայնմհետէ ի կարգէ կարծեալ կաթուղիկոսութեանն, Եւ թէպէտև սիրտն բեկանէր և ի գղջումն հատանէր, այլ սակայն առ սնոտի փառամոլութեանն 2) պատիւ(ի) սպրելոյ չարասէր և կորստազմայլ գհհենաժառանգն Յակոբայ 3) զոխորդս չարութեանն և 4) զմահաշունչ գեղն ի սրտին գործարանի քողբորբեր։ 5) Եւ սողաբայիկ բանիւք աղաչէր զմեզ՝ հանդերձ իշխանօքն՝ դառնալ մեզ յաշխարհն մեր առ անգամ մի, մինչ զի խուզեալ քննեսցին զիւրաքանչիւր որ ի ներանձնաւորից, որ կարիցէ բառնալ զկարգն Աստուածոյ՝ զտեսչութիւն ժողովոյն՝ և առաքեսցին ըստ օրինին, և ձեռնադրել ի սուրբն Գրիգոր, յիշանութիւնն Տեառն Աբասայ Հայոց թագաւորի, որպէս և էր իսկզբանէ լեալ և կարգեալ 6) ի պատմութեանն Աղուանից։ Իսկ մեք հաւանեաք առ ի նոցանէ ասելոյն, յանձն առնուաք դառնալ և խնդրեաք ի նոցանէ զպատմութիւնն Աղուանից՝ ուսանել զսկիզբն լուսաւորութեան նոցա, թէ զի՞նչ պատճառաւ, Քանզի ոմանք այսր անդր արձարձէին ունել զլուսաւորութիւն սանն Աղուանից նախագոյ լեալ քան զՀայոցս։ 7) որ ի սուրբ լուսաւորչէն Է և ի Ա ամին 8) Տրդատայ Հայոց թագաւորի։ Եւ ոչ եւտուն մեզ տեսանել, քանզի ցուցանէր զտուն Աղուանից՝ արքեպիսկոպոս և զտունս Հայոց՝ պատրիարգ, և զառ ինքեանս գիտելով զմնան խնարհութեան՝ գրաւեալ գաղէին զպատմութիւնն 9) Աղուանից։

Իսկ որ ըմբռնէ զիմաստունս ի խորագիտութեան 10) ինքնին յայց ելեալ՝ արար մեզ իրաւունս, քանզի եկին բերին յեղակարծս գրքունս 11) ինչ Յովհաննու Ոսկեբերանի 12) կարգալով վասն գիշերոյն ժամու, և իբրև ի Հոգւոյն շնորհաց գոյ ասել զեղեալսն, թէ մերոյ աշխատութեանն պատճառս հան-

---

1) բ. պակասում է Ց. Ե. Ա. Ե: 2) ա. Խաչինա: 3) բ. Ոսկեվանից: 4) ա. ձեռնադրեալ: Բ. ձեռնադրել: 5) ա. Թողուք 6) բ. Թագաւորի: 7) ա. Համամա: 8) ա. իցեն: 9) աբ. ձեռադրել:

1) բ. յիշեցուցանէ ոք: 2) ա. փառամոլութեան: 3) բ. Յակոբ: 4) աբ. չարութեանն: եւ: 5) ա. քողաքորբեր: 6) բ. ի կարգեալ: 7) բ. Տայոց: 8) եօթն եւ տասն ամին: 9) բ. զպատմութիւն: 10) բ. լուս. 4. կտորն 3. 10, Ցօք. 3. 13: 11) ա. գրկունս: 12) ա. Ոսկեբերանի:

գըստեան տալով տեառն—գրեալ ի նա զպատճառս լուսաւորութեանն զոր սիրէաք, որում և ցանգորդն էաք տեսութեան։

Եւ կարգացեալ զպատճէնն 1) վերասու եղեալ 2) շարամանութեանն, զոր սիրէաք, որ ունէր զայս ձև օրինակի, թէ ... (Քանի որ Անանիա կաթուղիկոսի կոնդակի շարունակութիւնը քաղուածք է 949 թուականին գոյութիւն ունեցող Աղուանից պատմութեան գրքից, իսկ Օրբելեանն էլ քաղուածք է առել սոյն կոնդակի գրութիւնից, ուստի հարկաւոր համարեցի սիւնակների մէջ գէմ առ գէմ շարել նախ Աղուանից պատմութեան այն կտորները որ մտած է Անանիայի կոնդակի մէջ. երկրորդ բուն կոնդակի քաղուածքը Աղուանից պատմութիւնից. և երրորդ Օրբելեանի քաղուածքը յիշեալ կոնդակի պատմութիւնից, նախ քան սիւնակների միջոցով համեմատական գաղափար տալը, տեսնենք մինչև ցարդ յառաջ բերած կոնդակի մասից ինչպես է օգտուել Օրբելեանը. ահա Օրբելեանի պատմածը Անանիայի Աղուանից աշխարհը գնալու և այն տեղի անցքերի մասին)։

—«Եւ դէմ եդեալ երթայր յԱղուանս. 1) և հասեալ ի գաւառն Խաչենոյ՝ ընդ առաջ ելանէ նմա իշխանն Գրիգոր և տարեալ ի ջուցանէ ի տան իւրում։ Եւ ժողովէ զամենայն իշխանս աշխարհիս և զեպիսկոպոսունս և զվանականս ի տեղին, որ Ագաման 2) կոչի. գան և Գագիկ և Ցովնան։ Ապա խնդրէր 3) կաթուղիկոսն Անանիա զպատմութիւն Աղուանից, զի գիտասցեն զորպիսութիւնն Աղուանից Աթոռակալացն, և նոքա թագուցեալ ամենևին ոչ ցուցանէին։ Ապա ըստ վերին խնամոցն ի գիշերի պաշտամանն գնէ եկեղեցապանն Գանձասարու գիրք մի՝ որպէս թէ Ցովհաննու Ոսկեբերանի է, 4) և մեծարեն զկաթուղիկոսն յընթեռնուլ, զոր և լացեալ եգիտ զոր խնդրէրն, զի էր պատմութիւնն Աղուանից»։

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆՑ Մ. ԿԱՂ. ԳԻՐՔ ԹՂԹՈՑ ԱՆԱՆԻԱՑԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ։

Ա։

— «Յետ առաքելոցն 1) Խարդուղիմեոսի և Թադէոսի զկնի ՈՒԿՋ (266) ամի։ Լ։ և ի Ժ։ (17) ամին Տրդատայ Հայոց թագաւորի։ և Ուռնայրի 2) Աղուանից թագաւորի ընծայի յաթոռ նոցին Առաքելոցն՝ Սուրեան Պահլաւ 3 Արշակունին, յաղթէ Տէր սուրբ Գրիգորի 4) Լուսաւորչին Հայոց, ի կռապաշտութեանն զեռ. գոլով Տրդատայ և Ուռնայրի Հայոց և Աղուանից թագաւորաց»։

Սոյն հատուածի մասին ոչ Աղուանից և ոչ էլ Սիւնեաց պատմիչները ոչինչ չեն յիշատակում։ Աղուանից պատմութեան այն կտորները, որոնցից քաղուածքներ է արել Անանիա կաթուղիկոսը, համեմատութեան համար դէմ առ դէմ եմ դնում Աղուանից պատմութեան երկու խմբերի թէ տպագիր և թէ ձեռագիր օրինակներից քաղուածքներ—իւրաքանչ տարբեր ընթերցուածներով հանդերձ միայն բնագիրը ընդունելով ամենից հին ՉԼԸ (738=1289) թուականի երկաթագիր օրինակը. իսկ մնացեալները տարբերութեանց համար թողնելով։ Օրինակների համառօտագրութիւնները են՝ Ղ՝ ունկիանոս գպրի օրինակը=Ղ։ Շահխաթունեանի օրինակը=Շ։ Փարիզեան գպրագրութեան համար=Փ։ Մոսկվայի=Մ։ Երկրորդ խմբի բոլորագիր օր։=Բ։ Նօտրագիր օր։=Ն։

---

1) աւ զպատճէնն։ 2) բ։ նոքաք։ 2) Օրբելեան։ Փարիզ Բ։ հատոր երես 21։ Մոսկվա երես 205։

1) Փարիզեան տպ։ Արդաման։ 2) Փար։ խնդրէր ապա։ 3) Մոսկ։ չիք։

1։ աբ։ (ա=համար 100 ձեռ։ ը=համար 38 ձեռ։)—առաքելոյն։ 2. Ուռնայր ի Աղուանից։ 3։ աբ։ Պահլաւ։ 4։ աւ։ Գրիգոր։

ՊԱՏՄՈՒԹԻԻՆ ԱՂՈՒԱՆԻՑ.

Բ.— «Յայնժամ ա) ազգեալ չարին ի միտս չար արբանեկացն, տարեալ ընկենուին զսուրբն Գրիգորիոս յանհնարին խոր վիրապին Արտաշատ քաղաքի. յորում զերեքտասան ամ ։ աւձախառն չ բնակէր վայրի։ .... ևլն։

«Նորին իսկ Դեւքն զորս նուիրաւքն 3 և զոհիւք ։ մեծարէին։ Իբրև 3 ի վերայ թշնամեաց հասեալ տային 6 մոլեգնեալ։ 7 և ուտել զիւրեանց մարմինն, 8 այլ և ինորին թագաւորին զկերպարանս ի խոզի դարձուցեալ զընութիւն 9 յեղեղն ։0 լինել փախստեայ։

«Յայնժամ ահ և երկիւղ սաստիկ զամենեսեան ընդ որ, մինչև մնացին կորստեան կենաց աշխարհին։

«Մինչդեռ ։։ յայսմ ահի և ի դողման կային ի մեծամեծաց մինչև ի փոքունս, ։2 երևեր ի տեսլեան գիշերոյ, հրեշտակ տղորմութեան Աստուծոյ, կնոջ ուժմն Խոսրովիդուխտ անուն ։3 քեռ Տրդատայ Հայոց արքայի»։

«Անհնարին է ձեզ, ասէ, ի հարուածոյդ ։ զերծանել, բայց եթէ 2 ի ձեռն սրբոյն Գրիգորի, երթեալ հանէք զնա ի խոր վիրապէն։ .ս... ևլն։

«Որոց ծունր եդեալ մեծին սրբոյն 3 Գրիգորի, արտասուաւք խնդրէր յամենողորմն ։ Աստուծոյ զփրկութիւն թշուառացեալ ազգին։

«Եւ անդէն վաղվաղակի ընդունէին ի ձեռն սրբոյն աղաչանաց զրժշկութիւն մարմնական տանջանացն, ընդնմին և զհոգւոյն ։ լուսաւորութիւն...ևն.

«Եւ ոչ կացեալ իւր իսկ ունել զաթոռ քահանայապետութեան, հրեշտակ 6 Աստուծոյ եկեալ առ մեծն Գրիգորիոս 7 ասէ ցնա. Ո՛չ հեստել 8 և համառեալ 9 առ խոնարհութեան կարգին, այլ յայսմ քաջանալ և առնուլ կրկին զանազանական պատիւն որ վասն քահանայապետութեան շնորհի ։0 Աստուծոյ։ ։։ ....ևլն։

Այս հատուածը Աղուանից պատմիչը քաղուածք է արել Ագաթանգեղոսից, որի համար երկրորդ խումբը զանցառութեան է տուել։ Որ է

ԳԻՐՔ ԹՂԹԻՑ.

Ր.—«Նէ այսահլաճ ։ արտասուօք. ի խորս Թիւնաւորացն յամենելով եռահնգեայ 2 ամիվք աստանոր արտափայլեաց զԱքանազեանս 3 ազնի կռապաշտութեանց դիւացախաւար ճենճերոց, անմահացեալ ի տանջանս և մահացուցեալ զիշխան աշխարհիս՝ զաստանայ և զկամաւորս նորին, զարի և զմեծ հսկայն զդիւացազնն Տրդատ Հայոց Թագաւոր, անմաքրից պաղատարեալ կնճթակերպ խոզիցն վարսիւք։

«Որով և կրկին ընկալեալ երկև շնորհ ի շնորհաբաշխն Քրիստոսէ ի ձեռն երկոցն Խոսրովիդխտոյ, ոչ այլ ազդ գտանել բուժել յախտիցն դիւաբախութեանցն, թէ ոչ աղաւաղելոցն ի խորս Թիւնաւորացն սրբոյն Գրիգորի ձեռամբ։

«Յաղագս որոյ 4 և զանյիշատակն ի Թագաւորին խնամոցն պահեալ, փրկութիւն աօթիւք նորին գործեաց 5 Թագաւորին»։

«Որոյ եղեալ ։ աղօթիւք վասն նորին և բժշկեալ մկրտեր յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ 2

Օրդ և անդանօր նորին երանելւոյն Տրդատայ Թագաւորին գերապատուեալ զնա խորաշքեղ զարդիւք համգուներ Հարանի քահանայապետի, վակասակիր երկակի վեց ակամբ 3 շարտուղութեամբ, բերեալ զօրինակ ապագային զքահանայապետին Գրիգորիսի, շնորհեալ պատիւ իւրոյ Լուսաւորչին։

«Որ ինչ սակս երիցս երանելւոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի պատմութիւն, Ագաթանգեղոս ուսուսցէ։ Իսկ զոր առ Աղուանս գործ ընդձեռն մանկանն Գրիգորի, գտանի յայսմ մատենի։

«Վասն զի մեծին Գրիգորի կամ էր ։ ոչ նստել յաւաքելական յայն աթոռ, 2 հրեշտակ Աստուծոյ եկեալ առ նա, ասէ, ոչ հեստել և արհամարհելով է յամառելդ ի խոնարհութեան կարգի, այլ քաջանալ և առնուլ զկրկնակի անանցականութեան պատիւն զոր վասն քահանայութեանն շնորհի Աստուծոյ»։

ա. Պատմ. աղ. խումբ. ա. գիրք. ա. գլուխ ԺԴ (14)։
1. Ձմ. ամս.։ 2. Ձ. օձախառն։ Փմ. յօձախառն։ 3. Մ. նուիրօք։ Եփ. նուիրօքն։ 4. Ձ. զոհիւքն։ 5. Մ. պակասի իբրև։ 6. Մ. յաւելու. տային նոցա։ 7. Փմ. մոլոգնել։ 8. Մ. մարմինս։ 9. Փ. ընութիւն։ Մ. ի ընութիւն։ 10. Փմ. յեղէգն։ 11. Մ. մինչև։ 12. Ձմ. ցփորքունս։ 13. Ձ. յանուն։
1. Մ, հարուածոյդ։ 2. Ձշմ. եթէ։ 3. Մ. պակասի. սրբոյն։ 4. Ձմ. յամենողորմէն։ 5. Փ. զհոգւոյն։ 6. Ձշմ. հրեշտակ։ 7. Փ. Գորիգոր։ 8. Փ. հեստել։ 9. Ձմի. յամառել։ 10. Փ. շնորհին։ 11 Ձմ. յԱստուծոյ։
1. Ն. կամբր։ 2. Ն. յԱթոռ։

Կը շարունակուի.

Խ. Վ.

---

1. աբ. այսհալաճ։ 2. ա. եռահնգեաց։ 3. ա. զայսքնազեանս։ բ. զայսք աշեանս։ 4. ա. որո։ 5. բ. գործէ։
1. Բն. եկեալ։ 2. ա. պակասի. սրբոյ։ 3. աբ. Ջ ակամբ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԱՍԱՆԵԱՆ ՏԷՐՈՒԹԵԱՆ.

Թ. ՆԻՕՂԴԷՔԷՅԻ.

(Շարունակութիւն) *

Ամրագոյն քաղաքների մեծով, որոնք մեծամեծ գումարներ էին տալիս իբրև փրկանք, անցնում էր նա, իսկ դիմադրողներն առնում էր կըռուովը։ Ամէնից առաջ այգպիսի վիճակի ենթարկուեց համաշխարհաբաղաք Անտիոքը։ Զօրքն այդտեղից անչափ աւար տարաւ իւր հետ, դրանց մէջ շատ գեղարուեստական ճարտարագործութիւններ, քաղաքն այրեց և բնակիչներին գերի վարեց։ Այսպէս կոչուած «Հռոմէական» ծովի եզերքն հասնելուց յետոյ, յաղթական կերպիւ անցաւ նա Հիւսիսային Ասորիքի և Միջագետքի միջով արևմուտքից դէպի արևելք։ Դարա ամրոցն էլ, որ իբրև դաշնագրութեան հակառակ կառուցուած մի բերդ միշտ պարսիկների աչքին փուշ էր, ստիպուած եղաւ փրկանք վճարելով ազատուել։ Միայն Խառանի բնակիչները, որ ըստ մեծի մասին հեթանոսներ էին, ուստի և Հաւանօրէն համակրելի կը լինէին մի ոչ քրիստոնեայ տէրութեան, առանց փրկանքի ազատուեցան։

Ամառուան վերջին, առանց բաց դաշտի վրայ դիմադրութեան հանդիպելու, յետ դարձաւ նա Տիգրոն։ Հին բարբարոսական այն սովորութիւնը, որով ամբողջ քաղաքների և երկրների բնակիչներ գաղթեցնում էին, Սասանեանները պահպանել էին, Բայց Խոսրովն առաւել ևս քան Շապուհ Բ.-ը այս միջոցը գործ դնելուս նպատակ ունէր արևմուտքի կրթութիւնն և ճարտարութիւնն իրեն ծառայեցնելու։ Գերի բերուած Անտիոքացոց[1] համար հիմնեց նա իւր մայրաքաղաքին մօտ մի յատուկ քաղաք «Խոսրով—Անտիոք», որ «Հռոմների քաղաք» և կոչուում է։ 2 Այս քաղաքը նա շինել տուաւ կարելի եղածին չափ արևմտեան ձևով։ Նոր քաղաքացիների համար նա լաւ հոգ տարաւ, նրանց շնորհեց կրօնական ազատութիւն, մինչև իսկ մի քրիստոնեայ քաղաքապետ կարգեց նրանց վրայ։ Այս քաղաքի հիմնարկութիւնը մի յիշատակի արժանի փաստ է Հռոմէական քաղաքակրթութեան ճանաչողութեան համար։ Քաղաքիս բնակիչները պահեցին իրենց բոլոր ու վարքը մինչև պարսից տէրութեան անկումն, և օրինակի աղագաւ ձիարշաւներն այդտեղ նոյն եռանդով էին շարունակում, որպէս և հին Անտիոքում։

Պատերազմի երկրորդ տարում Խոսրովը կանչեցուելով Լազիստանի բնակիչներից արշաւեց դէպի այն կողմն, հասաւ մինչև Սև ծովը և առաւ ամուր Պետրա քաղաքը։ Միջագետքում քանի մի տարի շարունակ փոփոխակի յաջողութեամբ կռիւ մղուեցաւ, 546-ին զինադադար եղաւ հինգ տարով, ընդհիւ այն հանգամանքի, որ Հռոմները մի նշանաւոր գումար վճարեցին պարսիկներին։ Լազիստանը սակայն խաղաղութեան մէջ ընդունուած սահմանից դուրս մնաց, նոյնը տեղի ունեցաւ և 553-ին, երբ խաղաղութեան դաշն էլի հինգ տարով երկարացուեցաւ։

Երկու տէրութիւնների սահմաններում բնակող արաբացիք էլ այդ միջոցներին շարունակում էին կռուել միմեանց հետ։ Մինչև 556-ին խաղաղութիւն հաստատուեցաւ և Լազիստանում, ուր Հռոմները յաջողութիւններ էին ունեցել, և 562-ին Յուստինեան տների ժամանակ մի խաղաղութեան դաշն կռուեցաւ 50 տարով։ Հռոմները պարտաւորութիւն յանձն առան վերստին տարեկան մի նշանաւոր գումար վճարելու, պարսիկները հրաժարուեցան Լազիստանից, բայց այն խնդիրը, թէ ո՞ւմ պիտի պատկանի այդ երկրին Հարևան Սուանեան, մնաց անորոշ։ Իրրև մի բացառութիւն յայտնի են մեզ այս դաշնագրութեան յօդուածները. դրանց մէջ նշանաւոր է այն, որ Հռոմները Պարսկաստանի քրիստոնէից համար կրօնի կատարեալ ազատութեան պայմանն ընդունել են տալիս, բայց իրենք էլ ընդունում են, որ դրանց զօրաստեղծների մէջ քարոզութիւն անելն արգելուած է (և ի հարկէ, այդ արգելքի դէմ գործողներին խիստ պատիժ տալը դաշինքի խախտում չէ կարող համարուել)։

Զինադադարների (547—562) ընթացքում մեծամեծ փոփոխութիւններ տեղի ունեցան արևելքում։ Այդ ժամանակներում Հիւսիսային (Պարսկաստանի) անապատներում մի զօրաւոր տէրութիւն էր կազմուել. դա էր Թիւրքերի տէրութիւնը, որոնց անուն այժմ առաջին անգամ արևմտեան ազգերին յայտնուեցաւ։ Թիւրքերի Թագաւորը (Խաքան), որ յունական աղբիւրներում Զիլզիբոլոս և Պարսկա—արաբականներում Սինջիրու[1] է կոչուում, գրաւեց Հեփթաղների Ոքսոս գետի աջ ափի երկրը-

---

* Տես Արարատ, № 12 1895.

1. Տես Սեք. Բ. գլ. ե.

1. Սեք. *ibid.* վեց Անձատոք Յոսրով, զոր անուանեալ Շահաստանին Ոլնոյ կոչեն։ Անձատոք աղաւաղուած է Անտիոքից։ Ծ. Թ.

1. Տես Մովսէս Կաղանկատուացի, Մոսկվա 1860. Գիրք Բ. գլ. ԾԱ. ԾԱ. «Քեռու Յաքան։ Ծ. Թ.

ները, իսկ հաւանօրէն դրա հետ միաբանած Խոսրովը տիրեց ձախ ափի երկրներին (560)։ Այսպէս ուրեմն Բակտրիան, որի տերերից Պարսկաստանն այնքան չարիք էր տեսել, միացուեցաւ Սասանեան տէրութեան հետ և Պերոզի կորստեան վրէժը լուծուեցաւ։ Թէ ինչքան պարսից աւանդութիւնը ուշ ժամանակումն է հաստատուել, կարելի է այն տեղից նկատել, որ առաջին անգամ այս ժամանակ ձեռք բերուած Ոքսոսի սահմանը համարուում է իրրև ի սկզբանէ անտի գոյութիւն ունեցող մի սահմանագիծ Իրանի և Թուրանի մէջ և Թիւրքերին միշտ դրացի է համարում Իրանցիների հետ։ Թէպետ և Խոսրով ամուսնացաւ Խաքանի աղջկայ հետ իւր բարեկամական դաշն ամրացնելու համար, բայց շուտով այդ բարեկամութիւնը փոխուեցաւ թշնամութեան, որ Թիւրքեստանի և անապատների տիրապետների ու Խորասանի տէրերի միջև գրեթէ բնական մի բան է։ Խոսրովի այլ աշխարհակալութիւններն էլ այս ժամանակին պիտի վերաբերին։ Երբ պարսիկը խաղաղութեան դաշն կռնելու ժամանակ յայտնում է, որ իւր տէրը իւր թագաւորութեան օրուանից արդէն 10 ազգեր է նուաճել, և երբ աւանդութիւնը 7 արևելեան երկրներ է թուում, որոնց նա տիրել է, մինչև իսկ ժամանակով ձախորդութեամբ կորցրած երկրները տէրութիւը կրկին նուաճել է, դա գրեթէ նոյն միտքն ունի։ Պարսից պարծենկոտ բարքն աչքի առաջ ունենալով՝ չէ կարելի այդ բոլորին բառացի կերպով հաւատալ։ Որ Խոսրովը երբ և իցէ տիրած է ամբողջ Աֆղանիստանին և Սինդին, ինչպէս կը հետևի վերևի յիշատակութիւնից, շատ անհաւանական է։ Սակայն աներկբայ է, որ նա տէրութեան արևելքն ամէն կողմից ընդարձակել ու ապահովել է։ Բացի սրանից պարսկական համբաւները սրա մասին բոլորովին առասպելական են. օրինակ, սրան վերագրում են Ցէյլոն կղզու նուաճումն։ Պարսիկները սրան համարում են Վռամ Ե.-ի պէս տիեզերակալ։

Քիչ արկածախնդրական էր իսկապէս Եմենին տիրելու ձեռնարկութիւնը (շուրջ 570)։

Այս երկրին տիրել էին 525-ին քրիստոնեայ հաբէշները, Եմենի իշխաններից մին խնդրից Խոսրովին, որ իրեն օգնէ երկիրը այդ սեմականներից ազատելու համար։

Սակաւիկ մի տատանուելուց յետոյ թագաւորը ծովով ուղարկեց մի փոքրիկ բանակ Վահրիճի հրամատարութեան ներքոյ, որ յիրաւի արիւնհեղ անզօր տիրապետութեան վախճան տուաւ և երկիրը հպատակեցրեց Խոսրովին։ Այսպէս մնաց այս երկիրը ձևական կերպով պարսից իշխանութեան տակ, մինչև մահմետական դառնալը, սակայն բացի հարկ ուղարկելուց, որ անշուշտ շատ ողորմելի բան էր և որ հազիւ թէ կանոնաւոր կերպով գալիս էր, տէրութիւնը այդ հեռաւոր գաւառից ոչ մի օգուտ չէ ստացել։ Մի այնպիսի անծովագնաց ազգի համար, որպիսին պարսիկներն են, անօգուտ է որևէ երկիր, որի ափը կարելի է դուրս գալ նաւով յարմարապէս։ Մի պարսկա-եմենեան ծովային վաճառականութեան ոչ մի հետք չենք գտնում։ Շատ կարելի է որ Խոսրովը աչքի առաջ ունեցած լինի հարաւ արևմտեան Արաբիան գրաւելով վաճառական օգուտներ հռոմներից խլելու և պարսիկներին սեփականացնելու, ինչպէս որ առհասարակ վաճառականական յարաբերութիւնները տէրութեան թշնամական և բարեկամական յարաբերութեանց մէջ գեր են խաղում։ այսպէս մանաւանդ առանձին գեր էր խաղ ում Մետաքսի վաճառականութիւնը ներքին Ասիայի հետ։

Առանց ներքին կռուի չիշխեց Խոսրովը։ Մերձաւորապէս 551-ին նրա որդի Անօշազադը, որ մի յանցանքի համար Սուղիանա էր աքսորուած, լսելով որ իւր հայրը ծանրապէս հիւանդացել է, արքայ հրատարակեց իրեն և ապստամբեցաւ։ Սա յենուեցաւ քրիստոնէից, իւր մօր կրօնակիցների վրան։ Սակայն նա շուտով նուաճուեց և գերի բերուեց։ Նրան սպանել չը տուաւ Խոսրովը, այլ դէմքի մի թեթև փոփոխութեամբ թագաւորելու անընդունակ դարձրեց։

Խոսրովն իւր թագաւորութեան վերջին տարիները կրկին հռոմների հետ կռուել ստիպուած էր։ Սրանք բարեկամացան Թիւրքաց Խաքանի հետ, որ այժմ Պարսկաստանի վտանգաւոր թշնամին էր դարձել։ Պարսիկներն աշխատում էին հռոմների ու Խաքանի յարաբերութիւնները ըստ կարելոյն խանգարել։ Հռոմները բացի դրանից գանգատում էին Եմենի քրիստոնէական տէրութեան կործանելու մասին։ Սակայն սրանք երկրորդական բաներ էին։

Մինչև իսկ Յուստին Բ. (565 թ. Նոյեմբ. 14—578 թ. 6 Հոկտ.) կայսեր գաշնագրութեան համաձայն որոշուած տարեկան հարկի վճարի գադարումն պատճառ չէր լինիլ անմիջապէս կռուի բացուելուն։ Սակայն պարսիկները կարող չէին հանդարտութեամբ դիտել, թէ ի՞նչպէս յանկարծ բոլոր Հայոց աշխարհը հռոմէական դաշինք։ Այդ նախարարները երկին խոստանում ամրոցներ, ենթադրականներն և մեծատոհմիկ ամբոխը ուժով ելան, երբ Դաւին մայրաքաղաքում պարսիկները մի կրակատուն սկսան շինել, և Եուբէն 1

1. Նոյն հին ցեղից, որի անդամներից մին 600 տարի առաջ Նրասոսին սպանել էր։

պարսից սպանուեցաւ (57։ գլուխը)։ Ապստամբները չկրցին։ Պոլիս նորնախ վարուեց վրաց թագաւորի հայասպանի ձեւակերպով։ Երբ անընդհատ կայսրն երեսկայից ըն ալ երես երկրներն էլ կրկին հաւատարիմ պարսից և երեսաս էլ առաս իր հովանաւորի։ Այսպես պատերազմը հրադադարեցաւ էր ապրին։ Ինչքան էլ որ մինչ այս պատերազմի մասին լաւ ժամանակակից զեկուցումներ ունենանք, այսու ամենայնիւ պակասում է մի կատարեալ ժամանակագրական ստոյգ ընդհանուր տեսութիւն։ Մծբինը հէնց սկզբում հռոմէներից իզուր պաշարուեցաւ, ընդհակառակն Պարսկաստանի Խոսրովն առաւ վերամեայ պաշարումից հետքը (573)։ Նոյնաժամանակ նրա Ադարմահան զօրավարն յարձակուեց Եփրատի աջ ափիցը Ասորիք և նոյնպիսի աւերումն գործեց, ինչպես 540 թուի բանակը։ Առանձնապէս քանդեց նա Ապամիան և բնակիչներին գերի տարաւ։

Պարսից առաջ Միջագետքի միջով անցնելուց յետոյ, միացաւ նա արքայի բանակի հետ։ Գերիների ըստ մեծի մասին բնակեցուեցան Նոր—Անտիոքում։ Տիբերիոսը, որ Սոֆիա կայսրուհու հետ կ. Պոլսում կառավարում էր և 574 թուի դեկտ. 7-ից սկսած ձևական կերպով էլ աթոռակից էր անուանուած, խաղաղութիւն էր ցանկանում։ Սակայն մի եռամեայ զինադադարի ընդունուելն անգամ կատարեալ խաղաղութիւն չը բերաւ։ Հայաստանն խախտէս զինադադարի դաշնի վրայ չէր առնուած։ Արդ Խոսրովը 575 թուի ակզբին ինքն անձամբ Հայաստան յարձակուեց և սաստիկ անգութ ինչպէս պատերազմեցաւ։ Հարկաւ նա ոչնչացրեց եղած հռոմէական փոքրիկ բերդերի փոքրերն առաջ։ յետ չդարձաւ։ Սրանք աւարի առան նոյն իսկ Խոսրովի բանակը, սակայն չը կարողացան արգելել, որ նա Սեբաստիան և Մելետինէն չայրէ և անվտանգ յետ չը դառնայ իւր երկիրը։ Նրան հալածող հռոմէները ընկան և գրաւեցին պարսից հայասպանի մեծ մասն և այնտեղ էլ յաղթեցին, բայց հէնց յաղթող պարսիկ այնտեղից դուրս վռնդուելին։ Սրանց մինչև նոյն չէր յաղթուել այդ աղքի համառութիւնը գրաւել, որ ընկերակ երջանիկ էր, բայց չէր պատճառում հռոմէներին գերութիւն երկիրն, այլ հերքուածողական դաւանութիւն։ Նման էր յաղթած (?!)։ Սակայն զինադադարի վերջանալուց առաջ պատերազմ բռնկաւ և Հայաստանի սահմանները յետ, որ հռոմէները պարսիկներից աւելի մեղմասիրաբար չը վարուեցան, երևում է նրանից, որ նրանք պարսից սահմանակից Արզանենէ Նահանգի քրիստոնեայ բնակիչներին գերի վարեցին. դեռ մի առանձին շնորհ համարուեցաւ այն, որ դրանց բնակավայր տուին Կիպրոս կղզու վրայ (577)։ Խաղաղութեան համար բանագնացութիւնները կրկին և կրկին նորոգուում էին։ Նորագոյն փորձառութիւններից յետոյ կ. Պոլսում գնաց Ցուստինոսեան պատրիկ Հայաստանից և Բրատոնից։ Պատուոյ խնդիր կազմող կէտի վերաբերութեամբ, այն է՝ կ. Պոլիս փախած հայ աշխարհական և եկեղեցական մեծամեծներին պարսից վրէժխնդրութեան չը յանձնելու վերաբերութեամբ, արդէն իսկ համաձայնութիւն կարող էր կայանալ։ Պայթակղութեան քար մնաց Պարսից ամրոցը, որի վերադարձման վրայ հռոմէներն հաստատելի կերպով պնդում էին։ Այսուամենայնիւ համաձայնութիւնը կը կայանար և խաղաղութիւնը գլուխ կը գար, եթէ Տիբերիոսի միահեծան կայսր դառնալուց (4 կամ 6 հոկտ. 578) քիչ յետոյ Խոսրովը չը մեռներ (մերձ փետր. 579)։

Նոր թագաւոր Որմիզդ Դ.։ Խոսրովի և Թիւրք Խաքանի աղջկան որդին։ ամբարտաւան էր և նոր ձեռնարկութիւններ սիրող։ կ. Պոլսում դժգոհ մնացին այն բանից, որ նա մինչև իսկ իւր գահակալութիւնը չը յայտնեց, մինչդեռ երկու արքունիքն էլ այդպիսի յայտարարութիւններ մինչև իսկ պատերազմների ժամանակ ամենայն ձևակատարութեամբ անում էին։ Յոյն ժամենագիրներն Որմզդի վրայ առ հասարակ վատ են խօսում։ Պարսկական աւանդութիւնն էլ պատմում է, որ նա չարաչար էր և շատ արիւն է թափել։ Որ նա իւր եղբայրներին սպանել է գահակալութեան ժամանակ, գիտենք մի ժամանակակցից, որ սակայն ինքն է յայտնում, որ այդ մի բարբարոսական և պարսիկ սովորութիւն էր։ Աւանդութիւնը սակայն միւս կողմից ասում է, որ նա առանց անձի պատուին նայելու ամենայն խստութեամբ արդարադատութիւն էր անում և հասարակ մարդկանց պաշտպանում էր մեծամեծների ընդդէմ։ Նրա խստութեան ենթարկուում էին միայն մեծամեծները։ Սրան համաձայնում է և այն հանգամանքը, որ նա հասարակ հետևակ գնդերը խնամում էր, իսկ աղնուականներից կազմուած զրահաւոր հեծելազորի պատիւը նուազեցնում էր։ Մոգերին ևս գրգռեց նա, և այն էլ իրեն մեծ պատիւ բերող մի վճռով, երբ նրանց քրիստոնեաներին նուաստացնելու բաղձանքը հեգնօրէն մերժեց։ 2

Մասամբ ինչ սա նմանում է Յազկերտին, որին և ճակատագրակից եղաւ։ Սրա գժբաղդու-

---

1. Սեբէոս գիրք Բ. եր. 39 գիրք Գ. գլ. Բ. եր. 52։

2. Նրա խօսքերն են. «Ինչպէս որ մեր արքայական գահը չի կարող իւր երկու առաջի ոտների վրայ կանգուն մնալ առանց երկու յետեւի ոտների, այսպէս էլ կանգուն չի մնալ եւ ապահով չի լինիլ մեր թագաւորութիւնը, եթէ մենք քրիստոնեաներին եւ մեր կրօնը չը դաւանող այլակրօններին մեզ դէմ գրգռենք։ Ուստի թողէք յարձակումները քրիստոնէից դէմ, սակայն եռանդով աշխատեցէք

Թիւնն այն էր, որ աշխարհական և հոգևոր մեծա-մեծներին չկարողացաւ այն մտաւոր գերիշխանութեամբ ղեկավարել, ինչպես իւր հայրն։

Նրա թագաւորութեան բոլոր ժամանակը պատերազմը հոռոմների հետ անընդհատ շարունակուում էր։ Բանագնացութիւններն կրկին և կրկին ընդհատուում էին։ Դրան աւելացաւ և մի դժուար կռիւ Թիւրքերի հետ։ Որմիզդը դրանց դէմ ուղարկեց Բահրամ Չուբենին։ Սրան յաջողուեց Թիւրքերին, յատկապէս երևի Խաքանի ստորադրեալներից մեկին, փառաւոր կերպով յաղթել և մեծ աւար առնել նրանցից, իբր թէ մինչև իսկ Թիւրքերին հարկադրեց հարկ վճարել պարսիկներին, փոխանակ այն հարկի, որ պարսիկները վճարում էին Թիւրքին։ Յաղթական զօրապետը ուղարկուեց (589) Կովկասի հարաւային կողմի երկրները, որպէս զի այնտեղից հոռոմներին մի մեծ հարուած հասցնէ։ Սակայն այնտեղ Բահրամը կորի գլուխ յաղթուեցաւ։ Որմիզդն արդ յիմարութիւն ունեցաւ այս փորձառու զօրավարին, Միհրան տան Նահապետին, խայտառակութեամբ պատուազուրկ անելու։

Բահրամն ի պատասխանի այս վարման ապստամբեց։ Իւր բանակը հաւատարիմ մնաց իրեն, երևի նա գիտէր, թէ ի՞նչքան աւագանին դժգոհ էր, նոյնպիսի յոյս կարող էր ունենալ զօրագնդի դժգոհութեան վրայ։ Ճիրաւի ապստամբեց և Միջագետքի բանակը, որ հոռոմներից յաղթուելով մեծբին էր քաշուել և թագաւորի պատժից էր վախենում, սա էլ միացաւ Բահրամի հետ առանց սակայն իւր ինքնուրոյնութիւնը կորցնելու։ Բահրամն արդէն ճանապարհին էր դէպի մայրաքաղաքը և հասել էր մինչև մեծ Զաբը (այսօրուան Մուսուլից ոչ հեռու), երբ մի թագաւորական բանակ նրա ընդդէմ գուրս եկաւ։ Սակայն այս բանակն էլ ապստամբեց, բայց ոչ յօգուտ Բահրամի, այլ թագաւորի որդու Խոսրովի։ Փիչ յետոյ այս բանակի մի մասն արդէն մայրաքաղաքումն էր, ուր Որմիզդն այս գոյժերից դրդուած Մարաստանից շտապել էր, և ապստամբութիւնը խռովում էր Տիզբոնը։ Այնտեղ բանտարկուած էր Բինդոյէն 3 (Bindôë) (մի վիճակ որ միշտ սովորական էր ապրելեան իշխանների համար), սրա քոյրը Խոսրովի մայրն էր։ Սրա եղբայր Վստամը (Bistâm' Vistahm) ուժով ազատեց նրան բանտից և այն ժամանակ աւագանին Որմզդին վայր առաւ և Խոսրովին թագաւոր անուանեց (590-ի ամառը)։ Խոսրովն իւց հօր հետ վատ յարաբերութիւնների մէջ էր և անշուշտ այդ ապստամբութիւնից անմասն չէր։ Թէ ի՞նչքան արդեօք նա յանցաւոր է նրանից յետոյ տեղի ունեցած Խոսրովի մահուան մէջ, չենք կարող ստոյգն իմանալ. երևի նա թոյլ տուաւ կատարելու այն, ինչ որ ինքը չէր կարող արդիլել։

(Կը Շարունակուի)

Ն. Քարամեան

բարի գործեր ունենալու, որպէս զի քրիստոնեաները եւ միւս այլակրօնները այդ տեսանեն, ծեզ դրա համար գովեն եւ դէպի ծեր կրօնը գրաւուին։ Ի՛նչպէս այս «տեթանոսը» իւր անգիտակից ցուցմամբ (տ. Մատթ. գլ. Ե. 16.) ամաչեցնում է հին եւ նոր ժամանակի քրիստոնեաների անհամբերողութիւնն։

1. Սեբէոս, Գիրք Բ. գլ. Բ. 52. «Վահրամ Մերհեւանդակ» է կոչում սրան։

2. Սեբէոսը նոյն տեղում (եր. 55) չէ յիշում կովկասեան արշաւանքն եւ Բահրամի ապստամբութեան պատճառ է համարում թագաւորի կոպիտ վարմունքը, որովհետեւ Որմիզդ գոհ չը լինելով թիւրքի պատերազմից ստացած աւարից, աւելին էր պահանջել։

3. Սեբէոս, Գիրք Բ. գլ. Բ. 57. Վնդոյ է կոչում սրան, որի հետ երեւի Խոսրովն էլ կալանատորուած էր Գրուանդակերտում։

4. «Ծագումն հայ տոհից» գրեց տօք. Ն Տաղաւարեան Վիէննա. Մխիթ. տպ. 1895։

* «Մուրճ» ամսագիր 1895։

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ·

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉԸ ԳԻՐՔ ԱՅՐԸ՞Լ Է։

Մեր ծանօթներից մէկը՝ Պ. Տաղաւարեան, նորերս մի տեսրակ է հրատարակել հայ տոհերի ծագման մասին։[1] Այդ մի համառօտ ամփոփումն է հայ տոհերի ծագման և գիւտի պատմութեան մասին եղած բազմաթիւ և բազմազան կարծիքների։ Տեղ տեղ հեղինակն աւելցնում է և իւր դիտողութիւնները։ Մեր նպատակը չէ այստեղ քննութեան առնել գրուածքի արժանաւորութիւնները կամ թերութիւնները։ Հայ գրերի գիւտի պատմութեան աղբիւրների վրայ խօսելու շուտով մենք առիթ կունենանք մի ուրիշ հրատարակութեան մէջ, որտեղ արդէն մասամբ լոյս է տեսել մեր մի քննագատականը* (Գարագաշեանի Հայոց պատմութեան)։ Այս երկասղովս մեր նպատակն է մասնաւորիշ լինել մի շատ տարածուած,

---

5. «Ծագումն հայ տոհից» գրեց տօք. Ն Տաղաւարեան Վիէննա. Մխիթ. տպ. 1895։

* «Մուրճ» ամսագիր 1895։

դասագրքերի մէջ մոռաց և ամէն մի յայլոյ և անյաջող դէպքում կրկնուած առասպելի վրայ, որ անցնում է գրեթէ ղուտ ճշմարտութեան տեղ։ Այդ առասպելը վերագրում է հայերին մի ամբողջ հայ գրականութիւն Մեսրովբեան գրերի գիւտից առաջ։ Այդ հայ հեթանոսական գրականութիւնը իբր թէ ծաղկում էր մինչև Գրիգոր Լուսաւորիչ։ Սա՝ լուսաւորելով հայ աշխարհը քրիստոնէական վարդապետութեամբ, իբր թէ ջնջեց այդ ամբողջ հայ գրականութիւնը, այրեց մատեանները, անհետ կորցրեց հին տառերը, այնպէս որ մինչև անգամ գրելու արուեստը մոռացուեց, որով և Մեսրովբը ստիպուեց նոր գրերի կամ հին կորած գրերը գտնելու հետևից ընկնել։ Բերենք մի հատուած այս հանրածանօթ առասպելից մեր բարեկամ պ. Տաղտաւարեանի խօսքերով. «Ե՞ր եւ ևինչո՞ւ քարձի թողի եղան ազգային գրերն»։—Հաւանականապար ազգային տառերն գոնէ ի մեհեանս ի գործ ածեալ էին մինչ ցԳրիգոր Լուսաւորիչ. սակայն սա՝ ըստ վրկայութեան պատմչաց՝ քանդեց մեհեաններն, կոտորեց արձաններն, բնաջինջ ըրաւ և ընդ նմին ինչ որ որևէ հետք կը կրէր հեթանոսական, որպէս նաև մատեաններն և արձանագրութիւնները՝ որ հեթանոսական ներշնչմամբ գրեալ էին, արգիլել տուաւ նոյն իսկ ազգային գրերու գործածումն, դի բանալիք հեթանոսական դրականութեան նը կառնէին։ Գրիգոր Լուսաւորիչ կրթութեամբ յոյն, ի ձեռն յոյն կղերին, յունական լեզուաւ կատարել տար ոչ միայն ընթերցուածն Սուրբ Գրոց, այլև գուցէ եկեղեցական պաշտամունք։ Այսպէս անհետացուց հայ գրերն և գրականնութիւնն ի հայս՝ որոց մնացորդներն գուցէ գտնուին օր մը վրատակաց տակ»։ (եր. 10—11)։

Մենք չգիտենք թէ ո՞ր պատմիչն է Լուսաւորչի մասին գրողը իբր թէ նա զրեր եւ զրականութիւն ջնջեց։ Եթէ իրրև պատմական իրողութիւն համարենք հրաշապատում Ագաթանգեղոսի Լուսաւորչին արձաններ և մեհեաններ կործանել տալը, յայտնի է սակայն, որ այդ արձաններն էլ ոչ թէ հայ՝ այլ յոյն արուեստագէտների գործ էին, և չէին ոչ գիր և ոչ գրականութիւն։

Եթէ ենթադրեալ հայ հեթանոսական գրերը «իբր բանալի հեթանոսական գրականութեան ջնջուում էին» հապա ինչպէս էին յոյն գրերը գործածուում։ Յունարէն հեթանոսական գրականութիւն չկա՞ր, մեռե՞լ էին Ոլիմպոսի աստուածները։

Սակայն չարժէ նոյն իսկ լուրջ հերքման ենթարկել մի առասպել, որ շատ և շատ անգամ կրկնուելով կատարեալ նախապաշարումի պէտ է առացել և պ. Տաղտաւարեանը միակը չէ այդ անհիմն ըրոյցով նախապաշարուածը։

Բայց կայ մի ներքին զօրեղ պատճառ, որով բացատրուում է այդ անհեթեթութեան, այդ առասպելի կենսունակութեան պէտը։ Ահա այդ պատճառը։ Հայերի հին, հեթանոսական, գիր և գրականութիւն ունենալը դուր է գալիս մեր ազգասիրութեանը, շոյում է մեր անախտաւորութիւնը, ջնում է մեզ հին լուսաւորեալ և քաղաքակիրթ ազգերի շարքը։ Մինչդեռ պատմական ճշմարտութիւնը բոլորովին այլ կերպարանք ունի։

Հայաստանում գտնուած բևեռագրերը նախահայկական են կամ «խալտեան»։ Յամենայն դէպս դեռ պակասում են գլխովին այն փաստերը, որոնցով հնարաւոր լինէր այդ գրութեանց հայկական լինելը ապացուցանել։[1] Քրիստոսից հինգ դար առաջ՝ երբ առաջին անգամ յիշուում են հայերը մեր գրացի քաղաքակիրթ ազգերի արձանագրութեանց մէջ, և Քրիստոսից հինգ դար յետոյ՝ մինչև Մեսրովբ ամբողջ հազար տարի, մեր պապերը չեն ունեցել գիր, ոչ էլ կարօտութիւն են զգացել սեպհական գիր ունենալու։ Քրիստոնէութիւնն էր որ այդ պահանջը ըղ-

1 Ձենք խօսում Կիլիկեան կամ Տաթեան նշանագրերի մասին, որոնց Ենսէնը փորձեց լուծել հայերէնով։ Այս նոր գիտնական ենթադրութիւնը դեռ շատ ջուր կը վերծնէ։

գալ տուեց, քրիստոնեութիւնն էր որ տուեց մեզ լուսաւորութիւն, գիր, մատենագրութիւն: Եւ այս մի առանձնական երեւոյթ չէ. բոլոր նոր ազգերը քրիստոնէութիւն ընդունելով՝ ձեռք են բերել և իրենց ազգային գրերն ու մատենագրութիւնը: Մինչև անգամ յանգուգն է թուում իսկ՝ պնդելը, որ մենք նոր ազգ ենք, այն մտքով՝ ինչպէս նոր են անուանում եւրոպացի ազգերը, և ոչ բնաւ հին քաղաքակրթ ազգ: Երևակայեցէք մի քաղաքակրթութիւն, որ սեպհական գիր չունեը և պահանջ էլ չունեը ունենալու: Իսկ եթէ ազգերի հնութիւնը պէտք է հաշուել առանց քաղաքակրթութեան, այլ միայն օտարների յիշատակութեամբ, կամ կիսակիրթ թագաւորների և իշխանների անուանց յուշակով՝ աւանգուած մեզ նոյնպէս օտարներից, այն ժամանակ շատ ուրիշ վայրենի ցեղեր, ինչպէս օրինակ քրդերը, կարող են մտնել հին քաղաքակրթ ազգերի շարքը: Բայց թողնենք այս ամէնը:*

Զրպարտելով Գրիգոր Լուսաւորչին չէ կարելի պատմական ճշմարտութիւնը փոխել. և այս երկտող գրել ոչ թէ Լուսաւորչին պաշտպանելու մտագրութեամբ, ոչ թէ կրօնասիրական ձգտումներով գրգռուեցայ, այլ միայն ցոյց տալու համար այն բազմաթիւ առասպելներից մէկը, որոնցով լիքն են գժբազդաբար մեր պատմութիւնը, մեր գրաբոցական գաւազրքերը, այսպէս անուանուած նոր հետազօտութիւնները, որոնցից սակայն իրաւունք ունինք աւելի շրջահայեցողութիւն և փորը հինչ աւելի տրամաբանութիւն պահանջել:

Կարող ենք ապահով լինել, որ Գրիգոր Լուսաւորիչը ոչ գիրք է այրել, ոչ գիր է ջնջել և ոչ գրականութիւն:

Գ. Տ. Մ.

ԹՈՆԴՐԱԿԵՑԻՔ ՄԵՐ ՕՐԵՐՈՒՄ, ասուածաբանութեան եւ փիլ. պակաւորի Էջմիածնի սարկաւագ ԿԱՐԱՊԵՏ ՏԷՐ ՄԿՐՏՉԵԱՆԻ[Die Thondrakier in unsern Tagen, von Lic. Dr. Karapet Ter-Mkrttschian, Archidiakonus in Edschmiatzin. Zeitschr. f. K. G. XVI, 2. եր. 253—27.]

«Պաւղիկեանները բիւզանդական կայսրութեան մէջ և նման հերետիկոսական երեւոյթներ Հայաստանում» վերնագրով իւր շարադրութեան իբրև լրացուցիչ կարապետ սարկաւագը (այժմ վարդապետ) առաջ է բերել գերման ական «Եկեղեցական պատմութեան ամսագրում» մի համառօտ տեսութիւն այն հայ աղանդաւորների մասին, որ գարուս սկզբում առանձին հոգսեր պատճառեցին Ս. Էջմիածնի հոգևոր վարչութեան: Այդ աղանդի և նրա հետևողների մասին առաջին անգամ խօսել է պ. Ա. Երիցեանը «Փորձ» ամսագրի 1880 հոկտեմբերի համարում: Այս ընդարձակ յօդուածը է ծառայել հեղինակիս համար իբրև աղբիւր: Հայ ընթերցողներին արդէն իսկ ծանօթ են Շիրակի Արխվել գիւղի հերետիկոսների պատմութիւնն և Էջմիածնի սինոդի երկարատև քննութիւնները այդ մասին: Պ. Երիցեանն իւր վերոյիշեալ յօդուածի համար նիւթերը քաղել է ս. Էջմիածնի դիւանի հնադարանից. այժմ կարելի է թերևս աւելի նիւթեր գտնել այդ մասամբ դեռ մութը ճեղքած խնդրի լուսաբանութեան համար, սակայն այն նիւթն էլ, որ արդէն հրատարակուել է, բաւական է որոշ եզրակացութիւնների հասնելու համար: Հ. Կարապետի ձեռնարկութիւնը, որ վերաբերում է Հայաստանում եղած աղանդների հետաքննութեան, սկսում է քրիստոնէութեան մեր երկրում հաստատուելու օրերից և հասնում մինչև մեր ժամանակը. գիտական հեղինակի չանքն է այն ընդհանուր կարն ապացուցանել, որ հայ Մեսալե-

---

* Իբրեւ ապացոյց նախաքրիստոնէական հայ գրականութեան սովորաբար յառաջ են բերուում Փիլաստորոսի լաւ չհասկացուած եւ կասկածելի զրոյցը, Կորիւնից եւ Ղազարից վատ ընթերցուածներով սխալ եւ թերատ, մութ եւ հակասական տատուածներ եւ մանաւանդ՝ o sancta simplicitas! Ագաթանգեղոսի «նշնագրերը». նշանագիրը այդ մի հասարակաց տեղի է բոլոր վաղք սրբոցներում:

նականութեան [տես Արարատ 1895· № 2] Պաղիկեանց, Թոնդրակեցոց և ուրիշ հայկական աղանդների մէջ։

Մեր անմշակ եկեղեցական պատմութեան մի այդպիսի մեծակշիռ հետազօտութիւն մեծ ծառայութիւն պիտի անէ անշուշտ. դժբաղդաբար այդ հետազօտութեան հայերէն թարգմանութիւնը դեռ ևս լոյս չէ տեսել, որ շատ ցանկալի է։

Նոր Թոնդրակեցիների մասին այս փոքրիկ հետազօտութիւնը երեք մասից է բաղկացած. առաջին մասում հեղինակը ծանօթացնում է խնդրի պատմութեան հետ, երկրորդում առաջ է բերում այդ աղանդի հաղորդակիցների ցուցմունքն և նոր աղանդապետ Յովհաննիսի կենսագրութեան և նրա աղանդի հիմունքների քննութիւնը, երրորդ բաժինը թարգմանութիւն է «Բանալի ճշմարտութեան» գրքի, որ նոր Թոնդրակեցիների վարդապետարանն է եղել։

Հետազօտութեանս ամենից հետաքրքրական և պատմութեան համար նշանակութիւն ունեցող մասն է այս նոր աղանդի հիմնադրի կեանքի և վարդապետութեան քննութիւնը և այս աղանդի կրկին զօրանալու պատճառների հետազօտութիւնը (եր· 263—264)։ «Բանալի ճշմարտութեան» գրքի թարգմանութիւնը լուսաբանուած է կարևոր ծանօթութիւններով։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՉԱՑ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԱՆԳԼԻԱՑՈՒՄ.

Անգլիացոց գործնականութիւնը առած է զարմանք։ Անգլիական գործնական ուղղութիւնը արդէն նշմարուում է նրանց կեանքի ամէն մի ասպարիզում. այստեղ առաջ ենք բերում՝ անգլիական դպրոցական կեանքի մի երևոյթը, որ նոյնպէս իւր վրայ կրում է գործնականութեան դրոշմը։ Մինչդեռ եւրոպական այլ ազգերը դեռ ևս խարխափում են մանկավարժական փորձի շրջանում, անգլիացիք վաղուց արդէն վճռել են մի շատ նշանաւոր մանկավարժական խնդիր, ժողովրդական դպրոցների ուսուցիչ պատրաստելու խնդիրն, իրենց յատուկ եղանակով, որ իրատական և օրինակելի կարող է լինել և մեզ համար։

1816-ին Անգլիացիք սկզբացրին «Լանկաստերեան» փոխադարձ ուսուցման եղանակը և առաջուայ «մենատորների» տեղը բռնեցին աշակերտ ուսուցիչները։ Ահա թէ ինչպէս են պատրաստում նրանք ժողովրդական դպրոցների համար ուսուցիչներ

Ժողովրդական հօթն դասարանեան ուսումնարանի դասընթացը աւարտելուց յետոյ՝ աշակերտը կարող է մնալ նոյն դպրոցում աշակերտ-ուսուցիչ և ուսուցիչներին օգնել, որքան կարող է։ Իւրաքանչիւր փորձուած ուսուցչի ձեռքի տակ կարող են լինել երեքից ոչ աւելի աշակերտ—ուսուցիչ։ Այդ պատանիները վարժուում են ուսուցչի հսկողութեան տակ դասաւանդութեան և այլ դասարանական պարապմանց և ամենայն տարի ենթարկուում են քննութեան։ Սկզբում այդ պատանիները ամբողջ շաբաթը պարապում էին դաս տալով, բայց այդ ընթացքում նոցա աշխատանքը թեթևացրին. այժմ նոքա միայն շաբաթուայ կէսը նուիրում են այդ գործին, իսկ մնացած ժամանակը նոցա մէջտեղ է որուում իրենց զարգացման համար աշխատելու։ Չորս տարի նոքա մնում են այդ կոչման մէջ. ստանալով կառավարութիւնից փոքրիկ ռոճիկ, նրանք ամէն տարի ենթարկուում են քննութեան, և իւրաքանչիւր յաջող քննութիւն տուող աշակերտի համար գպրոցը նպաստ է ստանում։

Քննութեան առարկաներն են. անգլիերէն թուաբանութիւն, հանրահաշիւ, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն, նկարչութիւն, բարոյաբանութիւն. քննուողը ընտրում է նաև մի հին կամ նոր լեզու,

քնական գիտութիւն, երաժշտութիւն: Ջորս տարուց յետոյ աշակերտ — ուսուցիչը պիտի վերջնական քննութեան ենթարկուի և իրաւունք ստանայ ուսուցչական ինստիտուտ մըտնելու: Այս մանկավարժական գպրոցը մտնելու քննութիւն կարող են բռնել և ուրիշ ցանկացողներ: Քննութիւն բռնողները կոչուում են «արքունի թոշակաւորներ» և կառավարութիւնը յանձն է առնում նրանց ուման ծախսի 75% քանի որ նա ուսուց. վարժոյսմն է: Բայց որովհետև բոլոր քննութիւն տուողների համար տեղ չի լինում, ուստի երրորդ և յաճախ երկրորդ կարգի մրցանակ ստացողները մտնում են իբրև ուսուցիչ ծխական գպրոցներում «ուսուցչի օգնական» անունով:

Մինչև 1890 թուականը բոլոր ուսուցչական վարժարանները գիշերօթիկ էին և կառավարութիւնը իւրաքանչիւր ուսուցչի համար տալիս էր 50· ֆ· ստերլինգ, այնպէս որ ուսուցիչներին հազիւ իրենց ամբողջ ծախսի $^1/_6$ մասն էր մնում վճարել: Թէև ծխական գպրոցների ուսուցչաց կլխից աւելին աւարտել են ուսուց. ինստիտուտներում, բայց կառավարութիւնը դարձեալ մեծապէս հոգս է քաշում նրանց թիւը բազմացնելու, ուստի և թոյլ է տուել բանալ երեւելիների ուս. ինստիտուտներ· այժմ 14 հատ այդ կարգի գպրոցներ են բացուած, այնպէս որ բոլոր այդ կարգի գպրոցների թիւը հասնում է 45-ի: կառավարութիւնը այդ գպրոցներին միլիօնից աւելի փող է տալիս ի նպաստ և բաւականանում է պահանջելիք գիտութեան ամենափոքր չափը որոշելով· ամենևին չէ արգելում աւելին աւանդել, այլ ընդհակառակը քաջալերում է ոչ պարտաւորեցուցիչ առարկաների վերաբերեալ դասախօսութիւնները: Ականատես և ուսումնարանական գործին հմուտ վկաները մեծ գովեստով են խօսում այդ վարժարանների կազմակերպութեան և դասաւանդութեան վերայ: Աւանդուած առարկաներն են· անգլ· լեզուն և գրականութիւն, մանկավարժութիւն և բարոյագիտութիւն, մանաւանդ հոգեբանութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն, հանրահաշիւ, երկրաչափութիւն, նայելով ուսուցչի ցանկութեան՝ կարող է սովորել հին և նոր լեզուներից մէկը կամ մի քանիսը, քաղաքական տնտեսութիւն: Ուսանողն իւր դասընթացն աւարտելուց յետոյ կարող է մնալ դարձեալ մի տարի ինստիտուտում և նրա ընարութեանն է թողնուում լսել կամ հոգեբանութիւն կամ եռանկիւնաչափութիւն, տարրական մեքենայագիտութիւն, լեզուներ հին կամ նոր, բնագիտութիւն և այս բանը դարձեալ քաջալերութիւն է գտնում կառավարութեան կողմից: Ահա թէ ինչու յաճախ պահում են ծխական գպրոցի ուսուցիչների մէջ այնպիսիներին, որոնք լաւ են ուսումնասիրել գեղարուեստի կամ գիտութեան այս կամ այն ճիւղը:

Ուսուցչական ինստիտուտները ունենում են մի քանի օրինակելի ծխական գպրոցներ և ամէն մի ուսանող 2 տարուայ ընթացքում 150 վարժնական դաս տուած պիտի լինի ուսուցիչների հսկողութեան ներքոյ:

Երբ ուսանողը աւարտում է վարժարանի երկամեայ դասընթացը, ենթարկուում է թէ տեսական և թէ գործնական քննութեան և ստանում երկրորդ կարգի մրցանակ· առաջին կարգի մրցանակը պահուում է նրանց, որոնք երկու տարի ծխական գպրոցներում ուսուցչութիւն անելուց յետոյ դարձեալ քննութեան կենթարկուին (թէ տեսական և թէ գործնական)· միևնոյն մրցանակը կարող են ստանալ և վարժարան չմտնող «ուսուցչի օգնականները», միայն թէ այս վերջին քննութիւնը կարողանան տալ:

Ուրեմն այն երիտասարդը, որ պատրաստուում է ուսուցչութեան համար, պէտք է նախ սկզբնական գպրոցում կրթուի 7 տարի, յետոյ 4 տարի էլ պարապի նոյն գպրոցներում ուսուցչի ձեռքի տակ ուսուցանելով և ուսանելով, իւրաքանչիւր տարի քննութեան պիտի ենթարկուի, վերջին տարին նա վերջնական քննութիւն պիտի տայ և եթէ

ստանայ առաջին կամ երկրորդ կարգի վկայական, պիտի մանի ուսուցչական ինստիտուտ։ Այստեղ էլ պիտի ուսանի 2 տարի պարտաւորեալ և եթէ ուզի՝ մի տարի էլ կամաւոր, որ նոր ուսուցչութեան մրցանակագիր ստանայ, այն էլ երկրորդ կարգի։ Այս պատրաստութեան առիթով շրջանում ուսուցչացուն ոչ միայն ձրի է ստանում մանկավարժական կրթութիւնը, այլև որոշ չափով ապրում է կառավարութեան հաշուով։

Այժմ անգլիական թէ կառավարութեան և թէ հասարակութեան զբաղեցնող հարցը աշակերտ-ուսուցիչներն են. միջոցներ են վնտռտւում որ ըստ կարելւոյն այդ պատանիները աւելի լաւ պատրաստութիւն և պաշտօն ձեռք բերեն, վարձ են անում կազմել նոցա համար առանձին դասարաններ և դասաւանդութիւնը յանձնել արդէն անուն հանած ուսուցիչների։ Այժմ տեսնենք թէ այսքան խնամքով պատրաստուած ուսուցիչներին ինչ չափով վարձատրում և գործելու ազատութիւն են տալիս և վերջապէս ուսուցիչներն էլ որքան նպաստում են գործին։

Ուսուցիչներին կատարեալ ազատութիւն է տրուում իւրեանց աստպարիզի մէջ. թէ կառավարութիւնը, թէ լուսաւորութեան նախարարութիւնը, թէ վերատեսուչները միայն քաջալերում և հսկում են ցոյց տուած արդիւնքների վերայ։ Նորանք չեն պարտաւորեցնում ոչ դասաւանդութեան այս կամ այն եղանակը, ոչ պարապելու ձևը, ոչ դասագրքերի ընտրութիւնը։ Ընդհակառակը կառավարութիւնը պահանջում է, որ վերատեսուչները նայեն իրենց գործի վերայ ոչ իբրև քննագատներ կամ քննիչներ, այլ ուսուցիչներին օգնող և խորհրդատուներ։ Ուսումնարանական գործին վերաբերեալ հրատարակուող «Կապոյտ» գրքի մէջ տպուում են մանրամասն հաշիւ և տեղեկութիւններ, որոնցից մեծապէս օգտուում են այդ հարցով զբաղուողները։

Ժողովրդական ուսուցիչները ստանում են միջին թուով 120 ֆ. (1200 ռուբլու չափ) սաերլինգ, իսկ ուսուցչուհիները 77 (770 ռ.) բայց կան և այնպիսիները որ մինչև 300 ֆ. (3000 ռ.) են ստանում։ Ռոճկի բարձրանալը կապ ունի քննութեան ժամանակ երևցած արդիւնքից։ Ուսուցիչների գործունէութիւնը միայն ուսումնարանով չի սահմանափակուում։ Անգլիայում ինչպէս ամէն արհեստի մարդիկ ունին իրենց ընկերութիւնները, նոյնպէս և ուսուցիչները, որոնք զանազան նպատակների են դիմում—գիտնական, մարդասիրական, փոխադարձ օգնութեան և այլն։ Այդ ընկերութիւններն ունին և իրենց պարբերական թերթերը, որոնք մեծ հեղինակութիւն են վայելում Անգլիայում, շատ անգամ և օտար երկրներում, զորօրինակ՝ „Educational Times“ թերթը. իսկ այդ ընկերութեանց մէջ ամենանշանաւորը, որ ունի իր նմանը ոչ մի ազգի մէջ, գա «Ազգային Միութիւն» կոչուած ընկերութիւնն է, որ իր մէջ միացրել է բազմաթիւ ընկերութիւններ և որի անդամները 20000-ից աւելի են։

Մի այլ նշան ուսուցիչների գործունէութեան և ուսումնարանական գործի ջերմ մասնակցութեան կարող է ծառայել 30-ից աւելի պարբերական թերթերը, որոնք զբաղոցական խնդրին են նուիրուած։ Բացի դրանից այդ ուսուցիչները հարիւրներով հաւաքուում են պարբերական մանկավարժական ժողովներ կազմելու համար։

Այս համառօտ նկարագիրը տալով, կամենում ենք մասնաւորիչ անել մի ծանրակշիռ խնդրի դիւրին լուծման վրայ։ Ծօսք անգամ կարող չէ լինել զպրոցական կազմակերպութեան այն ձևին հետևելու մասին, որ յատուկ անգլիական է. այդ չեն կարողացել անել նոյն իսկ բարգաւաճ և այլ ազգեր, որովհետև ամէն մի ազգ աւանդական ճանապարհից դժուար է շեղուում։ Նոյն իսկ Ֆրանսիան և Զուիցերիան, որոնց կառավարութեան ձևերը փոխ են առնուած անգլիականից, չեն կարողացել ազատուել աւանդական կապանքներից, այդ երկրներում զպրոց-

նիրի կազմութեան և ղեկավարութեան գործը դեռ հեծում է կենդրոնական ուղղութեան լուծի տակ։ Անհատի ազատ զարգացումն և անհատական գործունէութեան անխնամակալ ընթացքը յատուկ անգլո-սաքսոնական է, որին հասնելու համար դեռ շատ պիտի աշխատեն այլ ազգեր։ Մեր ուշադրութիւնն հետևաբար այդ խնդրի վերաբերութեամբ պիտի դարձնենք ուսուցիչ պատրաստելու եղանակի այն պարզ ձևի վերայ, որ արդէն մշակուած է Անգլիայում և որին հետևելու ոչ մի դժուարութիւն չկայ։ Մեր ծխական դպրոցները մեծ կարիք ունին պատրաստուած և հմուտ ուսուցիչների, որոնց սակայն դժուար է փողոցում գտնել, ուստի մի՞թէ հնարաւոր չէ մեզ համար ևս անգլիական ընթացքը։ Մեզ թուումէ, որ այդ հնարաւոր և դիւրաւ իրագործելի է. եթէ մեր երկգասեան դպրոցներում աւարտողներից ընդունակներին մի քանի տարի պահենք նոյն դպրոցներում փորձուած ուսուցիչների ձեռքի տակ և ապա հնար տանք որ և է թեմական դպրոցում, Գ. Ձեմարանում և ութերութեան ուսուցչանոցներում մանկավարժական գիտութեան և իրենց աւանդելի առարկայից ծանօթանալու, մեզ թուումէ, թէ դիւրաւ լուծած կը լինինք մի շատ կարևոր խնդիր։ Այդպիսի լուծումն շատ կը դիւրացնէ մանաւանդ վարժուհիների պատրաստութիւնը, որի համար մենք այժմ ոչ մի ելք չունինք։

ՄԱՆՐԱԼՈՒԾՔ.

Ռէօնտգէնի գիւտը.—Ամբողջ լուսաւոր աշխարհում մեծ աղմուկ է հանել Վիւրցբուրգի համալսարանի ֆիզիկայի ուսուցչապետ Ռէօնտգէնի գիւտը։ Անցեալ տարուան վերջին միայն հաղորդեց նա իւր գտած լուսոյ նոր աղբիւրի եւ դրա միջոցով լուսանկարելու մասին։ Արդէն երեսուն տարի կը լինի, որ լուսոյ նոր աղբիւրի նշանները յայտնի են գիտութեան մէջ եւ բազմաթիւ գիտնականներ իրենց նուիրել էին այդ խնդրի լուծման, որ վերջնականապէս յաջողուեց Ռէօնտգէնին։ Այդ նորագիւտ լոյսն անտեսանելի է մեր աչքին եւ թափանցում փայտի գործարանական մարմինների եւ մետաղների (բացի պլատինից) միջով։ Ասա այդ լոյսի միջոցով, որ մի անօթ խողովակի մէջ է ժողովուում, նա լուսանկարում է այն ապակիների վերայ, որ գործ են ղրուում լուսանկարչութեան մէջ։ Այդ անօթ խողովակի միջով պէտք է անցկացնել եւ ելեկտրականութեան մի ներածական հոսանք։ Շնորհիւ այդ նոր գիւտի կարելի է արկղիկների մէջ եղած իրերի պատկերն տանել, ինչպէս նաեւ փայտէ պատի միւս կողմում եղած իրերի պատկերը լուսանկարել։ Պատկերազարդ տանդէսներն արդէն արտատպում են այդ ձեւով լուսանկարուած առարկաների պատկերները։ Հետաքրքրական է մարդկային ձեռքի պատկերը, որի վերայ ձեռքի եւ մատների միայն ոսկրերն են երեւում իրենց բոլոր խաղերով։ Այս գիւտը մեծ նշանակութիւն ունի բժշկականութեան մէջ, որովհետեւ դրա շնորհիւ հնարաւոր կը լինի հեշտութեամբ եւ ճիշդ վիրաբուժական գործողութիւնների ձեռնարկել եւ ներքին հիւանդութիւնները հետազօտել։ Գերմանական կայսրն այդ գիւտի մասին կարդալով իւր մօտ հրաւիրեց Ռէօնտգէնին եւ պալատում փորձ անել տուաւ, որ յաջողութեամբ պսակուեց։ Փորձից յետոյ կայսրը Ռէօնտգէնի պարտոցին ինքը կախեց պրուսական Թագի նշանի 2 աստիճանն եւ իրեն սեղանակից արաւ։ Հետագրներն հաղորդում են, որ այդ լուսանկարչութեան փորձեր են եղել Պետերբուրգում մեծ յաջողութեամբ։

Վիճակագրականք.—1894 թուականի վիճակագրութիւնը Փրանսիայի աւելի նպաստաւոր է, քան թէ նախկին տարիներինը։ Մինչդեռ ամենուրեք յեղյեղուում է այն կարծիքը, թէ ժամանակակից Փրանսիան դէպի մահն է գնում, որովհետեւ մեռնողներն աւելի են ծնուողներից, այս նոր վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ նորածիններն 5 % աւելի են մեռնողներից։ 1894 թուին Փրանսիայում ծնուել են 855,388 հոգի եւ մեռել են 815,620։ Կատարուած ամուսնութիւնների թիւն է 286,662, իսկ քաժանուողներինը 6,419։ Այս թուերի համեմատութիւնից նախկին տարուան թուերի հետ երեւում է, որ 632 պակաս անցեալ տարի աւելի է եղել, իսկ մահերից պակսել են 51,908 եւ ծնունդներից 49,284։

Լեւոն ԺԳ-ի կոնդակները.—Հռոմի պապը տարին մի քանի ընդհանրականներ է հրատարակում. այդ ընդհանրականների նպատակը վերջին ժամանակներս եկեղեցեաց միութիւնն է։ Այժմ Լեւոն ԺԳ. զբաղուած է կրկին մի կոնդակի խմբագրութեամբ, որ պիտի ուղղէ ամբողջ քրիստոնէութեան։ Այս տաքիւ լուագիրներն հաղորդում են պապի կոնդակ գրելու եղանակը։ Կոնդակի նիւթը մշակելուց յետոյ պապը կանչում է իւր ծիրանաւորներից մէկին, որին ամենից աւելի է հաւատում եւ հաղորդում է նորան իւր ծրագիրը, սա գրում է կոնդակն իտալերէն եւ ներկայացնում է պապին, որ ուղղագրելուց յետոյ յանձնում է մի լատինագէտ ծիրանաւորի, որ թարգմանէ լատիներէն այդ թարգմանութիւնը տպագրուում է եւ պապի սրբագրութեան յանձնուում։ Այս տպագրուած օրինակներից պապն ուղարկում է հեղինակաւոր անձանց եւ նորանց նկատողութիւններն ի նկատի առնելուց յետոյ միայն սրբագրում եւ կրկին երկար խորհելուց յետոյ միայն հրատարակում է։

Չինական համալսարան.—Ճափոնիայի յաղթանակը Չինաստանի վերայ իւր ազդեցութիւնն սկսել է գործել. չինացիք դուրս են գալիս իրենց փակուած դրութիւնից եւ քաղաքակրթուել են ուզում։ Առաջիկայ աշնանը Թեան—Ցինում կը բացուի առաջին չինական համալսարանը, որի համար նախապատրաստող դասընթացներ են հիմնուում ամենուրեք։

Նկարչություն. — Պետերբուրգում մեծ յաջողութիւն ունեցաւ նորերս աշխարհահռչակ հայ նկարիչ Այվազովսկու ցուցահանդէսը, ուր ծերունի ծովանկարիչն 78 պատկեր էր ի հանդէս հանել: Այդ ցուցահանդեսով Այվազովսկին իր վրայ դարձրեց կրկին Ռուսաստանի եւ արտասահմանի մամուլի ուշադրութիւնը եւ արժանացաւ յատուկ պատիւների Ռուսաց պալատի կողմից: Հազիւ վերջացաւ Այվազովսկու ցուցահանդէսը, որ բացուեց ոուս յայտնի նկարիչ Վերեշչագինի պատկերահանդէսը, որ նոյնպէս 78 նկարից է բաղկացած: Ռուս նկարչի յատուկ առարկան պատերազմն է, որի սարսափները ներկայացնելով՝ նա կամենում է զգուշացնել պատերազմի դէմ: Այս անգամ Վերեշչագինը նիւթ է վերցրել Նապոլէօնի 1812 թ. արշաւանքը:

Սուրճն իբրեւ թոյն. — Նորերս կրկին փորձեր են եղել հետազօտելու սուրճի ազդեցութիւնը մարդուս վրայ: Այդ հետազօտութիւնից երեւում է, որ սուրճի չափազանց գործածութեան ազդեցութիւնը բոլորովին նման է ոգելից ըմպելիների ազդեցութեան, որ նիւթոյթում է մէջքի ուղեղի վրայ, ախորժակը փոխում է, քունը կտրում է, անդամների դողդողալ է յառաջացնում եւն եւն: Այս ամենի մէջ մի քան մխիթարական է, որ բոլոր այլ հիւանդութիւնները շուտով անհետանում են, եթէ մարդ դադարում է սուրճ խմելուց:

Ելեքտրականութեան ազդեցութիւնը բուսականութեան վրայ. — Վաղուց է փորձեր են լինում իմանալու՝ թէ ի՞նչ ազդեցութիւն ունի ելեքտրականութիւնը բոյսերի վրայ: Փորձերն հաստատում են, որ եթէ ելեքտրական հոսանքներ անցնենք այն արտերով, ուր ցանուած են հացաբոյսեր, շատ նշանաւոր արդիւնքներ կը ստանանք, մինչդեռ այլ բոյսերի վերաբերութեամբ հակառակ հետեւանքների կը հանդիպենք:

Վաճառելի օդ. — Օդի եւ թթուածնի հեղուկ դարձնելու փորձերի հետեւանքը պիտի լինի արհեստական օդակազմութիւնը: Պ. Լինդի եղանակով այժմ կարելի է օդի միջից մի ժամում 70 % թթուածին ունեցող մի խորանարդ մետր օդ ձեռք բերել: Այս ձեւով օդ ձեռք բերելը թանգ չը լինելով, մենք կարող ենք տարիւրաւոր լիտր օդ գնել, որ 70 % թթուածին ունենայ փոխանակ 24 % թթուածին ունեցող օդի, որ մենք սովորաբար շնչում ենք: Այս հանգամանքը մեծ նշանակութիւն ունի բժշկութեան համար, որովհետեւ շատ հիւանդների ուղարկում են լեռներն ու ծովերի վրայ, որ օդով բժշկուին, այժմ ամէն տեղ կարող ենք լեռնային եւ ծովային օդ ունենալ:

ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՆՑԵԱԼ ՏԱՐՒԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ.

Հայաստանեայց եկեղեցին մի տառապալից տարի ևս բոլորեց. այսօր նոր տարուան սեմին երբ մի ակնարկ ենք ձգում անցած 1895 թուականի վրայ, ստիպուած ենք խոստովանել մեր հայրերի անդրդուելի համոզումը, թէ «եկեղեցին մարդու ձեռքի գործ չէ, ոչ թագաւորների պարգև և ոչ էլ արուեստների ճարտարագործութիւն, նրա հիմունքը ոչ ներքինք կարող են շարժել և ոչ վերինները խախտել»: Այս համոզումը մեր մէջ ամրապնդելու համար մի փաստ ևս աւելացաւ, գալ էր այն սոսկալի հալածանքը, որին ենթարկուեց հայ եկեղեցին Տաճկաստանում, ուր մի յետին դիւզ, մի հեռաւոր քաղաք և մի մարգաբնակ առաջարակ անդամ չմնաց, որ չողողուեր հայ քրիստոնեի արիւնով: Հնագարեան սրբավայրերն այրուեցան մոխիր դարձան, ս. սեղանի սրբութիւնը պղծուեց, Աստուծոյ պաշտօնեաները մորթուեցան և բանի քարողիչների մարմնից տիկ հանուեց: Տասնեակ հազարներով նոր նահատակներ ունեցաւ մեր ս. եկեղեցին և շատ փոքրաթիւ դասալիքներ միայն, որոնք հալածանքին չը դիմանալով մահմետական դարձան: Այս թշուառութեան մէջ հայի միակ մխիթարութիւնն իւր հարց Աստուածը մնաց, որ անշուշտ գութ պիտի ձգէ երկրիս զօրաւորների սիրտը թափուած արիւնը բաւական համարելու:

Այս գալիք աղէտները գուշակելով՝ աղգիս անձնուէր Հայրապետը ձմերային գառնաշունչ օրերին ուղի ընկաւ և կիսամեայ ժամանակով պանդխտելով՝ հասաւ մինչև ռուսաց մեծազօր Կայսեր պալատն, ուր սիրալիր ընդունելութիւն գտաւ և իւր հալածուած հօտին հովանաւորելու խնդրեց: Կայսերական յուսադիր խօսքերով մխիթարուելով՝ Վեհափառ Հայրապետը դարձաւ կրկին իւր աթոռը:

Նորին Վեհափառութիւնն իւր ուղևորութեան միջոցին այնպիսի մխիթարութիւն պատճառեց ցըրուած հայ հօտին, որ դարերէ ի վեր նա չէր ստացել:

Եկեղեցական վարչութեան մէջ անցեալ տարի քիչ փոփոխութիւններ միայն եղան. ս. Էջմիածնի սինոդի անդամներից միայն մէկը, Գերապ. Արիստակէս եպիսկոպոսն, արժանացաւ Նորին Վեհափառութեան շնորհին և արքեպիսկոպոսութեան պատիւն ստանալով՝ նշանակուեց առաջնորդ Աստրախանու թեմի: Այսպէս սինոդում մնացին հին անդամներից միայն Գերապ. Երեմիա, Սարգիս, Արիստակէս եպիսկոպոսներն և բարձրապատիւ Վահան վարդապետը. նոր անդամ հաստատուեցաւ բարձրպ. Աշոտ վարդապետը, իսկ միւս աթոռները դեռ ևս թափուր են մնացած:

Թեմերի վարչութեանց մէջ ևս փոփոխութիւններ եղան. Շամախու թեմական հաստատուեց նորընծայ սրբազան Մակար եպ. Բարխուդարեան, որ առաջարկուած էր իբրև ժամանակաւոր կառավարիչ: Աստրախանու թեմի ժամանակաւոր կառավարիչ նորընծայ Խորէն եպիսկոպոսի փոխարէն թեմական հաստատուեց Գերապ. Արիստակէս սրբազանն, իսկ Բեսարաբիոյ թեմի կառավարիչ հաստատուեցաւ բարձրապ. Ցուսիկ Վարդապետը:

Հուշուայ թեմական սրբազան Կարապետ եպիսկոպոսի փոխանակ կառավարիչ նշանակուեցաւ բարձրապատիւ Գարեգին վարդապետը, Երևանի թեմի փոխանորդ կարգուեցաւ ժամանակաւորապէս նորընծայ Անանիա եպիսկոպոսը։ Մի քանի մանուկ փոփոխութիւններ ևս տեղի ունեցան յաջորդութեանց մէջ։ Թեմական ատեաններից միմիայն Բասարաբիոյ մասին առաջարկութիւն եղաւ, որ այդ թեմի ատեանը փոխադրուի Նոր-Նախիջևան, սակայն այս առաջարկը չը յարգուեցաւ։

Վանական կեանքն անցեալ տարի ևս անշարժութեան և ամայութեան մէջ էր։ Նորին Վեհափառութեան ջանքով վերանորոգութիւններ և նոր շինութիւններ եղան միմիայն երկու վանքերում, ս. Գայիանէի և Տաթևի, իսկ միւս անհամար և անթիւ վանքերը դեռ ևս սպասում են իրենց շէնացնող և պայծառացնող ձեռքերին։ Վանքերի արտաքին շինութիւնից զատ և ներքին շինութեան, միաբանական եղբայրութիւնների հաստատութեան, մեծ կարիք կայ, սակայն ե՞րբ արդեօք Տէրը մըշակներ պիտի հանէ իւր հնձի համար։ Այս մասին ևս անդուլ կերպիւ մտածում է աղգիս Վեհափառ Հայրապետը, Որի հրաւիրանաց ձայնին լսելով այրի քահանայք հետզհետէ վեղար են ընդունում և իրենց կեանքի մնացորդները վանքերին նուիրում։ Նորին Վեհափառութեան ցանկութիւնն է ս. Էջմիածնի վարչական միաբանութեան կից մի այլ կրօնական և գիտնական միաբանութիւն կազմել, որի վրայ դրուէր աղգային եկեղեցու բարոյական պէտքերն հոգալու աշխատանքը։ այս ցանկութեան իրագործումն հնարաւոր է հարկաւ աղգի ձեռնտուութեամբ։

Մեր աղգի բարոյական կեանքը պահել և պահպանել են վանքերն վեցերորդ դարուց մինչև մեր դարը, երբ անհերելի անտարբերութեան մատնուեցան այդ հաստատութիւնները։ այժմ առաւել ևս քան որևէ այլ ժամանակ կրում ենք մենք մեր սխալանաց պատիժն և ժամանակ է, որ սթափուենք և վանքերը շէնացնենք, որպէս զի խեղճ գիւղական ժողովրդին Աստուծոյ խօսքը վարդապետողներ և քրիստոնէական լոյսն սփռողներ ունենանք։

Քահանայական դասու համար ևս հոգսեր է քաշել եկեղեցական վարչութիւնը, թէպէտ և մեր քահանայական դասը շատ հեռու է իւր աստիճանի բարձրութիւնից, բայց այնուամենայնիւ հետզ, է ջանքեր են լինում այդ ցանկալի բարձրութ ն հասնելու։ Մեծ է ժողովրդի կարիքը, նրան չէ կ ։ րելի իւր վերջին մխիթարութիւնից էլ զրկել ։ն պատճառով միայն, որ չունինք պատրաստուած քահանայացուք։ Մեր թեմական դպրոցները դեռ ևս հեռու են զուտ քահանայարաններ լինելուց։ մինչև նրանք մեզ բազմաթիւ քահանայացուներ հասցնեն, պէտք է գոհանանք աւելի նուազ պատրաստութիւն ունեցողներով, միայն թէ թող ժողովուրդն ի չարն գործ չը դնէ իւր ընտրական իրաւունքն և քահանայ ընտրած ժամանակ աւելի բարեխիղճ լինի։ Հոգևոր վարչութիւնները ստիպուած են գոհացումն տալու ժողովրդի պահանջներին ուստի շատ անգամ աւելի օրինակատարներ են քահանայ ձեռնադրում, քան իսկական քահանայացուներ, Այս չարիքի առաջն առնելու համար է, որ մի քանի թեմերում ընծայարաններ են հիմնուել, որ գոնէ ամենակարևոր գիտելիքն են աւանդում տիրացուներին, սակայն այդ ընծայարանների կազմակերպութիւնը դեռ շատ թերի և անբաւարար է։

Եկեղեցիների բարեղարգութեան և բարեկարգութեան համար առանձնապէս ոչինչ չէ արուած, մեր առաջնակարգ թեմերն անգամ չունին բարեկարգիչների ժողովներ, ուր խօսուին եղած պանցառութիւնների և մոցնելիք բարեկարգութիւնների մասին։

Նորին Վեհափառութեան ուշադրութիւնն առանձին աղդեցութիւն ունեցաւ հեռաւոր Հայ եկեղեցիների վերայ, ուր օտարամուտ ձևերն և սովորութիւններն աճել են և բազմացել։

Եկեղեցական երգեցողութեան մէջ արձանագրելի փաստ է ս. պատարագի քառաձայն ձայնագրութիւնը պ. Եկմալեանի ձեռքով, որի ձեռնարկութիւնն արժանացաւ Հայրապետական օրհնութեան և խրախուսանաց։

Ոչ մի յառաջադիմութիւն չարաւ մեր ծխական կեանքը։ քանի տարի է արդէն խօսուում է ծխական հոգաբարձութիւնների կազմութեան մասին և դեռ ոչ մի տեղ չը կազմուեցաւ այդպիսի մի ծխական հոգաբարձութիւն, որի նպատակը լինէր եկեղեցաց ծխականների մէջ կապ հաստատել, հոգալ քահանայից և եկեղեցու պէտքերի և մտածել ծխական դպրոցների պահպանութեան մասին։ Այս խնդրի լուծումից է կախուած մեր ապագայ եկեղեցական կեանքի դոյութիւնը և դրա մասին հոգալու առաջին պարտականութիւնն սրբազան թեմական առաջնորդներինն է։ Ցոյս ունինք որ առաջիկայ տարին այդ մասին կը լրացնէ անցեալի թերութիւնները։

Եկեղեցական դպրոցների վերաբերութեամբ անցեալ տարին կազմակերպութեան մի շրջան էր։ այդ տարուան ընթացքում Գ. Ճեմարանը կրկին իւր կոչման և ծրագրի սահմաններում ամփոփուեց և նորակազմ վարչութիւնն անկարգապահութեան ար-

մաներն հանելով՝ վերահաստատեց Հոգևոր Ճեմարանին վայել մի ընթացք։ Այդ շրջանը Ճեմարանի համար այնու նշանաւոր եղաւ, որ իւր իսկ աշակերտներից պատրաստուած մի նոր խումբ կուսակրօն գործիչներ վաստակեց։

Թեմական դպրոցների համար ևս անցած տարին վերականգնման և կազմակերպութեան շրջան էր։ Երբս թեմական դպրոցներն ևս այդ տարուան ընթացքում ունեցան հայրապետահաստատ տեսուչներ և խաղաղ ընթացքով մի քանի տասնեակ նորաւարտներ ընծայեցին ազգին։ Մեզ ամենից աւելի յայտնի են այն թերութիւնները, որ ունին մեր թեմական դպրոցները. սակայն այդ թերութիւնները բառնալու հոգը մերձաւոր Հոգևոր իշխանաւորներինն են, որոնք երբեմն աչք են գոցում այնպիսի պաշտօնեաների վերաբերութեամբ, որոնք չեն հասկանում ոչ Հոգևոր դպրոցի էութիւնն և ոչ Հոգևոր դպրոցի ուսուցչի կոչումն։ Այս մասին ևս Հոգալով Նորին Վեհափառութիւնն իւր սրբատառ կոնդակներով հրահանգներ է տուել առաջնորդաց և նորանց պատասխանատու կացուցել դպրոցների կրօնական—բարոյական ընթացքի համար։

Թեմական դպրոցների ապահովութեան խնդիրն ևս մի ծանր խնդիր է մանաւանդ Երևանի թեմական դպրոցի համար, որի գարմանն Հոգալով՝ ազգիս Հայրապետը տուրք է կարգել վիճակային եկեղեցաց վերայ։ Մեծ Հոգսերի աղբիւր է նաև Ջամալեան թեմի վիճակային դպրոց չը լինելն, որին այնքան կարօտ է այդ թեմը, սակայն այդ խնդիրն անցեալ տարի ևս անլուծանելի մնաց։ Տեառն յաջողելով՝ երբ Նորին Օծութիւնն արժանացնի այդ թեմն իւր շնորհաբեր այցելութեան, յոյս ունինք որ այդ ամենակարևոր խնդիրն ևս վճռուի։

Եկեղեցական—ծխական դպրոցների համար անցեալ տարին նոյնպէս խնամքի և հոգսերի տարի է եղել։ Հազիւ թէ այդ դպրոցների համար մի յարմար վերին վարչութիւն էր հաստատուել, որ և կառավարութեան պահանջի համաձայն պատրաստուում էր վկայեալ ուսուցիչներ կարգելու ամենուրեք, երբ մի նոր և աւելի ծանր խնդիր ծագեցաւ։ Հիմնուած այն տեղեկութիւնների վերայ, որ ոստիկանութիւնն հաւաքել էր անցեալ տարի մեր դպրոցների պահպանութեան աղբիւրների մասին, Նորին Վեհափառութեան առաջարկուեցաւ 168 դպրոց յանձնել Կովկասեան ուսումնարանական վարչութեան՝ առարկութեամբ, թէ այդ դպրոցները պահպանում են ի հաշիւ հասարակութեան և ոչ եկեղեցու։ Աչքի առաջ ունենալով՝ որ 1884-ի օրէնքով ծխականների օժանդակութիւնը թոյլ է տուած և միւս կողմից՝ որ բոլոր մեր դպրոցների վերայ ծախսուած գումարները ղուտ եկեղեցական են, որովհետև ինչ աղբիւրից էլ նրանք լինեին, միշտ եկեղեցական վարչութեան տնօրինութեան տակ են դրուում անպայման, և վերջապէս տեսնելով՝ որ այդ 168 դպրոցներից 118-ը ուսումնարանական են և այն դպրոցները, որոնց վերայ տասնեակ հազար ղուտ եկեղեցական գրամներ են ծախսուած, Նորին Վեհափառութիւնը դիմեց Ներքին գործոց Նախարարին և արդ սպասում է Նորին վսեմութեան պատասխանին։ Քանի որ այս խնդիրը դեռ չէ լուծուել, տեղական ոստիկանական վարչութիւնները կարգադրել են արդէն բազմաթիւ դպրոցների փակումն, որ անշուշտ կը վերաբացուին Թիւրիմացութիւնները բարձուելուց յետոյ։

Անցեալ տարին առանց կորուստների չէր, մեր պատկառելի եկեղեցականների գասից մահը խլեց Նորընծայ Կիւրեղ սրբազանին, որի վերայ դեռ աչքան յոյսեր ունէր իւր ժողովուրդը։

Եկեղեցական գործունէութեան առաջնորդական ասպարիզից անցեալ տարուան ընթացքում քաշուեցան Գերապատիւ Մեսրոպ արքեպիսկոպոսը, որ ազգիս Հայրապետի ուղևորութեան միջոցին վարեց տեղակալութեան ծանր պաշտօնն, և Գերապատիւ Կարապետ եպիսկոպոսը Նորա այժմ Ս. Էջմիածնի միաբանութեան մէջ ապրելով՝ իրենց այլ եղբայրակիցների հետ միասին պատրաստ են Վեհ. Հայրապետի հրամանաւ ծառայելու մեր սուրբ Եկեղեցուն։

Ցաւալի էր մի այլ կորուստ մեր դպրոցական կեանքի համար. մեր բազմամտուտ և բազմափորձ մանկավարժ պ. Ս. Մանդինեանի հրաժարումն դպրոցական ասպարիզից, ուր նա քառորդ դար արդիւնաւոր գործունէութիւն էր ցոյց տուել։

Եկեղեցական գրականութիւնն ու մամուլը առանձին արգասիքներ չը տուին անցեալ տարուան ընթացքում Ս. Էջմիածնի միաբանութեան և Մայր Աթոռի լերան «Արարատ»ը նոր խմբագրութեան ջանքերով կամեցաւ գոհացումն տալ եղած պահանջներին և այսօր ուրախ ենք արձանագրելու, որ նա իւր բարեկամներին գոհացրեց, իսկ բծախնդիրներին շատ քիչ առիթ տուաւ յարձակման։ Քաջալերուած այսպիսի ընդունելութիւնից «Արարատի» ծաւալը մի թերթով ընդարձակեցինք և յոյս ունինք, որ հետզհետէ օժանդակութեամբ ազատ բաժանորդների և բարոյական աջակցութեամբ Սրբազան առաջնորդների «Արարատը» մի օր կը դառնայ ամէն մի հայու համար անհրաժեշտ մի ամսաթերթ։ Ցաւում ենք որ Ս. Էջմիածնից դուրս դտնուող եկեղեցական վարչութիւններն ու եկեղեցականք ղացան իրենց աջակցութիւնն և յոյս ենք տածում, որ առաջիկայ

տարին ամենայն տեղից, ուր մի Հայ եկեղեցի կայ, բարեպաշտական գործերի և ազգային եկեղեցական կեանքի ամէն մի երևոյթ կը զեկուցանուի մեզ, որ հաղորդենք ի սփիւռս աշխարհի տարածուած Հայութեան։—Հայոց եկեղեցու միւս մասերի կեանքի մասին համար կը տանք յաջորդ ամսատետրում։

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ։
ՄԱՅՐ ԱԹՈՌ։

Ըզգիս վեհափառ Հայրապետը յայտնում է իւր բարձր գոհունակութիւնը և հայրապետական օրհնութիւնը այն ամէն հաստատութեանց և անձանց՝ եկեղեցականաց և աշխարհականաց, որոնք որպիսական պարտք էին համարել շնորհաւորելու Նորին Ս. Օծութեան՝ նոր տարուայ, Փրկչի Ծննդեան և Նորին Սրբութեան Ընտանակոչութեան տօներին։

— Նոր տարուան և Տէրնէնաց տօներին Նորին Վեհափառութիւնն ընդունեց Ս. Էջմիածնի միաբանութեան, Գ. Ճեմարանի ուսուցիչներին և աշակերտներին, Վաղարշապատի դպրոցների աշակերտներին և հասարակութեան. ամենքն ևս արժանացան հայրապետական օրհնութեան և խրատներին։

— Ս. Էջմիածնի վանուց տարեկան նախահաշիւը կազմուեցաւ և յանձնուեց Սինօդին ի գործադրութիւն. տեղի սղութեան պատճառաւ միւս համարին ենք թողնում նախահաշուից քաղուածներ տպագրելը։

— Հայրապետական սրբատառ կոնդակով վանական կառավարութեան նոր անդամներ հաստատուեցան Բարձրագոյն Աշոտ վարդապետ նախագահ, Թադէոս, Խաչիկ վարդապետներ և շնորհուեցաւ Ռափայէլ սարկաւագ անդամ։

— Տպարանական Վարչութեան նախագահ և տեսուչ Գեր. Արիստակէս եպիսկոպոս երկոտասան ամեայ արդիւնաւոր ծառայութիւնից յետոյ հրաժարական մատոյց Նորին Վեհափառութեան։ Հայրապետական սրբատառ կոնդակով տպարանի տեսուչ և Վարչութեան նախագահ կարգուեցաւ Բարձրագոյն Նահապետ վարդապետը, իսկ անդամներ Բարձրագոյն Եղիա, Բենիկ վարդապետներն և նորընծայ շնորհուեալ Ղուկաս սարկաւագը։ Տպարանական Վարչութեան խորհրդատու անդամները նշանակուեցան նաև խմբագրութեանս անդամներից Բարձրագոյն Կարապետ վարդապետն և Պ. Ն. Քարամեանցը։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ
ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԱԽՄՐՈՒԹԻՒՆԸ.

Ցունուարի 20-ին, սրբոյն Ցովհաննու Մկրտչի յիշատակի օրը Հայաստանեայց եկեղեցին ամենուրեք տօնեց իւր Հայրապետի, ամենքի պաշտելի Հայրիկի անուանակոչութեան տօնը։

Նախընթաց երեկոյեան ամբողջ միաբանութիւնն ու ճեմարանի աշակերտները թափորով եկեղեցի բերին Վեհափառ Հայրապետին։ Անուանակոչութեան օրը ս. պատարագից յետոյ կատարուեցաւ սրտառուչ կերպիւ Հայրապետական մաղթանքն ու Հայրիկի աջն համբուրեցին միաբանութիւնն և ճեմարանի վարժապետներն ու աշակերտները եկեղեցում, բացի հասարակութեան մի քանի ներկայացուցիչներից, որոնք Վեհարանում ընդունելութեան արժանացան։

Հանդիսաւոր ճաշին հրաւիրուած էին բացի ճեմարանի ուսուցչական խմբից և Երևանի հասարակութեան ներկայացուցիչներն ու թեմական դպրոցի տեսուչը։ Նորին Վեհափառութիւնը սեղանակից եղաւ միաբանութեան, ճաշկերոյթն անցաւ լուութեամբ մինչև Գեր. Մեսրոպ արքեպիսկոպոսը բաժակ բարձրացնելով Նորին Վեհափառութեան կենացն առաջարկեց հետևեալ խօսքերով.

«Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց և հպատակ կացէք նոցա, զի նոքա տքնին վասն հոգւոց ձերոց, որպես թէ համարս տալոց իցեն ընդ ձեր.» * ասելով թէ իւր խօսքը հնազանդութեան մասին չէն, որովհետև Մայր Աթոռի միաբանները ամէն կերպ հնազանդ են, կարգապահ ու պարտաճանաչ, այլ այն տքնութեան մասին է իւր խօսքը, որ Վեհափառ Հայրապետը այս քանի տարի կրում է ինչպես միաբանութեան նոյնպես իւր հօտի համար, մանաւանդ հալածեալ Տաճկահայոց համար, որոնք տառապանքների անասելիները ամէն օր նորա առաջ կենդանի կերպով պատկերացնում են. ուրեմն բարեմաղթենք որ Աստուած երկար կեանք, կարողութիւն տայ Նորին Վեհափառութեան։

Ֆիչ յետոյ Նորին Վեհափառութիւնը խօսեց.

---

* Թուղթ Սեբաս. ԺԳ. — 17։

Ամենեցուն ժամանակ է և ժամ ամենայն իրաց ի ներքոյ երկնից, կըսէ Սողոմոն (Ժողովող. Գ. 1) ժամանակ լալոյ և ժամանակ ծիծաղելոյ, ժամանակ ուրախութեան և ժամանակ տրտմութեան ևլն. այսօր շրջան կառնու, մերթ ուրախութիւն կըլլէ, մերթ տրտմութիւն։

Այստեղ նստած հանդէս կկատարէք, բայց ես մտքով հեռու կպտտեմ, կերթամ Վան, Վարագ, Մոկս, Շապին, Մուշ ևլն ամէն կողմեր, ուր ոտքով քալած եմ, և ի՞նչ կտեսնեմ. ա՜խ, ի՞նչ է այս վիճակ. Ինո՞ր, որ մեռան, պրծան, ազատուեցան այս ժամանակէս. բայց կմտածեմ անոնք որ կան՝ ողջ պիտի մնա՞ն. ինչպէս կապրեն մերկ ու քաղցած այս սառնամանիք միջոցին։

Լրագիրներ կարդալով կմխիթարուիմ երբ կիմանամ որ այդ տառապեալներուն մասին հոգացողներ կան։ Պօլիս եկեղեցի մը կայ, որ Պ.ազազ ամիրան շիներ է, երկարութիւն երկու այս սեղանատան չափ կլինի, լայնութիւն ալ անոր համեմատ։ Այժմս արհեստանոց գարձեր է 2—3 հարիւր աղջկունք, կանայք օրն ի բուն կբանեն ամէն տեսակ հանգերձ, ոտքից մինչև գլուխ, մինչև անգամ կօշիկներ կպատրաստեն փոքր երեխաներու համար. ծրար կշինեն բողոքական միսիոնարաց՝ կեդրոնավայրեր կուղարկեն։ Այնտեղ կժողովուի այդ ամէնը և կուղարկուի գաւառների կարօտեալներուն։

Բայց հացն ինչպէս կլինի. բոլոր միջոցներ սպառեցան, այստեղ ալ նուաղել է։ Ի՞նչ պիտի ընել։ Պարտքեր կան, որ ընդհանուրի վրայ կծանրանան։ Ես, որ Հայոց Հայրապետ եմ ի հարկ է իմ պարտքս է աւելի մտածել։ Երբ կմորհեմ՝ յուսահատութեան անդունդին կհասնեմ, բայց կրկին կմխիթարուիմ, ու հաւատով կղօրանամ։ Երեկ Ցոնան մարգարէին յիշատակն լրացաւ, անոր գիրքը եկեղեցւոյ մէջ կարդացուեցաւ։ Նինուէի դիմաց բլուր մ՚եղած է. Ցոնան բարձրացած կդիտէր, թէ ինչպէս իւր գուշակութիւն պիտի կատարուի, Նինուէ կործանուի։

Տաք երկիր մ՚է, կերևի Երուսաղէմէն ալ տաք է, արևէն պաշտպանուելու համար հովանոց մը շինել էր, բայց երևի բաւական չեղաւ իրեն, Աստուած դդմենի մը բուսոյց, Ցոնան ուրախացաւ անոր տակ, և կղովանար. բայց միւս առաւօտը Աստուած հրաման ըրաւ, «եհատ զդդմենին և ցամաքեցաւ» ըսած է։ Ցոնան կնեղուէր տապախառն խորշակէն, մինչ այն աստիճան, որ կըսէր. «Լաւ էր ինձ մեռանիլ քան զայս կեանս իմ»։ «Ցոյժ տրտմալ իցես ի վերայ դդմենւոյն» կհարցնէ Աստուած։ Այո՛, ցոյժ տրտմած՝ մեռնիլ աւելի լաւ կհամարէր։

Ա՜խ, Հայաստանի դդմենին ի՞նչ ընենք. անոնք բարձրացեր էին, ոստեր էին արձակեր, հարաւային խորշակ հասաւ զարկեց։

Ես ալ Ցոնանի պէս խորշակահար կըսեմ. «լաւ էր ինձ մեռանիլ, քան զայս կեանս». Յոյժ տրտմութենէս կյուսահատուեմ, բայց և ս. Գիրք կարդալով կմխիթարուիմ, հաւատս կզօրանայ։

Հայաստանի դդմենիներ չորցան, բայց նոյն Աստուած կարող է նորերը բուսցնել և զօրեզացնել։ Աղաչենք միաբանութեամբ, որ ս. Յովհաննէս Մկրտիչ և Աստուածածնին բարեխօս լինին Հայոց աշխարհի համար։

Ա՜խ, միտս ընկաւ ծեծուած հաւին առակն ալ, որ յարմար կգայ ժողովուրդին. երբ օտար հաւ մը կը բերեն ու տան հաւերուն մէջ կը ձգեն, հին հաւեր այնքան կոցով կզարկեն խեղճ հաւի գլուխ, որ արիւնաթաթախ կլինի. Հայն ալ ծեծուած հաւ եղաւ։ Այն կողմն, Տաճկաստան, արիւնով ներկեցին հայու գլուխ, այս կողմն Մեծին Ռուսիոյ հովանոտակ, օրհնեալ ըլլայ ողորմած տէրութիւն, հայը ապահով կապրի։

Բայց լրագրաց մէջ կը գրեն թէ Տաճկաստանի հայ ապստամբեր է. իսկ այստեղ որպէս թէ հայեր կուզեն Կովկասու տէր դառնալ. կը կարդամ այս ամէն, կվշտանայ սիրտս։ Հայն ապստամբութիւն, քա՜ւ լիցի, Չէ, այդ չէ մտածեր հայը. հայը միայն ապահովութիւն կըսնդրէ իւր ճակտին քրտինքով, իւր արդար վաստակով ապրել կը ցանկայ։ Կը կարդամ այս ամէն և կը վշտանամ։ Ալ չեմ կըրնար աւելի խօսել։

Աղօթեցէք, որ Աստուած տայ այս անձկութեան մէջ չը մեռնիմ, այլ միսիթարուած իմնիմ գերեզման. աղօթեցէք որ ծրագիրներս իրագործուին, Էջմիածնայ հռչակաւոր Մայր Աթոռ շինուի, իւր կոչման բարձրութեան հասնի, աղօթեցէք, որ նպատակներս կատարուին. Թող Յովհաննու Մկրտչին և ս. Աստուածածնայ հետ ս. Լուսաւորիչն ալ բարեխօս լինի։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԹԵՄԵՐ.

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ԹԵՄ.

Հաղբատի վանահայր Հ. Յակովբ վ. Նորատունկեանի վրայ աւազակները գիշերով յարձակուելով՝ սպանել են և կողոպտել, առ այժմ այդ գործը քննութեան տակ է և ինչպէս երևում է ոստիկանութեան պիտի յայտնուի բռնել մարդասպաններին։ Այս սպանութեան պատճառը յափըշտակութիւնն է եղել, որովհետև Յակովբ վարդապետը հարստի հռչակ ուներ։

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Արցախի (Ղարաբաղի) թեմի վանքերի։

Կովկասի 1892 թուականի վարչական բաժանման համաձայն Ղարաբաղի թեմը բաղկանում է Գանձակի (Ելիսաւետոպոլի) նահանգի՝ Ջաբրայէլի, Ջաւանշիրի, Շուշիի, մասամբ Ջանգազուրի և մասամբ էլ Գանձակի գաւառներից։[1] Թեմիս վանքերը գտնուում են Ջուանշիրի, Շուշիի և Ջաբրայելի գաւառներում, որոնք բաժանուում են այսպէս.—

1. Թադէի—Խօթայ որ և Զարէքտարի,
2. Գանձասարի սուր Յովհաննու Մկրտչի,
3. Մեծարանց սուրբ Յակոբայ,
4. Սուրբ Եղիշայ Առաքելոյ և
5. Երից մանկանց վանքերը Ջաւանշիրում;
6. Պոկի սուրբ Գէորգայ,
7. Ամարասի սուրբ Գրիգորիսի,
8. Քմհիշայ « » և
9. Սուրբ Ղևոնդեանց վանքերը Շուշիում;

և 10. Սպիտակ խաչի վանքը Ջաբրայէլում։

ՋԱՒԱՆՇԻՐԻ ՎԱՆՔԵՐԸ.

1 Թադէի—Խօթայ որև Զարէքտարի վանքը գտնուում է Ղարաբաղի ամենամեծ գետի՝ Թարթառի ափին, մի վերստաչափ հեռաւորութեամբ։ Այս վանքը յայտնի է իբրև Հանգստարան Հաթերքի որ և վերին Խաչենի հայկազուն իշխանաղուններին։ Ներկայումս կանգուն կաթուղիկէն հիմնարկուած է Հայազգի Քուրդ իշխանի դուստր և Հաթերքի Վախտանգ Թագաւորազնի ամուսին Արզու խաթուն տիկնոջ ձեռքով Հայոց ՈԿԲ (663—1214) թուականին, իր ամուսնի և որդոց յիշատակին։

Վանքիս ներկայ դրութիւնը խիստ աննախանձելի է՝ չորս կողմը աւեր և ամայացած, կաթուղիկէի կտուրը ճաքճքռտած, շրջապատուած կիսաւեր գաւթով և ժամատնով, քայքայուած պարսպով, քարաշէն կամարակապ բնակարաններով ու շինութիւններով։

Վանքը իւր շրջակայ շինութիւններով նմանուում է մարդաշատ քաղաքի մի հարուստ թաղի, որտեղ միայն մարդկանց ներկայութիւնն է չունչ և կենդանութիւն տալիս։

Թադէի ուխտը. իբրև առաջնորդարան և բազմամարդ վանք, զանազան ժամանակներում ստացել է թէ այցելու ուխտաւորներից և թէ իւր հովանաւորող հոգևոր և մարմնաւոր իշխանաւորներից այլ և այլ ընծայաբերութիւններ և նուէր, է որ անշարժ կալուածներով և է որ եկեղեցական զարդ ու զարդարանքներով։

Սուրբ ուխտիս շարժական բոլոր անօթ-ղգեստները ժամանակի աւերիչ ձեռքերից ցիր ու ցան է եղած, փչացած և անյայտութեան մատնուած։ Միայն վանքիս նուիրած սուրբ Աւետարաններից մի քանիսը այժմ գտնում են զանազան վանքերում և եկեղեցիներում։ Ինչպէս, օրինակ, վերին Խաչենի իշխող Դօփեան Գրիգոր իշխանի նուիրած երկաթագիր աւետարանը, որը նուիրած է վանքիս իւր ամուսին, Սիւնեաց Օրբելեան Տարսայիճ իշխանի դստեր Ասփայ տիկնոջ յիշատակին ՉԿԱ (761—1361) Թուականին, այժմ գտնուում է Գանձակի սուրբ Թարգմանչաց վանքում։ Նոյն Դօփեան Վահրամ իշխանի որդի Սարգիս իշխանից նուիրուած հինաւուրց ՉԿԴ (763—1215) Թուականի զանգակը գտնուում է Գեղարքունիքի (Գեօգչայի) Թաւկիւլու Հայաբնակ գիւղում։ Նմանապէս Շուշի քաղաքի դաղանչեցւոց սուրբ Ամենափրկիչ եկեղեցւոյ աւետարանը և Ջարաբերդի Մեծ Շէն գիւղի աւետարանը ժամանակով վանքիս սեփականութիւնն է եղել։ Բացի վանքիս շարժական սեփականութիւնից, ներկայումս վանքը ունի անշարժ կալուածք աւելի քան 98,438 դեսեատին տարածութեամբ, որից յիսուն հազարը անվէճ վանքի սեփականութիւնն է կազմում։ Իսկ մնացեալ 48 հազարը վիճելի է։ Վանքիս կալուածներում ապրում են աւելի քան քսան երկու թիւրք ղէլաղներ, որոնք այդ անասնման տարածութիւնից օգտուելու համար վճարում են ընդամենը 396 րուբլի։

Ներկայումս խղճալի վրութեան մէջ են գտնուում վանքիս կալուածները։ Միայն այսքանս կասեմ որ ամբողջ Գեղարքունեաց մեծատարած վիճակի ազգաբնակութիւնը, իւր բոլոր շինութեանց համար հարկաւոր փայտը տանում է Խօթայ կալուածների անտառներից, մեծաւ մասամբ գողունի և մասամբ էլ չորացած և անկեալ ծառերի անուամբ։ Այս մասին հաւաստիանալու համար բաւական է միայն Թումբասար լեռնաշղթայի անցքերում մի երեք օր կանգնել և տեսնել թէ ինչպէս կարաւան կարաւանի եւսից շինութեանց համար գերաններ և այլ տեսակ փայտեր են անցկացնում։

Բայց վանքի գիւղացիները այլ կերպ են վարուում անտառների հետ. իւրաքանչիւր «Ղըշլաղի» ժողովուրդ իւր համար ազատ կոտորած է անում անտառում, նոր նոր խմահատներ բանալով և շինութեանց համար անհաշիւ ծառեր կոտորելով։ Գիւղացիները իւրաքանչիւր ձմեռ անհամար ծառեր են ճղակոտոր անում, բոխբոխոտած կոկոններով ընտանի անասուններին կերակրում և գարնանը կրակի ճարակ տալիս անտառին, որպէս զի մի քանի չափ հացահատիկ ցանեն։

Այժմ անցնենք վանքի գովանի ամարանոցների և ձմերանոցների արօտատեղիներին. Թէ ինչպէս են պահպանուում վանքապատկան արօտատեղիները, ես միայն կը վկայեմ իմ աչքով տեսածների մասին։ Ամենայն տարի արքունի և զանազան բեկերի պատկանող Թուրք գիւղացիներ անարգել մտնում են վանքապատկան կալուածները և իրանց համար ազատ կերպով վրաններ ցցում վանքական արօտատեղիներում և իւրեանց ընտանի անասունները արածացնելով հանդերձ ազգի ազգի նեղութիւններ են հասցնում և վանքական Թուրք ազգաբնակութեան, նրանց արտերը և արօտատեղիները փչացնում և այլ նեղութիւններ տալիս։ Ինչպէս օրինակ վերջին ժամանակներս Գլիջլու Թուրքերը ինքնագլուխ մտել են վանքական կալուածները և վարուցանքս են սկսել վանքական Դամուրչիդամլու Թուրքերի կալուածներում։ Եթէ այսպէս շարու-

---

1. Իսկ Ղարաբաղի թեմն նուխիի յայորդութիւնը շուխիի և Արաշի գաւառներից։

նակուի, շատ մօտիկ ապագայում վանքական կալուածները հեշտութեամբ կօտարանան և վանքին մեծամեծ վնասներ կը հասնի։ Պէտք է միջոցներ ձեռք առնել այսպիսի յարձակումների դէմ, որպէս զի վանքի կալուածները չօտարանան։

Սրանից շատ տարի առաջ Շուշուայ կոնսիստորիան Խօթայ վանքի լայնածաւալ յիսուն հազար դեսեատին անվէճ կալուածը պայմանագրով յանձնել է վանքական Այրումցի թուրք ազգաբնակութեանը տարեկան չորս հարիւր ռուբլի կապալագրամով, որի ժամանակամիջոցը վաղուց ի վեր է լրացել, բայց մինչև ցայսօր չեն կարողացել պայմանագիրը նորոգել կամ փոփոխել։ Թուրքերը յիշեալ պայմանաթղթի հիման վրայ ինդրագրով դիմած են հաշտարար միջնորդին, որպէս զի Խօթայ վանքի կալուածներում Այրումցիների վրայ հողաբաժանութիւն կատարուի։ Ինչպէս հաւատացնում էր հաշտարար միջնորդը 1895 թուականին հողաբաժանութիւնը պիտի տեղի ունենար Այրումցիների համար։ Ահա թէ որպիսի վերահաս վտանգների հետ պիտի մրցել. անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել, որպէս զի վանքն այսպիսի հանդամանքներում զրկանքներ չկրի։ Այժմ վանքական 150 տուն թուրք ազգաբնակութիւնը ցրուած է ապրում վանքի կալուածներում. ամէն մի ձորամիջում երկու երեք տուն մի մի ղշլաղ կազմելով ձգտում են հողաբաժանութեան ժամանակ հազարաւոր դեսեատին կալուածներ հողաբաժին ստանալու։ Առաջիկայ հողաբաժանութեան ժամանակ շատ մեծ և ղգուշաւոր ուշադրութիւն պիտի դարձնել, որպէս զի վանքը բազմակողմանի իրաւունքներ վերապահի դէպի իւր հպատակ ազգաբնակութիւնը։ Վերջացնելով խօսքս Խօթայ վանքի մասին՝ այսքանս կարող եմ ասել, որ վերոյիշեալ լայնածաւալ կալուածներից և անտառներից կարելի կը լինի հազարաւոր ռուբլի եկամուտ ստանալ, եթէ միայն փոխուի այդ կալուածի կառավարութեան եղանակը. բաւական է միայն Թումբասար լեռնաշղթայի անցքերից մինում գրաւենակից տոմսակ վերցնելու, Գեղարքունեաց ազգաբնակութիւնը չկարողանայ ինքնագլուխ և գողունի կերպով փայտեր անցկացնել։ Նոյնը և կարելի է անել այն արքունի և բնկական թուրքերի վերաբերութեամբ, որոնք ինքնագլուխ մտնում են վանքական կալուածները և ձրիաբար օգտուում։ անխիղճ պահանջելով բոլորից օրինական տոմսակներ և ապա թոյլատրել օգտուելու։

Խօթայ վանքի կառավարութեան գժուարութիւններից մինն էլ այն է, որ այնքան կալուածներում ոչ մի հայաբնակ գիւղ չը կայ։

2. Գանձասարի սուրբ Յովհաննու Մկրտչի վանքը գտնուում է Խաչենայ գետի վրայ, երկու վերստ հեռաւորութեամբ դէպ հիւսիս։ Այս վանքը Ներքին Խաչենի իշխանազունների հանգստեան տեղն է կանգնած։ Իշխաններից Հասան Ջալալ Դուլա ականաւոր մեծ մարդը կառուցեց այս վանքը ՈՃԸ (688—1239) թուականին իւրեանց տոհմային հանգստարանում։ Թաղէի Խօթայ վանքից յետոյ ամբողջ Ղարաբաղի վանքերի մէջ առաջին տեղը կարող է բռնել Գանձասարը թէ իւր ճարտարապետական կերտուածքով և թէ վանական կալուածական հարստութեամբ։

Ներկայումս վանքը շատ անմխիթար դրութեան մէջ է գտնուում։ Կաթուղիկէն ճաքճքոտած, տանիքը խոնաւ և բուսականութեամբ ծածկուած, խցերը և կացարանները քայքայուած, խանգարուած, այնպէս որ հազիւ կարելի լինի Աղուանից վերջին կաթուղիկոսարանում մի սենեակ գտնել մի քանի օր գիշերելու։ Շրջապատի պարսպի փլած անցքերն անգամ չեն կարկատուած։ Վանքի մէջ բացի վանահօրից ոչ մի միաբան չկայ։ Այս վանքում անհրաժեշտ էր մի ընծայարան բանալ, որպէս զի շրջակայ բազմաթիւ հայաբնակ ժողովրդականաց համար եկեղեցականներ պատրաստուին։ Հաշտարար, որ վանքն այժմ ամայի է և աւերակ, բայց և այնպէս Գանձասարն ունի բաւական անվէճ կալուածք թէ իւր շրջակայքում, թէ Շուշու և թէ Ջուանշիրի գաւառների զանազան կողմերում։ Շուշու գաւառում ունի Քարագլուխ գիւղի մօտ 676 դեսեատին ամենագովական վարելահող և անտառ, այգիներ և այգետեղիներ։ Այս կալուածքը, որ կոչուում է Աշմանա, Գանձասարի ամենաարգիւնաշատ կալուածքը կարելի է համարել, նամանաւանդ, որ այս կալուածքի հարևանութեամբ ապրող հայաբնակ գիւղերը փայտի կողմից մեծ կարօտութեան մէջ են և համարեա այս կալուածքի անտառներով են կառավարուում։ Այս կալուածքը Գանձասարից 20—25 վերստ հեռաւորութիւն ունի և համարեա կից է Պակի սուրբ Գէորգայ վանքի կալուածներին, Բացի սրանից Գանձասարն ունի վանքից 15—20 վերստ հեռաւորութեամբ հայաբնակ Կիչան (Խալուղայեաց) գիւղը և գիւղի կալուածներին կից Գիւղյակ (կամ Գիւղլութալայ) և Ալընջատաղ վարելահողերը։ Այս բոլորը միասին առած վանքն ունի մօտաւորապէս 3,000 դեսեատին վարելահող և անտառ։ Իսկ Թարթառի Հաթերք գիւղում Գանձասարից 25—30 վերստ հեռու գտնուում է Հաթերքի Ծաղկոց անուամբ կալուածքը, զուտ վարելահող, 300 դեսեատին տարածութեամբ։ Իսկ վանքից 10 վերստ հեռաւորութեամբ գտնուում է վանական կճողուտ (Եայջի) հայաբնակ գիւղը, որ նմանապէս ունի երեք հազար դեսեատին վարելահող և անտառ։ Բացի այս բոլորից Գանձասարի շրջակայքում գտնուում է վանական ամենամեծ կալուածքը, Վանք կոչուած կոչուած գիւղը, Հիւնահող և Գոմական գիւղատաժանումներով, որոնց տարածութիւնն է մօտ վեց հազար դեսեատին։ Այս կալուածքում է գտնուում և Գանձասարի անսպառ եկամտի աղբիւր Իրկանաքարի հանքը, որ միակն է ամբողջ Ղարաբաղում։ այս հանքը գտնուում է վանքից երկու վերստ հեռու։ Ընդամենայն Գանձասարի կալուածքները հասնում է 12,600 դեսեատինի. որից հոգևոր իշխանութիւնը եկամուտ է ստանում 795 ռ. 43 կ. նոյնքան էլ ծախսում է վանքի և կալուածների պահպանութեան վրայ։

Անցեալ տարի Գանձասարի վանական գիւղացիների մէջ կատարուեց հաշտարար միջնորդի ձեռքով հողաբաժանութիւն, որով որոշուեց վանքի և ժողովրդականաց յարաբերութիւնները, մեծ մասամբ յօգուտ վանքի։ Այնպէս որ այսուհետև կալելի կը լինի վանքի եկամուտները հասցնել երեք հազար ռուբլուց աւելի, որով կարելի կը լինի և վանքը պայծառացնել և կալուածները յափշտակութիւններից ազատ պահպանել։

3. Մեծարանց սրբոյն Յակոբայ վան-

քը գտնուում է Խաչենայ գետի հարաւային կողմը, գետից երկը վերստ հեռաւորութեամբ։

Այս վանքը վերստին նորոգուած է Հասան Ջալալ Դովլայի մօր Խորիշահ տիկնոջ ձեռքով ՈԿԱ (661—1212) թուականին իւր հանգուցեալ ամուսնի Վախտանգ իշխանի յիշատակին. Վանքը նման է մի խարխուլ, խանգարուած, ճաքճքած հասարակ մի ղոյզ եկեղեցեաց կամ մատուռների, շինած բոլորովին հասարակ քարերից։ Այս վանքումն էին նստում Աղուանից կաթուղիկոսներից շատերը, որոնց դամբարանները շարուած կան վանքի գաւթում։ Սկզբում այստեղ էր պահուում Արցախի աւագ սուրբ Նշանը որին անյայտանալուց յետոյ փոխարինում է սրբոյն Ցակորայ աջը, որ ներկայումս մեծ յարգ ունի ամբողջ Ղարաբաղում։ Վանքն ունի ընդամենայն 452 դեսեատին կալուածք, անտառ, վարելահող և մի ջրաղաց Քոլատակի գետի վրայ, որ Խաչենայ գետի մեծ վտակն է համարուում։ Տարեկան եկամուտ ունի 158 ր. 58 կ. նոյնքան էլ ծախսուում է վանքի պահպանութեան համար։

4. Սուրբ Եղիշայ առաքելոյ վանքը գտնուում է Թարթառ գետի հիւսիսային կողմում Թարթառի մէջ թափուղ եղիշ առաքել անուամբ ջրի վրայ։ Վերանորոգուած է ՈԼԳ (633—1284) թուականին ոմն Սերաւբ Սարկաւագի ձեռամբ։ Վաչագանեան տոհմի շիրմատունը և Ղարաբաղի ամենահին վանքերից մինն է համարուում։ Վանքը խարխուլ և աւերակ մատուռների մի կոյտի է նման. ունի ընդամենն 22 դեսեատին անտառ և վարելահող տարեկան եկամուտ 20 ր. 78 կ., որքան ստացուում է, նոյնքան էլ ծախսուում է վանքի պահպանութեան վրայ։

5. Սուրբ Երից մանկանց վանքը Թարթառ գետի աւագ վտակի Թրղիի վրայ է գտնուում, Թարթառից 10 վերստ հեռու։ Շինուած է ՌՃԽ (1140—1691) թուականին Աղուանից հակաթոռ Սիմէոն կաթուղիկոսի ձեռամբ, բաւական հոյակապ կաթուղիկէ ունի, որ միայն մի քանի տեղից վնասուած է. շուրջը կան բազմաթիւ քարաշէն բնակարաններ միաբանից և ուխտաւորաց համար։ Վանքն ունի ընդամէնն 25 դեսեատին վարելահող, անտառ և այգիք. եկամուտն է 86 ր. 35 կ. նոյնքան էլ ծախք։ Այսպէս Ջաւանշիրու հինգ վանքերն ունին անվէճ 60,856 դեսեատին, իսկ վիճելի յիսուն հազար։

II. ՇՈՒՇՈՒ ԳԱՒԱՌԻ ՎԱՆՔԵՐԸ.

6. Պոկի սուրբ Գէորգայ վանքը գտնուում է Համամնուն լեռնաշղթայի ամենաբարձր գագաթան վրայ։ Այս շղթան է բաժանում միմեանցից Ղարաբաղի երկու պատմական գետերը, Խաչենն և Գարգարը։ Վանքը շինուած է ՌՃՂԲ (1194—1745) թուականին ոմն Յովհաննէս վարդապետի ձեռամբ։ Այժմ սա մի կիսաւեր և ամայի շինութիւն է։ Վանքի մօտ կան մի քանի կիսով չափ փուլ եկած խցեր։ Ընդամենայն ունի կալուածք մօտ 300 դեսեատին անտառ և վարելահող։ Տարեկան եկամուտ է բերում 110 ր. 35 կ., նոյնքան էլ ծախսուում վանքի վրայ։ (Այս վանքի կալուածներին կից է Գանձասարի քարագլխի մօտ Աշմանա կոչուած կալուածքը 776 դեսեատին։)

7. Ամարասի ս. Գրիգորիսի վանքը համարուում է Ղարաբաղի ամենահին ուխտատեղին. գտնուում է Ամարաս գետի վրայ (Քէօչուզ) ըստ պատմչաց հիմնարկուած է 332 թուականին սուրբ Լուսաւորչից, Իսկ 530 թուականին նորոգուած է Վաչագան Աղուանից արքայի ձեռամբ և վերջին նորոգ շինութիւնը 1858 թուականին Վեհափառեան Գէորգ Արքեպիսկոպոսի նախաձեռնութեամբ։ Միակ վանքն է Ղարաբաղում, որ շինուած է գաշտավայր տեղում, շրջապատուած քար ու կիր քառաբուրգ պարսպով, կամարակապ բնակարաններով և խուցերով։ Ներկայումս վանքի կտուրը բաւական վնասուած է, կրածածքը փչացած. միայն խցեցի մեծ մասը վերանորոգած և պայծառացրած են։ Այս վանքն ունի մօտ 500 դեսեատին ապատ կալուածք, վարելահող, այգիներ և այգետեղ և մի ջրաղաց։ Տարեկան եկամուտն է 400 ռ., նոյնքան էլ ծախք ունի։ Այս վանքի կալուածներից կարելի է աւելի շատ արդիւնք ստանալ։

8. Քթիշայ ս. Գրիգորիսի վանքը համանուն լերան լանջի վրայ։ Շինուած է Ամարասու Սարգիս և Վարդան եպիսկոպոսների ձեռքով ՈՂ. (690—124) թուականին, Ամարասն ամայանալուց յետոյ։ Այս վանքն իսպառ քայքայման է ենթարկուել. ունի 65 դեսեատին անտառ և վարելահող, Ոչ մի արդիւնք չէ տալիս և վանահայր էլ չունի։

9. Ս. Ղեւոնդեանց անապատը շինուած է Քեօնդալան գետի Շորաջուր վտակի վրայ 3 վերստ հեռաւորութեամբ։ Վանքը մի հին դպրոց ուի։ Արձանագրութիւնները իսպառ եղծուած են, Շրջապատած է կիսաւեր քարաշէն պարսպով և խարխուլ կացարաններով։ Ունի մօտաւորապէս 50 դեսեատին անտառ և վարելահող։ Եկամուտն է 57 ր. 84 կ. նոյնքան էլ ծախք։

Շուշու գաւառի չորս վանքերն ունին կալուածք 1666 դեսեատին. սրա մէջն է և Գանձասարի քարագլխի մօտի Աշմանա կալուածքը 776 դես.

III. ՋԱԲՐԱՑԻԼԻ ՎԱՆՔԵՐԸ.

10. Սպիտակ Խաչի վանքը գտնում է Հադրութի գետի վրայ (Դօղլուչայ), գետի հարաւային կողմը մի վերստ հեռաւորութեամբ։ Ծողովրդական աւանդութիւնը պատմում է իբր թէ Աղուանից առաջին կաթուղիկոս սրբոյն Գրիգորի նահատակութիւնից յետոյ, նորա հայրապետական գաւազանը և լանջական բիւրեղեայ խաչը պահուում էր Ամարասում, որտեղ ամփոփուած են նորա նշխարները։ Ամարասն ամայանալուց յետոյ յիշեալ սրբութիւնները պահուեցան Քթիշայ վանքում, իսկ վերջինիս անշքանալուց յետոյ Սպիտակ խաչի վանքումն էր պահուում բիւրեղեայ սպիտակ խաչը, որ ինչպես ասում են վերջին ժամանակներումս է անյայտացել։ Այս վանքի շինութեան բուն թուականը յայտնի չէ։ Կարկատանի խաչքարերի արձանագրութիւններից երևում է, որ երեքտասաներորդ դարում պիտի լինի շինուած. բայց վերջին նորոգութիւնը եղած է ՌՃՀԴ (1184—1735) թուականին ձեռամբ Սուրապի որդի Յովհաննէս եպիսկոպոսի։ Վանքի ներկայ շինութիւնը բաւական մեծաւր և ամուր շինութիւն է։ Ունի չորս կտոր վարելահող մօտ 25 դեսեատին, եկամուտն է 20 ռուբլի։ Ջաբրայէլի գաւառում ունինք միայն մի վանք, որի կալուածն է 25 դեսեատին։

Այսպէս ուրեմն Վարագայի թեմում գտնուում է ընդամէնը 10 վանք, որոնցից միայն երկուսի մէջ կան վանահայրեր, Ամարասում և Գանձասարում: Խօթում նստում է մի քահանայ, որ անունով միայն վանահայր է: Իսկ մնացեալ վանքերում ոչ վանահայրեր, ոչ պահապաններ կան: Այս ասած վանքերի կալուածները հասնում են 112,540 դեսեատինի, որից անվէճ է 62,540 դեսեատին, իսկ վիճելի 50 հազար: Ընդամէնը եկամուտ է եղել ընթացս 1892 ամի 2,060 ռ. և ծախք 2,060 ռ.:

ՑՈՒՑԱԿ

ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ՎԱՆՔԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՑ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԻ.

Թիւ		Ընդհանուր կալուածոց. դեսեատինով:	Եկամուտ 1892 թ.		Ծախք 1892 թ.		Վանահայր
	Ա. Ջուանշիրու զաւառում:						
1.	Թադէի (Խօթայ) որ և Զարեքտարի վանք.	98,438	396	—	396	—	Անունով միայն.
2.	Գանձասարի ս. Յովհաննու Մկրտչի « »	12,600	795	43	795	43	ունի
3.	Մեծարանց ս. Յակովբայ . . « »	452	158	58	158	58	չունի
4.	Եղիշայ Առաքելոյ . . . « .	25	20	78	20	78	չունի
5.	Երից մանկանց . . . « »	25	86	35	86	35	չունի
	Բ. Շուշու զաւառում:						
6.	Պակի ս. Գէորգայ . . . « »	300	120	35	120	35	չունի
7.	Ամարասու ս. Գրիգորիսի . . « »	500	400	—	400	—	ունի
8.	Քթիշայ « » . . « »	65	—	—	—	—	չունի
9.	Ս. Ղևոնդեանց անապատը.	50	57	84	57	84	չունի
	Գ. Ջաբրայէլու զաւառում:						
10.	Սպիտակ Խաչի վանքը.	25	25	—	20	—	չունի
	Ընդամենայն	112,540	2060	—	2060	—	5 վանքում վանահայր. 7 վանք վանահայր չկայ:
	Վիճելի	50,000					
	Անվէճ սեպհականութիւն	62,540					

Խ. Վ.

2. ՏԱՃԿԱՀԱՅՔ.

Հայրապետական գիւան հասած տեղեկագրութիւններից երևում է, որ Ուրմիայի, Դիարբէքիրի, և Կիլիկիոյ առաքելական թեմերում ոտկոխի կաթողիկոսներ են տեղի ունեցել անցեալ տարուան նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին: Մարաշի և Այնթափի կաթողիկոսական տեղապահների մանրամասնութիւնները դարձեալ պարզուելի են: Այս տեղեկութիւններից երևում է, որ գեռ եւս Տաճկաստանը հեռու է իրապաշական վիճակի մէջ մնալուց, մանաւանդ որ Դերսիմի գրգիռը յայտնի ապստամբութեան դրօշ են բարձրացրել և ամբողջ թիւնն անզօր է նրանց ընկճելու:

Կարինիոյ և առհասարակ բուն Հայաստանից հասած տեղեկութիւնները պատմում են այն սարսափելի սովքաստութեան մասին, որի տակ հաւասարապէս հեծում են թէ քրիստոնեայք և թէ մահմետականները: Վտանգաւորութիւն և արհաւիրքը պատարել են:

—Ամենասիրելի Տէր Մատթէոս պատրիարքը մի աղտու բողոքագիր է ներկայացրել Բ. Դրանը և մի առ մի թուելով հայազգին հասած զրկանքները, պահանջում է որ բաւարարութիւն տրուի կողոպտուածներին, պատժուին մարդասպանները, առեւանգիչները, քոնաքարողները, սրբութիւնները պղծողները, սրա հետ միասին պահանջուում է, որ գաւառներից յետ կանչուին քաղաքական և զինուորական այն պաշտօնեաները, որոնք յայտնի մասնակցութիւն են ունեցել քրիստոնեաների ջարդի մէջ։

Աղգիս վեհափառ Հայրապետը այս զեկուցումն ընդունելով՝ միւս բոլոր տեղեկագրերի հետ ուղարկեց ռուսաց կառավարութեան արտաքին պաշտօնեայ վեհմապատիւ Լոբանով-Ռոստովսկի իշխանին։ Վեհափառ Հայրապետը այդքան մեծամեծ թշուառութիւններին գարման հասուցանելու համար խնդրել է նաև ներքին գործոց պ. Նախարարի միջնորդութիւնը հանգանակութեան իրաւունք ստանալու համար։

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԻԼԻԿԻՈՑ ՀԱՑՈՑ.

Քաղաք եւ գիւղօրայք.	Տունք.	Քաղաք եւ գիւղօրայք.	Տունք.
Ատանա եւ իր գիւղերը . .	3,600	Եօզղատ իր գիւղերով . .	5,000
Տարսոն	80	Մանճըլըք իր գիւղերով .	2,500
Մէրսին	15	Մարաշ « » .	3,000
Սելեւկիա	200	Այնթապ	2,500
Սիս	100	Քիլիս	500
Ղարսպազար	300	Հալէպ	100
Հաճըն իր գիւղերով . .	5,000	Անտիոք իր գիւղերով . .	1,200
Վահկա	200	Պէյլէն եւ իր գիւղերը . .	400
Զէյթուն իր գիւղերով .	4,000	Իսկէնտէրուն	80
Փոնուզ	800	Զօրքմարզպան իր գիւղերով	3,000
Կապան	800	Մամնստիա	200
Կոկիսոն իր գիւղերով . .	1,000	Հայլեռ իր գիւղերով . .	2,000
Եփեսոս (Շարբազ) . .	200	Պէսնի	600
Էլպիստան իր գիւղերով .	500	Ադինեաման իր գիւղերով.	800
Կիւրին	3,000	Մալաթիա « »	3,000
Դարէնտէ	1,000	Տիվրիկ « »	3,000
Աշոտի	800	Էվէրէք « »	600
Գումար	23,450	Գումար	29,980
		Ընդհանուր գումար	53,430
		Անձինք	×5
			267,150

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ·

ԿԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ·

Կոնդակ յանուն Ա.մենապատիւ Պատրի արքին Կ· Պոլսոյ Տ· Մատթէոս Արքեպիսկոպոսի Իշխիրլեան Հմր· 1152, որով լուծեալ համարի պսակ Պօղոսի Քիւրքճեան Քարբերդցւոյ ընդ կնոջ իւրում Ֆալիայի Սրաբեան, վասն ենթակայ լինելոյ վերջնոյս ախտի լուսնոտութեան յառաջ և յետ ամուսնութեան, ըստ վկայութեան կրօնական ժողովոյ Կ· Պոլսոյ, տալով իրաւունս առն մնալ ի նոր ամուսնութիւն։

Կոնդակ յանուն Նոյն Ա.մեն· Պատրիարքի Հմր· 1153, որով արտօնի հրամայել պսակել զԽաչուհի անուանեալ կին Տիգրանակերտցի ընդ առն այլում, ըստ հայեցողութեան Ս· Պատրիարքին։

Կոնդակ յանուն Ս· Սինօդի Հմր· 1156, որով պատուիրի հրամայել Կոնսիստ· Շամախւոյ առաքել վոխարինաբար Մկրտիչ քահանայի Աստուածատրեան մի հարիւր րուբլիս ի ճանապարհածախս ի Գանձակէ ի Շամախի, եթէ յայս նուագ ևս դանդաղեսցի գնալ՝ զրկել զնա ի պաշտամանէ քահանայութեան։

Կոնդակ օրհնութեան Հմր· 1171, յանուն սք· Դանիէլի Յովհաննեան ի Ռոստով քաղաք ի վերայ Դօնի։

Կոնդակ յանուն գործակալի կոմմանցն Գեղարքունեաց և Նոր Բայազիտի Տ· Կիւրեղ վարդապետի Հմր· 1, որով շնորհի նմա լանջախաչ վարդապետական ականակուռ՝ ըստ վիճնորդութեան փոխ—թեմակալին երևանայ։

Կոնդակ յանուն վանահօր վանուցն Մոշնւոյ ս· Գէորգայ և գործակալի կոմմանցըն Աշտարակայ և Ապարանի Տ· Գեղամ վարդապետի Հմր· 2· որով շնորհի նմա իրաւունս կրել զծաղկեայ փիլոն։

Կոնդակ յանուն Սինօդի Ս· Էջմիածնի Համարաւ 53, որով պատուիրի անյապաղ մատուցանել Նորին Սրբութեան զդուցակ անկատար գործոց Սինօդին։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուն Անտոնի Թամբեան ի Պեսգորսկ, Համարաւ 55, վասն նուիրելոյ զ220 ռուբլիս յօգուտ Մայր Աթոռոյս՝ ըստ յայտարարութեան Գեր· Թեմակալին Ատրպատականի։

Կոնդակ յանուն Սինօդի Ս· Էջմիածնի Համարաւ 62, որով յայտնի զկարգմանէ Նորոգ անգամոց վանական կառավարութեան Մայր Աթոռոյ։

Կոնդակ յանուն Սինօդի Ս· Էջմիածնի Համարաւ 93, որով յայտնի զկարգմանէ Միքայէլ վարդապետի՝ ի վանահայր ս· կարապետ վանուցն Երնջակոս, ի տեղի հանգուցեալ Եպիշէ վարդապետի Ա.մատունեայ, և Գրիգոր վարդապետի Տէր Ստեփաննոսեան՝ ի գործակալ կոմմանցն Վաղարշապատի և Սարգարապատի, ի վանահայրութեան վանուցն ս· Գայեանեանց։

Կոնդակ յանուն Ա.մեն· Ս· Պատրիարքին Կ· Պոլսոյ Տէր Մատթէոս Արքեպիսկոպոսի Համարաւ 67, որով լուծեալ համարի պսակն դոկտոր Բարդող Մինաճեանի ընդ կնոջն, տալով առաջնոյն իրաւունս մնանել ի նոր ամուսնութիւն, իսկ կնոջն ոչ երբեք։

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՑԱՆՁՆԱԺՈՂՈՎ·

1· Տիկին Լուսինթագ Բաբեանց ժ· կարգ·
2· Բարսեղ Քալինեանց . . . Գ· կարգ·
3· Ստեփաննոս Խաչատրեան Տէր Աւետիք-եանց . . . . Ե· կարգ·

Եկեղեցական—ծխական երկսեռ դպրոցների ուսուցիչք և վարժուհիք հրաւիրուում են ուշադրութիւն դարձնել Ո. Վ. Ցանձնաժողովիս անցեալ 1895 Թուականի Նոյեմբերի ամսոյ «Արարատի» ծանուցման վերայ և Նորա համաձայն իւրեանց ուսման վկայաթղթերը պահանջել գերապատիւ առաջնորդաց միջոցաւ։

ԿԱՂՈՒԱԾՔ Ս· ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ։

Ի 23 Հոկ· 1895 ամի· Սինօդը ի նկատ առնելով Տփխիսի կալուածոց կառավարչի յայտարարութիւնր 13 հոկտ· 33, թողլատրեց Դայշտի—խաչ կոչուած կալուածքի անհրաժեշտ նորոգութիւնները հոգալ։

Ի 23 Հոկ· կարսի Հայ հասարակութիւնը արձանագրելով տեղւոյն երկսեռ դպրոցաց անձուկ վիճակը, խնդրած է Սինօդից որ թողլատրէ Դայլարկոչուած Հողի արդիւնքը, հանգուցեալ Գ· եպիսկոպոս Աղուանեանի կարս ի պահեստի թողած դրամները, նոյնպէս և յանուն եօթն վիրաց ս· Աստուածածնայ պատկերի կարսի վիճակից ժողովուած արդիւնքը յատկացնել տեղւոյն դպրոցներին։ Սինօդը անյարմար համարելով՝ մերժեց ինչպէս Դայլար Հողի արդեանց և հանգուցեալ Աղուանեան եպիսկոպոսի թողած դրամոց յատկացուցանելը, նոյնպէս և եօթն վիրաց պատկերի կարսի վիճակում շրջեցնելը։

13 Նոյեմբ. Սինոդը Ազգիս վԻՀ. Հայրապետի կոնդակի համաձայն, 31 Հոկ. թ. 87՝, որոշեց Գօրիի վիճակի փոխանորդ եղիշէ վարդապետ Մուրադեանին արձակել իւր պաշտօնից և կարգել փոխանորդ կարսց վիճակին, եղիա վարդապետ Հասան Ջալալեանցին արձակել Մուղնոյ վանահայրութիւնից և նորա տեղը կարգել գեղամ վարդապետ բաբաջանեանցին։

Ի 13 Նոյեմբ. Սինոդը ի նկատ առնելով Շամախոյ քնակիչ կոլեժսկ. ասեսօր թադէոս բէկ եգանեանի խնդիրը յանուն վԻՀ. կաթուղիկոսի տուեալն մակագրութեամբ ի Սինոդն, որով խնդրում է փոխադրել իւր հանգուցեալ որդւոյ Ադաբէկի դին Մանգլիսից իւր հայրենի գերեզմանատունը ի Շամախի, մերժեց այդ խնդիրը գտնելով հակառակ կանոնաց Հայաստանեայց ս. եկեղեցւոյ։

Ի 17 Նոյեմբ. Սինոդը հիմնուելով Տփխիսի կոնսիստ. յայտարարութեան վերայ թ. 3973՝ թոյլատրեց Գանձակի ս. Գէորգ եկեղեցւոյ երեցփոխին, գործակցութեամբ ընտրեալ հոգաբարձուաց եկեղեցական դրամք ի նորոյ շինել եկեղեցական կրպակները, ծախսելով նոցա վերայ 3003 ռուբլի։

Ի 20 Նոյեմբ. Սինոդը ի նկատի ունենալով Գառնոյ և Մուղնւոյ, գործակալաց անյարմարութիւնը իրենց պաշտօնի մէջ, նոցա տեղը նշանակեց Արժանապատիւ Գեղամ վարդապետ բաբաջանեանցին գործակալ Աշտարակի, Հմայեակ վարդապետ Տէր Սարգսեանին օգնական վանահօր խորվիրապայ և միանգամայն գործակալ Գառնոյ կոզմանց։

Ի 24 Նոյեմբ. Սինոդը ի նկատ առնելով Երևանայ կոնսիստ. յայտարարութիւնը ի 10 յունիսի թ. 1009՝ ուր նկարագրուած է Երևան քաղաքի մէջ գտնուած Մայր Աթոռոյ կալուածոց աննախանձելի դրութիւնը և կոնսիստ. անձեռնհասութիւնը կալուածոց կառավարութեան համար, անօրինեց կարգել կառավարիչ նոյն կալուածոց պ. Խոչատուր Ա յդինեանին։

Ի 24 Նոյեմբ. Սինոդը ի նկատի ունենալով կարբի գիւղի քնակիչ Աւետիս Մելքոնեանի խնդիրը, որով կը խնդրէ Մուղնի գիւղը ինն տարի ժամանակաւ տալ իրեն վարձու, խոստանալով վճարել 300 ր. ի տարին, անօգուտ համարելով, մերժեց նորա առաջարկութիւնը։

Ի 11 դեկտ. Սինոդը Ազգիս վԻՀ. Հաթուղիկոսի կոնդակի համաձայն ի 5 փետր. թ. 155 որոշեց թոյլ տալ Մայր Աթոռոյ Տպարանի վարչութեան այսուհետև ժողովել Տպարանական արդիւնքները, որի համար պատուիրեց բոլոր վիճ. Առաջնորդներին, որ յանուն Տպարանական վարչութեան ուղարկեն այն բոլոր արդիւնքները, որոնք Տպարանին կը վերաբերեն, ընդ նմին հրամայուեց Տպարանական վարչութեան, որ համաձայն վԻՀ. Հայրապետի անօրէնութեան հոգայ կանոնաւոր ժողովման արգեանց Տպարանի և եթէ ոևէ արգելք առաջ գան՝ յայն դէպս դիմէ Սինոդին ի պատշաճաւոր կարգադրութիւն։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։

ԿՐՕՆԱԿԱՆ — ԲԱՐՈՅԱԿԱՆ։

1. ՆՈՐ ՏԱՐԻ. . . Գ. Վ. . . . 1
2. ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉՈՒԹԵԱՆ տօնի շիշդ օրը Կ. Վ 3
3. Ռուսաց եկեղեցական մամուլի ցանկութիւնները. . . Կ. Վ. . . 4
4. Անգլիական եկեղեցին եւ արեւելքի եկեղեցիք. . . Բ. Յ. . . 9
5. ՅԱՆՁՆԱՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ . . Ն. Ք. . 12

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ — ՊԱՏՄԱԿԱՆ։

6. ՓՇՐԱՆՔ Մ. Նալբանդեանի շարադրու թիւններից . . Ն. Ք. . 17
7. ՆՈՐ Տարի (Նեկրասովից Թարգմ.) Բ. Բ. . 18
8. ՆՈՐ Տարի (Պատկեր Շիրակի կեանքից) Ե. Մ. 18
9. Նիւթեր ուսումնասիրութեան Աղուանից պատմ. . . Յ. Վ. . . 22
10. Սասանեան Տէրութեան պատմութիւն (Թ. Նէօլդէքէ. Թարգմ.) Ն. Ք. . 27
11. ԳՐԻԳՈՐ Լուսաւորիչը գիրք այրել է Գ. Տ. Մ. 50
12. Թոնդրակեցիք մեր օրերում . Ն. Ք. . 52

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ — ԲԱՆԱՒԻՐԱԿԱՆ։

13. Ժողովրդական դպ. ուսուցչաց նախապատրաստութիւնը Անգլիայում . . 55
14. ՄԱՆՐԱԼՈՒՔ 56

ԱԶԳԱՅԻՆ։

15. ՀԱՑՈՑ Եկեղեցին 1895 թ. ընթացքում. 57
ՅԱՆՁՆԱԺ ՀԱՑԱՍՏԱՆՆԱՑ . . 40
ՄԱՑՐ ԱԹՈՌ. . . . . .
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԹԵՄԵՐ. . . . . .
Վրաստանի թեմ . . . . . .
Շուշւոյ թեմ . . . . . .
ՏԱՃԿԱՀԱՑՔ. . . . . .

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
ՑԱՒԵԼՈՒԱԾ.
ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ.
ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԱՒԵԼՈՒԱԾ «ԱՐԱՐԱՏԻ 1896 Թ· ՅՈՒՆՈՒԱՐ ԱՄՍԻ·

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՎԱՍՆ ԾՆՆԴԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆՆ ՏԱՒՆԵԼ Ի ՄԻՈՒՄ ԱՒՈՒՐ Ի ՅՈՒՆՈՒԱՐԻ ՎԵՑՆ։

Ի կղեմայ յառաջելասահման կանոնացն։

կարգեցին առաքեալքն Տեառն զաւր ծննդեանն Տեառն ի վեցն յունվարի։

Մաւարիա Երուսաղեմայ Հայրապետին։

Մկրտութեանն խորհրդոյ յերիս տաւնըս առաւել վաւաշգեցին հարքն մեր՝ ի զատիկն, ի պենտակոստն, ի ծննդեանն և ի մկրտութեանն, զոր ի միում աւուր տաւնեմք։

Յովհաննու Երուսաղեմայ Հայրապետին։

կանոնք և սահմանք եկեղեցւոյ՝ զաւուրս ը· պահեցեն ծերք և տղայք, ընդ նմին զշաբաթ և զկիրակէ, և յորում աւուր դիպեսցի կատարեցին զաւր ծննդեանն և մկրտութեանն Տեառն· վասն զի աստուածայինք են և փրկագործք։

Նեքտաւեա Հռոմայ Հայրապետին։

Սահմանք ուղղափառութեան եկեղեցւոյ յառաքելոցն հաստատեալ· ը· աւր պահել կրաւնաւորաց և ապաշխարողաց· և ը· աւր համարին ժողովուրդն, ընդ նմին զշաբաթ և զկիրակէ զատն աստուածայայտնութեանն՝ զծննդեանն առեմ և զմկրտութեանն, վասն զի աստուածայինք են և փրկագործ· յորում աւուր դիպեսցի կատարեցեն։

Գրիգորի Աստուածաբանի։

կարգեցէ եպիսկոպոսն իւրոյ եկեղեցւոյն ի ը· յունուարի զաւր ծննդեանն Տեառն և մկրտութեանն· և ի ժ· փետրուարի՝ զկիրակէն ի տաճարն։ Նորին։ Երիս ծնունդս գիտէ մեզ բանս· զմին՝ փչմամբն· Հոգի սուրբ եկեսցէ ի քեզ, և ի քթթել ականն բանն խառնեաց իւր մարմին· և զմիւսն մարժնանալովն և մկրտութեամբն։—Տեսանեմ զծնունդն և զմկրտութիւն անբաժանեւի ասէ և զմիւսն յարութեամբն· և վերագրէ զճառն ի յայտնութիւն Տեառն։ Եւ ոկսանի թէ Քրիստոս ծնեալ լինի· և թէ երևեցաւ Աստուած մարդ ծննդեամբ· և ի նոյն աւուր ասէ, մկրտութիւն է աւրս և պարտ է վաստակել։ Որ ցուցանէ թէ ծնունդն երեկոյնն էր և մկրտութիւնն առաւաւտուն։ Եւ այս արար հարկ առաջին հարցն· առնել զծնունդըն երեկոյնն, որպէս զի երևեսցի պատիւ մկրտութեանն առ առաւաւտուն։*

Սրբոյն Բարսղի։

Անուն դիցուք տաւնիս աստուածայայտնութիւն։

Հիպողիտոս եպիսկոպոսի։

Ինն ամսեայ Տէրն ծնաւ և երեսնամեայ մկրտեցաւ՝ ի նմին աւուր ըստ Ղուկայ· Եւ ցիսուս էր ամաց իբրև երեսնից, և յետ սակաւուց զմկրտութենէն ճառէ։ Քանզի աննման էր յայլում աւուր ծնանել և յայլում աւուր մկրտիլ, և թերահաւատութիւն ի մէջ արկանել՝ զի զայլ ծնեալ և զայլ մկրտեալ ասէին· զի երկու բնութիւնս և երկուս որդիս խոստովանեցան, և այնու յերկուս տաւնս բաժանեցին որք անհնազանդք էին։ Իսկ սկզբնի հաստատացելոց ի միում աւուր տաւնէ զառն ծննդեանն եւ մկրտութեանն։

Սեքերիանոսի եպիսկոպոսի ի Ղուկասու Աւետարանին մեկնութենէն։

Նախնիքն երկուս աւրս ի շաբաթին պահեցին, և զլիշատակ սրբոյն յաւուրս յայսոսիկ յառաջիկայն անցուցին· բայց միայն զաստուածայայնոյն և զաստուածորդւոյն տաւնսւր և հանդիպի կատարել՝ զի Աստուած է և զամենայն լուծանէ՝ զծննդեանն առեմ և զմկրտութեանն ի միում աւուր տաւնել։

* Շարունակութիւնը երեւի մի ուրիշ հեղինակի է, որ ՏՀ էր քերել Աստուածաբանի վկայութիւնը։

Ի թղթին Մելիտոնի եպիսկոպոսի որ առ եւտր եպիսկոպոսին:

Տաւնեմք ըստ աւետեաց հրեշտակին Թ. ամսեայ՝ ղՆնունդն. Ը. աւրեայ՝ զթլփվսաուԹիւնն. երեսնամեայ՝ զմկրտուԹիւնն: Եւ պատուել այսպէս ղՆնունդն և զմկրտուԹիւնն ի միում աւուր տաւնել:

Կիսլրիանոսի եպիսկոպոսի:

Քրիստոս ըստ մարմնոյ Լ. ամ լցեալ՝ յայսմ աւուր մկրտի յորում և ծնաւ ի սրբոյ կուսէն Մարիամայ:

Մարութայի Ընփրատայ եպիսկոպոսի:

Եւ զայս ասեմ ոչ երէ այլ և այլ են տաւն ծննդեանն և մկրտուԹեանն՝ ցառն, այլ ի միում աւուր տաւնել պարտ է. բայց գործքս այլևայլ են, որ այսաւր պատահեցան:

Ի հարցաքննուԹենէ Ասորոց վարդապետաց:

Դարձեալ ասէ Սահակ առ Աֆրիմ վարդապետն իւր. Եւ արդ՝ որպէս հրամայեցեր բազում անգամ, Թէ ի ղ. յունուարի ի վերջին քանունն ծնաւ Որդին Աստուծոյ ի կուսէն. իսկ ընդէ՞ր ոմանք եկեղեցիք ի դեկտեմբերի ի ՚ե. որ է առաջին քանուն:

Վարդապետն ասէ: Աշխարհն հռովմայեցւոց ի կառավարուԹեանն արեգականն երկիրպագանէին և ի ՚ե. դեկտեմբերի, որ է առաջին քանունն, յորժամ սկիզբն առնէր տիւն ի գիշերէն՝ մեծաւ ուրախուԹեամբ տաւնէին արեգականն և հարսանիք արեգականն ասէին զաւրն զայն: Իսկ յորժամ ծնաւ Որդին Աստուծոյ ի կուսէն, զնոյն տաւն կատարէին նոքա Թէպէտ և գարձան ի կռոցն Աստուած. և զայն տեսեալ առաջնորդացն, և առին զտաւն ծննդեան Քրիստոսի որ էր յունուարի ղ.-ն և եգին անդ, և խափանեցին զտաւն արեգականն՝ զի ոչինչ էր որպէս նախ ասացաք: Իսկ ծնունդն Քրիստոսի ստոյգ յունուարի ղ.-ն է, որ է վերջին քանունն, որպէս գրեցին սուրբ առաքեալքն ի գիրս կանոնացն յիջանել Հոգւոյն: Զոր ուսեալ երջանիկն Ղուկաս գրեաց յիւրում աւետարանն և ասէ. Յիսուս էր ամաց երեսնից սկսեալ յաւրն յորում մկրտեցաւ: Քանզի մեծ խորհուրդ ունի ղծնունդն և զմկրտուԹիւնն ի միում աւուր տաւնել. զի որպէս երկու բնուԹիւնն Աստուծոյն և մարդոյն միացան անշփոԹ, նոյնպէս և ՚ը. տաւնքն ի մի հաստատեցան ի լինիլ հաւատ եկեղեցւոյ սրբոյ:

Ի գարնոյ կանոնացն, որ կոչի հղոլամնաւ Յուստինոսի:

Վասն մեծի յայտնուԹեանն, զոր կարգեցին առաքեալքն ի ղ.-ն յունուարի՝ ուրախուԹեամբ տաւնել ի վառս Աստուծոյ: Եւ որ այլ ազգ խորհի և ՚ե. դեկտեմբերի ծնունդ առնէ Հետևելով Արտեմոնի, յԱստուծոյ և ի սուրբ ժողովոյս նզովեալ եղիցի. ամէն ամէ՞ն:

Վասն Արտեմոնի:

Արտեմոն յետ ը ամի խաչելուԹեան Տեառն՝ աշակերտեցաւ Յովհաննու աւետարանչին զամիս է. և ոչ եկաց հաստատուն յուղիղ հաւատս. զորմէ ասէ Յովհաննէս. ոմանք առ ի մէնջ ելին: Եւ յետ մահուան սուրբ առաքելոյն՝ ասէ Արտեմոն: Առաքեալքն ցառն վասն նախանձու ղծնունդն ոչ ասացին, իսկ այժմ յայտնեցաւ ինձ և ես ձեզ ծանուցանեմ: Եւ ընդհակառակս եղեալ գրէ ընԹերցուածս, և բաժանէ զմի Քրիստոսն յերկուս բնուԹիւնս և յերկուս որդիս, և կարգեաց երկուս տաւնս ըստ երկուց որդւոցն. ի ՚ե դեկտեմբերի կարգէ ղծնունդն ի սրբոյ կուսէն, և զծնեալն սոսկ մարդ ասէ, և ի ղ.-ն յունուարի կարգէ ըզմկրտուԹիւնն և զայն բանին Հաւր ասաց, և բաժանեաց զԱստուած բանն յիւր միացեալ և յաստուածացեալ մարմնոյն:

Ի թղթոյն Գրիգորի Արծրունեաց եպիսկոպոսի զոր գրեաց յԵրուսաղեմայ ի Հայք:

Արդ յետ ը. և ՚ը. ամի ԹագաւորուԹեանն Յուստինոսի կայսեր, կրկին մարտ եղ սատանայ ընդ եկեղեցի, և վոխեցին զսուրբ Հաւատն և այլայլեցին զկարգ ե-

կեղեցւոյ, զոր հաստատեալ էր սուրբ առաքելոցն։ Քանզի եմուտ առ թագաւորն հրէայ ոմն հերձուածող և ասէ. Ընդէ՞ր ոչ առնեն երուսաղէմացիքն զտաւն Տեառն ընդառաջին ըստ ծննդեանն և ոչ ըստ յայտնութեանն, որպէս և ամենայն երկիրս յունաց, եւ զայս լուեալ թագաւորն գրեաց վաղվաղակի թուղթ առ հայրապետ քաղաքին, որում անուն էր Յուստոս, առնել զտաւն Տեառընդառաջին ըստ ծննդեանն և ոչ ըստ յայտնութեանն։ Եւ յայժ արտասուեաց հայրապետն ժողովրդականաւքն հանդերձ։ Եւ երևեցաւ նշան յԱստուծոյ. քանզի բղխեաց ջուր ի սիւնէն, որ ի սուրբ Սիովն էր առաջի բազմութեանն և առաջի զաւրաց թագաւորին. և ամենեքեան ետուն փառս Աստուծոյ։ Եւ դարձեալ ի հայրապետութեան Տեառն Մակարու, ի նոյն թագաւորէն եկն սաստիկ հրաման մահու ի քաղաքն երուսաղէմ, թէ ոչ կատարեսցեն զտաւն Տեառնընդառաջին ըստ ծննդեանն և ոչ ըստ յայտնութեանն։ Եւ բազմութիւն քաղաքին ետուն ի մահ զանձինս իւրեանց, ոչ առնել զկամն թագաւորին. և զաւրք թագաւորին կամեցան սուր արկանել ի քաղաքն։ Եւ յԱստուծոյ խնամոցն այլ նշան յայտնեցաւ. քանզի սուրբ կոյսն Մարիամ տպաւորեցաւ ի նմին սիւնն որ ի սուրբ սիովն՝ ի գիրկս ուներով զՔրիստոս։ Եւ կայր յայլ Տեառն խաչ մեծ ծիրանի. և տեսին արդարք և մեղաւորք, և առժին բժշկեցաւ կին մի ի հայոց։ Իսկ յետ մահուան Մակարայ ընկալաւ քաղաքն զաղանդն։

Յովհաննիսի Հայոց կաթուղիկոսի։

Որ ծնունդ առնէ նախ քան զյայտնութիւնն՝ սուտ է, քանզի ծնունդն և յայտնութիւնն մի է և յայտ յընթերցուածոյն որ ասէ. Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս։

Պատրիարքն ասէ. Զաւետիքն նախ քան ծնունդն ընդէ՞ր ոչ առնէք։

Կաթուղիկոսն ասէ։

Զի ոչ ընկալաք յԱրտեմոնէ և ի Յոբնաղէ, այլ ի Յակովբայ և ի Նիւրղէ երուսաղէմացւոյ. արդ ժամէ քեզ մեզադիր լինել Յակովբայ, որ զաւետիքն ի ծննդեանն եգ. քանզի մեք զերուսաղէմին ընդունիմք, որպէս և դուք զՅոբնաղին և զԱրտեմոնին։ Բայց ի հակառակն եկեսցուք. ո՞ եցոյց տալ աշխարհի զաւետիքն. քանզի հրեշտակն միոյ կուսի աւետեաց. և Մատթէոս ի բազում տեղիս յիշէ զծնունդն, և աւետեացն փոյթ ոչ առնէ։ Մարիամ ընդ բանսն խռովեցաւ և ունէր ի որտի իւրում, և Յովսէփ կամէր լռելեայն տրձակել զնա՝ և յերազի զաւետիքն ընդունի. և այս ամենայն ի ծածուկ, իսկ ի ծնունդն հրեշտակք և հովիւքն մոգքն և աստղն։

Ի հաւատոյ Թղթոյն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի, զոր գրեաց պատասխանի Թղթոյն Անտիոքայ պատրիարգին։

Դարձեալ ասէք վասն կուսական աւետեացն, թէ մեք ոչ տաւնեմք. այո՛, տաւնեմք՝ և կարի քաջ. որպէս ջծնունդն և զմկրտութիւնն ի միում աւուր տաւնեմք, նոյնպէս և զյարութիւնն և զաւետիսն. և եղև այսպէս. քանզի յապրիլի ը. լրումն տէրունական չարչարանացն, ի ՚ե.՚ն թագուցմրն, և ի ը. ն յարութիւնն։ Եւ արդ՝ այն հրեշտակն, որ յապրիլի ը. ն զաւետիսն ետ կուսին, նոյն դարձեալ զաւետիս յարութեանն ետ կանանցն իւղաբերից։ Վասն որոյ ի փառս Աստուածածնի զյարութեան մեծացուսցեք կատարեմք զևթին աւր խորհրդաբար. «Որ զաւետիս հոգւոյն», և այլն։ Եւ Յակովբ և Նիւրեղ հրամայեցին, ընդ յարութեանն պատուել զաւետիսն և ասել մեծացուսցէ. և ոչ կարգեցին զաւետիսն յընթերցուածն. և զայն որ յետոյ կարգեցաւ յԱրտեմոնէ և ի Յոբնաղէ, ոչ ընդունիմք, և ոչ զայն որ բռնութեամբ եղաւ ի Մարկիանոսէ և ի Յուստիանոսէ։

Նեստոր ասէ.

Ծնունդ ընդէ՞ր ոչ առնես։

կրաւնաւորն ասէ.

Յակոբոս, կիւրեղ, Ստուածաբան և Բարսեղ զերիս ծննունդն մի ասեն և հրամայեցին առնել. ընթերցիր զիմ գրեալն և տես թէ յուրանալ եմ: «որ ծնանելոցն է ի քէն» և «ծնաւ ձեզ այսաւր փրկիչ». և «Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս», և «ի ծնանելն Յիսուսի», և այլ ընթերցուածք և սաղմոսք:

Անանիայի Հայոց վարդապետի:

Եւ արդ տեսցուք զայն որ ասեն յոյնք, թէ յորում աւուր պապանձեցաւ Զաքարիայ ի նմին աւուր յղացաւ կինն նորա. և անտի թուեն. ՃՅ աւր՝ որ բերէ ի ՀԲ.-ն մարտի զաւետիքն. և աստի թուին աւուրս ՀԿ. որ բերէ ի ՀԲ.-ն դեկտեմբերի զծնունդն: Բայց պապանձումն Զաքարիայի ի Ա. Թշրին ամոյ է. զի նա է Է. երորդ ամիս, և նա է աւր քառասներորդի որ աւր մի կոչեցեալ՝ տուրբ լիցի ձեզ. և յայնս էր աւր քառասներորդն, յորում մտանէր քահանայապետն ի սրբութիւն սրբութեանցն մի անգամ ի տարւոջն, և կայր առաջի մեծ տաճն տաղաւարահարաւն և բոլոր Իսրայէլ անդ էր. զիաւրգ գնայր նախ ի տունն առանց կատարման տաճնին. նա և տունն նորա չէր յերուսաղէմ. և վկայ մեզ աւետարանիչն որ ասէ. Իբրև լցան աւուրք պաշտամանն. աւուրք պաշտամանն զտաճն քառասներորդն և զտաճն տաղաւարահարացն ասէ: Ցեսանեմս կատարեցան ասէ աւուրքն, և ապա գնաց ի տուն իւր և յղացաւ կինն նորա: Զի թէ հասարակաց ժողովրդեանն սրբել հրամայեն աւրէնքն յառաջ քան զտաճնն և յամնամուտս՝ ո՞րչափ ևս առաւել նա՝ որ գլուխ էր տաճնին. և այս անհաւատալի է, որ նա ի մէջ երկուց տաճնիցն երթայր ի տուն իւր և մերձենայր ի կին իւր: Եւ արդ պարտ է հաւատալ աստուածայնոց գրոց ի Ա. Թշրին ամոյ զպապանձումն որ է ի ՀԲ. սեպտեմբերի. և ի ՀԴ. մերձաւորութիւնն և յղութիւնն Եղիսաբեթի, որ լինի ի վեց ամսոյն աւուրքն ՃՅ. աւր. որ ցուցանէ Ա.Ղ.-ն նիսան ամսոյ, որ լինի ի Ղ.-ն սպրելի կատսին աւետիքն ըստ հռոմայեցւոցն. և Թուեալ Ա. ամենայ աւուրք յղութեան կուսին՝ կատարի ՏՀՂ. աւրն ի Յա. սրբէթ ամսոյ որ է Ղ.-ն յունուարի. ասա կացցուք հաստատուն: Ղուկաս ասէ. Յիսուս էր ամաց Լ-ից սկըսեալ: Սկսեալ սկիզբն առնելն է երեսնամեայ կատարեալ հասակին և վարդապետութեանն. որ ցուցանէ ԽՂ-ն յունուարի լինել մկրտութեանն յորում և ծնաւ ի կուսէն: Յակոբոս, որ քալդ գիտէր, ի Ղ-ն յունուարի գըրէ զյայտնութիւնն և կարգէ յընթերցուածին: Միաբանի նմա և կիւրեղ երուսաղէմացին. քանզի ասէ կիւրեղ, թէ յայլ քաղաքս հեռևեցան Արեւմտեան և հայք միայն գտան յառաջին կարգին. և ի ՀԲ-ն դեկտեմբերի, Դաւթի և Յակոբայ տաւնեմք:

Ի հաւատոյ Թղթին Ներսէսի վերջնոյ Հայոց կաթուղիկոսի որ առ Մանիլ Թագաւորն Յունաց:

Է և այս աւանդութիւն Հայոց ի նախնեացն սկսեալ՝ զտաւն ծննդեանն և մկրտութեանն ի միում աւուր տաւնել. և այս ոչ է վայրապար: Քանզի ամենայն եկեղեցիք ի սկզբանն նոյնպէս կատարէին. որ և այս գիտելի է ձերում իմաստութեանդ, թէպէտև յեսայ յերկուս բաժանեցին զմի տօնն: Իսկ մեք զտաւանդեալն մեզ ի սրբոյն Գրիգորէ հաստատուն պահեցաք, ըստ Ղուկայ որ ասէ, թէ յետ աւուրցն այնոցիկ գնաց ի տունն իւր Զաքարիա և յղացաւ Եղիսաբեթ. և տեսիլն և պապանձումն յառաջին աւր տաւնի քառասներեանն էր:

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ։

Քամալեանց Ս. Աստուած աղքատի կերպով։ Զրոյց Թ. 1896։

Ժողովրդական աւադութիւններից առած մի պատմութիւն է այս, որ իւր բարոյական իմաստի և հետաքրքրական բովանդակութեան շնորհիւ կարդի ճանաչուիլ, որպես մի օգտակար գիրք մանաւանդ դպրոցական հասակի մանկանց համար։

Աշխատասէր հեղինակի ծանօթ ոճը, որ այնքան պարզ է և բուն ժողովրդական ոգի ունի, այս զրոյցն էլ միանգամայն մատչելի է դարձնում ամէն կարգի ընթերցողի համար։ Եթէ նկատելու մի բան կայ այս գրքուկի մէջ, այդ այն է, որ հեղինակը փոքր ինչ աւելի տեղ է տալիս գաւառական դարձուածներին ու բառերին, քան այդ հարկաւոր է. պատմութիւնն էլ տեղ տեղ ձգձգուած է երևում։

—

Օ. Ի. Շմիդտ. Առաջին վիշտ. Թարգմ. ռուսերէնից. Թ. 1896։

«Առաջին վիշտը» մի համակրելի գաղափարով սրտաշարժ պատմութիւն է, որ նոյնպէս օգտակար ընթերցանելիք կարող է լինել մանուկների համար։ Թարգմանութեան լեզուն ընդհանրապէս վատ չէ, թէպէտ տեղ տեղ անհարթ է և մի քանի նախադասութիւն գրեթէ անհասկանալի, որովհետև թարգմանութիւնը կատարուած է սորկական հետևողութեամբ բնագրին։

—

Տարեցոյց Հայ—Ռումաներէն, պատկերազարդ. 1896. խմբագրեալ ի տ. Ղևոնդ քահանայէ Փափազեան. Գալաց։

—

Բացի օրացոյցների սովորական տեղեկութիւններից՝ այս տարեցոյցը, որ այս երկրորդ տարին է հրատարակուում, պարունակում է հետևեալ փոքրիկ յօդուածները, հայերէն և ռումաներէն լեզուներով. ա) Համառօտ գիտելիք ի վերայ տումարին հայոց. բ) Համառօտ նկարագիր Ս. Էջմիածնի. գ) Խրիմեան Հայրիկ (ոտանաւոր) և դ) Համառօտ վիճակացոյց ռումանահայոց։

Բացի տէրունական խիստ փոքրագիր պատկերներից՝ օրացոյցիս մէջ կան Ռումանիոյ Կարոլոս Թագաւորի, Ս. Էջմիածնի և ազգիս Վեհափառ Հայրապետի պատկերները։

Օրացոյցի գինն է կէս ֆրանկ։

—

ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾՔ ԳՐՔԵՐ.

Н. Я. Марръ.—Сказаніе о католикосѣ Петрѣ и ученомъ іоаннѣ Казернѣ. 1895 С. П.

A. Carriere.—La Légende D'Abgar dans l'histoire D'Arménie de Moïse de Khoren. Paris 1895

ԼՈՒՄԱՑ. — Գրական հանդես. Գիրք առաջին 1896. Յունուար։

ԱԶԳԱՑԻՆ ՄԱՏԵՆԱՆԵՐԱՆ.—Հ. Գ Վ. ԳՈՎՐԻԿԵԱՆ Դրանսիլվանիոյ Հայոց մատենագիրը կամ նկարագիր Կերլա Հայաքաղաքի ի գիր և ի պատկեր. 1896 Վիեննա։

Կ. ՏԻՒՐԵԱՆ.—Սև ծովու ռուսական եզերքը. 1895։

Մ. Եպ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ. — Ընդհանուր Բագու 1895։

ԱԶԳ.

Խմբագրութիւնս հակառակ իւր ցանկութեան այս տարի ևս կարող չեղաւ Արարատն ուղղակի բաժանորդների հասցէին ուղարկել և համարները կրկին պիտի իւր գործակալների միջոցով հասցնէ բաժանորդներին։ Յատկապէս ուած ենք խոստովանել, որ Արարատի բազմաթիւ բաժանորդներից և ոչոք չէ փութացել իւր հասցէն խմբագրութեանս ուղարկելու, իսկ առանց մանրամասն հասցէի անհնար էր մեզ մեր խոստումը կատարել։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԲԱՑՈՒԱԾ Է

ԱՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳՐԻ 1896 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Արարատը կը հրատարակուի նոյն ծրագրով և աւելի մեծ ծաւալով (3 թերթ)։

Տարուայ վերջը բաժանորդները կստանան իրրև նուէր մի հարուստ ժողովածու 8—10 թերթից բաղկացած։ Արարատին բաժանորդ գրուողները դիմում են

Эчміадзинъ. Редакція жур. „АРАРАТ“

Տարեկան գին Ռուսաստան 4 ռ.

— — արտասահման 5 ռ.

"ԱՐԶԱԳԱՆՔ„

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հաժանորդագրուելիւնն ընդունւում է ԽԸՄԲԱԳՐԱՏԱՆԸ (վելեամինովսկի փողոց, № 22, տուն Խանդալաւեանի) եւ «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 Ռ.
ԿԷՍ ՏԱՐՈՒԱՆԸ 6 Ռ.

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն Тифлисъ. Редакція журнала „АРДЗАГАНГЪ". *իսկ արտասահմանից՝* Tiflis. rédaction du journal ARDZAGANG". *Ծայտարարութիւնները ընդունւում են հայերէն եւ օտար լեզուներով։*

ԱՒԱՂԻԿԱՅ 1896 ԹԻՒԱԿԱՆԻՆ

24ՐԴ ՏԱՐԻ

„ՄՇԱԿ"

24ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում. նոյն գիրքով նոյն պրօգրամայով և նոյն ուղղութեամբ, Մենք ստանում ենք սեփական հեռագիրներ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը Թէ Ռուսաստանում և Թէ արտասահմանում 10 րուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր., մի ամսվանը՝ 1 րուբլի։

Ամերիկայի Բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլար.

Եւրոպայի Բաժանորդները՝ տարեկան 30 ֆրանկ.

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԱԳՐԱՏԱՆԸ (Բաղարնայա և Բաթօնսկայա փողոցների անկիւն), Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարները ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցեով. Тифлисъ. Редакція газеты „МШАКЪ". *իսկ արտասահմանից՝* Tiflis Rédaction du journal „MSCHAK".

Ծայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. բառին վճարվում է 2 կոպեկ. 3—3

„ՆՈՐ-ԴԱՐ"

Քաղաքական գրականական ամենօրեայ թերթը 1896-ին կը հրատարակուի Թիֆլիսում նոյն գիրքով և ծրագրով ամեն օր, բացի կիրակի և տօնական հետևող օրերից։

Տարուայ ընթացքում «Նոր-Դարը»-ը լոյս կը տեսնի առնուազն 220—255 համար։

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի։ Թիֆլիսից դուրս՝ ամիսը 1 ր. 50 կ., հատուկ դուրսը՝ 7 կ., Թիֆլիսում 5 կոպ.

ԵՒՐՈՊԱՑԻ և այլ հեռաւոր երկրների բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ։

ԱՄԵՐԻԿԱՑԻ բաժանորդները վճարում են տարեկան՝ 8 դոլար։

ԹԻՖԼԻՍՈՒՄ բաժանորդ են գրւում միմիայն «ՆՈՐ-ԴԱՐ»-ի խմբագրատանը։ Խմբագրատունը գրանւում է Պուշկինսկայա փողոցում, Սկուէրի դիմաց։

Օտար քաղաքներից բաժանորդ գրուողները դիմում են խմբագրութեանը այս հասցէով Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты „НОР-ДАРЪ" կամ Tiflis. Rédaction du journal „NOR-DAR".

Գ. ՏԱՐԻ.

„ԹԱՏՐՈՆ"

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Տարեկան բաժանորդագինն է Թիֆլիսում 3 ռ. օտարաքաղաքացիների համար 3 ռ. 30 կ. Արտասահման 10 ֆրանկ։

Թաղրոնի լոյս տեսած համարները (համար 1. 2. 3. 4.) վաճառուում են «Կենդրոնական գրավաճառանոցում»։ Իւրաքանչիւր համարն արժէ 2 ռուբլի։

«ԹԱՏՐՈՆ»-ի իւրաքանչիւր համարը քաղկացած կլինի 40—42 տպագրական թերթից, մեծաղիր երեսներով, տպագրած երկու սիւնակի վրայ։

Առաջին գիրքը լոյս կը տեսնէ Ապրիլին, իսկ II-ը Սեպտեմբերին։

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն ТИФЛИСЪ, АЛЕКАСНДРУ ТАРХАНЬЯНЪ կամ Tiflis Alexendre Tarkhanian.

Հրատարակիչ՝ ԱՂԷՔՍ. ԹԱՐԽԱՆԵԱՆ

Սոյն 1896 թուի յունուարից հրատարակուում է Տփխիսում

ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

«ԼՈՒՄԱՑԻ» բաժանորդները ձրի ստանում են մի օրինակ պատի օրացոյց (օտար տեղերից ուղարկում են ճան. ծախք 20 կ.)

«ԼՈՒՄԱՆ» Հանդիսի բաժանորդագինն է 3 ռ. Իւրաքանչիւր գիրքն առանձին արժէ 2 ռուբլի.

Հասցէն՝ Тифлисъ, свящ. Іоану Аганьянцу